ՀՐԵՂԵՆ ՁԻՆ





Հրեղեն ձին

Պատկեր և վերապատմություն
Աներգիլ Խաչատրյանցի

«ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐՈՂ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ — 1981

ԳՄԴ 82.3Հ—6
Հ 948

Գիտ. խմբագիր՝ ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խմբագիր՝ ԴԱՎԻԹ ՀՈՎՀԱՆՆԵՍ



Հ 4803010200 (194)
705 (01) 81 ...81«Տ»

©«Սովետական գրող» հրատարակչություն, մշակելու, վերապատմելու, առաջաբանի և ձևավորման համար, 1981



ԱՌԱՋԱԲԱՆ

Երբ 1978 թ. «Պիոներ-կանչի» համարներից մեկում տպագրվեց հանրապետության դպրոցականներին ուղղված կոչ՝ իրենց մեծերից գրառելու և խմբագրություն ուղարկելու բանահյուսական նյութեր, դրանցից լավագույնները թերթում տպագրելու խոստումով, իսկն ասած, իմ և գործընկերներիս մեջ փոքր-ինչ անվստահություն առաջացավ նախաձեռնության նպատակի և հաջող իրագործման նկատմամբ: Պատճառն, իհարկե, անհիմն չէր. հրապարակի վրա կային վերջին տասնամյակներում հրատարակված բազմաթիվ բանահյուսական ժողովածուներ, այդ թվում՝ առած-ասացվածքների, ավանդությունների, հանելուկների, մանկական երգերի, հեքիաթների համահավաք բնագրերը, որոնցից կարող էին մեծ չափով օգտվել մանուկներն ու պատանիները: Բայց առաջին արձագանքները և, մանավանդ, թերթում տպագրված բանահյուսական անդրանիկ նմուշները փարատեցին այդ անվստահությունը: Ավելին. Հայաստանի և հարևան հանրապետությունների հայաշատ շրջանների հայկական դպրոցների աշակերտության մեջ ծայր առավ բանահավաքչական մի իսկական շարժում: Իմ առջև են, ահա, մի շարք թղթապանակներ՝ լցված մանկական վարժ ու անվարժ ձեռագրերով գրառված նյութերով: Դրանք ժողովրդական տարբեր բնույթի երգեր են, հանելուկներ, առած-ասացվածքներ, հեքիաթներ, առակներ, ավանդական և իրապատում զրույցներ, անեծքներ և օրհնանքներ՝ գրված հայոց լեզվի տարբեր բարբառներով ու խոսվածքներով, գրագիտության տարբեր մակարդակով: Գրողները մեկուկես հազարից ավելի դպրոցականներ են՝ 2 — 10-րդ դասարանների աշակերտներ, որոնք սովորում ու բնակվում են Հայաստանի տարբեր քաղաքներում ու գյուղերում, Վրաստանի և Ադրբեջանի հայաբնակ շրջաններում: Երևույթն ինքնին խիստ ուշագրավ է և բարձր գնահատման արժանի: Հայ մանուկների ու պատանիների մի ամբողջ սերունդ լծվել է մի ազնիվ, ինքնատիպ ու ինքնուրույն աշխատանքի. իրեն շրջապատող տարեց մարդկանց, հարազատների ու բարեկամների հիշողության ծալքերից դուրս կորզել նրանց հոգու երեկվա մրմունջները, իմաստուն զրույցներն ու իմաստալից խոսքերը, զվարճալի պատումներն ու հանելուկները, մի խոսքով՝ ժողովրդական բառ ու բանի գրեթե այն բոլոր նմուշները, որոնք տակավին շարունակում են ապրել: Փույթ չէ, թե պատանեկան այդ գրառումներից շատերը հանրահայտ բանահյուսական նմուշներ են, քանիցս տպագրված, փույթ չէ, թե դրանք գրառված են անվարժ ձեռագրերով ու սխալաշատ, փույթ չէ անգամ, որ դպրոցականներից ոմանք, ընտրելով դյուրին ուղին, մանկան միամտությամբ արտագրություններ են կատարել իրենց տանը եղած բանահյուսական տպագիր ժողովածուներից կամ ուղարկել սեփական-անհատական ստեղծագործություններ: Կարևորն այն է, որ դպրոցական պատանի սերնդի

մեջ բուռն սեր ու հետաքրքրություն էր արթնացել հայրենի բանավոր ավանդության նկատմամբ, իր հոր և մոր, տատիկի ու պապիկի, հորաքրոջ կամ մորաքրոջ, հորեղբոր կամ քեռու իմացածի նկատմամբ: Դա հայրենի ավանդների հանդեպ մատաղ սերնդի հարգալից վերաբերմունքի արթնացման և մշակման, այդ սերնդի հոգում ավանդների գնահատման և արժեքավորման, իր ուժերը այդ ավանդների փրկության մեջ ներդնելու մի գեղեցիկ երևույթ է, որ գալիս է մեծապես նպաստելու պատանության բարոյական ու գործնական դաստիարակությանը: Իսկ հայրենի ավանդների գնահատումը ազգային ինքնագիտակցություն է, միաժամանակ անցյալի և ներկայի, հետևաբար և՝ ապագայի հոգևոր-մշակութային կապի կենսունակացում և արժեքավորում: Բայց երևույթի արժեքը սոսկ այդ կողմով չի սպառվում:

Աշակերտների գրառած այդ բազմաթիվ ու բազմապիսի նյութերի մեջ կան շատ այնպիսիք, որոնց մի մասը կամ բովանդակությամբ նորություն է և առաջին անգամ է գրառվում, կամ էլ՝ հայտնի ստեղծագործությունների ինքնատիպ տարբերակներ են, ասված ու գրառված ժողովրդական-բարբառային կենդանի ու պատկերավոր ոճով: Դրանք լիարժեք բանահյուսական ստեղծագործություններ են, բնագիտության համար խիստ արժեքավոր: Հայ բանահյուսության գրառված ժառանգությունը, մեր պատանի դպրոցականների կոլեկտիվ ջանքերի շնորհիվ, համալրվում է բանահյուսական տարբեր ժանրերի հազարավոր նմուշների նոր գրառումներով, հանգամանք, որ ինքնին խոսուն վկայություն է նոր սերնդի՝ հայ բանագիտությանը բերած գնահատելի նպաստի մասին:

Այդ գրառումները տրամադրվել են Հայաստանի գիտությունների ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվին, որտեղ դրանք ենթարկվել են արխիվային վերամշակման, կազմել մեկ առանձին ամբողջական ֆոնդ, որը այսուհետև մասնագետ հետազոտողները կդնեն գիտական շրջանառության մեջ: Այդ ֆոնդի մեծագույն առանձնահատկությունն այն է, որ դրանում առկա բանահյուսական բազմազան ու բազմաթիվ նյութերը տարբեր վայրերից համաժամանակյա գրառումներ են, կատարված բացառապես մանուկների ու պատանիների կողմից: Իսկ բանագիտության համար գրառողների տարիքային հատկանիշները, գրառման վայրն ու ժամանակը կարևոր նշանակություն ունեն բանահյուսական երկի որոշակի առանձնահատկություններ պարզաբանելու տեսակետից: Բայց ամենաէականն այն է, որ հայ բանահյուսության գրառված ժառանգության մեջ մանկապատանեկան գրառումներ մինչև այժմ իսպառ չկային, իսկ այդ ֆոնդով հայ բանահավաքչությունը միանգամից համալրվում է մի նշանակալից նորությամբ, գրառողների տարիքային մի նոր ցուցանիշով՝ մանկապատանեկան հասակով, որն ունի և՛ պատմական, և՛ գիտական ուրույն նշանակություն:

Նշածս այս բոլոր հանգամանքների ընդհանուր գիտակցությամբ է առաջնորդվել պատանեկան բանահավաքչության գործի նախաձեռնող Սերգեյ Վարդանյանը: Վերջինս ինքնամոռաց նվիրումով, բայց և գործի գիտական, հասարակական ու դաստիարակչական նշանակության խոր գիտակցությամբ ոչ միայն կազմակերպել է ու արդյունավորել այդ ինքնատիպ շարժումը, այլև այս գրքով այն մղել մինչև վերջ, արխիվային-ձեռագրային վիճակից կամ «Պիոներ-կանչի» սահմանափակ էջերից բանահյուսական նյութերը դուրս բերելով գրական ասպարեզ, դարձնելով գիրք, ընթերցող լայն խավերի սեփականություն:

Սերգեյ Վարդանյանը այս ժողովածուն կազմելիս հանդես է բերել մասնագիտական հմտություն և պատշաճ բանիմացություն: Նա մանուկների ու պատանիների կատարած բազմաբեղուն ու մեծաքանակ բանահյուսական գրառումներից գիտական խստապահանջու-

թյամբ ու գրական ճաշակով ընտրել, ըստ ժանրերի ու տեսակների խնամքով դասդասել, ծանոթագրել է բանահյուսական իսկատիպ նմուշները, դարձրել մի ամփոփ ու ամբողջական ժողովածու, որն անկախ իր հատընտիր բնույթից, ընդհանուր ճաշակ ու գաղափար է տալիս պատանի բանահավաքների գործի արդյունքների հիմնական արժեքի մասին:

Ժողովածուն խորագրվել է գրքի սկզբում զետեղված հեքիաթի ավանդական, բայց խոսուն վերնագրով՝ «Հրեղեն ձին», որը ընթերցողի միտքն անմիջապես մղում է բանահյուսության ռոմանտիկական, երփներանգ աշխարհը: Ճիշտ է, գրքում հրաշապատում հեքիաթներ ու զրույցներ քիչ կան, բայց վերնագիրն ընդհանրապես հուշում է ժողովածուի բանահյուսական բնույթը:

Գիրքն ընդգրկում է հիսունհինգ ժողովրդական հեքիաթներ, առակներ, ավանդական և իրապատում զրույցներ, շուրջ 250 տարբեր երգեր ու խաղիկներ, 360-ից ավելի հանելուկներ, շուրջ 320 առած-ասացվածքներ, որոնք մեծ մասամբ հանրահայտ բանահյուսական ստեղծագործությունների տեղական տարբերակներ են, իրենց բարբառային համ ու հոտով, իսկ մի մասը՝ բանահյուսական նորահայտ նմուշներ են, երբեմն՝ տեղական ազգագրական միջավայրին միայն բնորոշ և այդ միջավայրից տակավին դուրս չեկած ու չտարածված:

Ուշագրավ են այս առումով բանավոր արձակի այն նմուշները («Աբլբուհարցի Ալոն», «Չուխա, խաց կեր», «Ծուռ Թումոն», «Անգախ աքլորը», «Լենին», «Նավթի լամփ») , որոնք լինելով տեղական իրապատում զրույցներ, կապված որոշակի անձանց հետ՝ կամ միացել են ավանդական սյուժեներին, գաղափարականացվել, ձեռք բերել բանահյուսական նկարագիր, կամ մնացել տեղական զրույցների սահմաններում, բայց օժտված ժողովրդական պատումի բոլոր հատկանիշներով: Իսկ երգերի մեջ կան այնպիսիները («Ախ, իմ Մուրադ», «Երգ սիրահար տղայի», «Օրորոցային», «Զուգերգ-պարերգ») , որոնց վրա թեպետ նկատվում է բանասաց հորինողի անհատականության դրոշմը, բայց դրանք, հորինված լինելով բուն ժողովրդական ոգով, ավանդական երգարվեստի արտահայտչամիջոցներով ու բանաձևերով, դարձել են տեղական ինքնատիպ երգեր և այդ տեսակետից էլ՝ուշադրության արժանի:

Սերգեյ Վարդանյանը նյութի ընտրությունը կատարելիս ելել է նրա և՛ գաղափարից, և՛ գեղարվեստական հատկանիշներից: Այդ է պատճառը, որ գրքում զետեղված բանավոր արձակի նմուշների ճնշող մեծամասնությունը հատկանշվում է բարոյախրատական ու բարոյակրթական խոր իմաստով: Դրանք հեքիաթներ, առակներ կամ զրույցներ են քաջության, արիության, արդարության, ազնվության, չարի ու չարիքի դեմ մաքառման մասին, հիմարության, ծուլության, ագահության դատապարտման, աշխատանքի ու աշխատասիրության, խելքի ու սրամտության և բարոյական ներքին այլ արժանիքների խրախուսման մասին: Միաժամանակ դրանք գեղեցիկ պատումներ են, մարդկային անվնաս թուլությունների ու թերությունների նկատմամբ ժողովրդական վարակիչ ծիծաղով ու առողջ հումորով հագեցած:

Գրեթե միևնույն գաղափարներով են հատկանշվում գրքում զետեղված, երիտասարդական անմեղ ու անմիջական սիրային զեղումներ արտահայտող փոքրիկ երգերը՝ խաղիկները, մարդկային կյանքի բոլոր բնագավառները շոշափող, ժողովրդի դարավոր կենսափորձից բխած, բազում սերունդների կողմից հավաստված ու հաստատված իմաստուն պատգամները՝ առած-ասացվածքները, մարդկային, հատկապես՝ մանկական միտքն ու սրամտությունը մարզող ու փորձող պատկերավոր հանելուկները:

«Հրեղեն ձին» իր ընդգրկած նյութի տեսակներով, քանակով ու որակով բանահյուսական մի ամփոփ ու ամբողջական ժողովածու է, ժողովրդական ընթերցանության մի իսկական

գիրք, որ հավասարապես սիրելի պիտի լինի թե՛ մանուկների ու պատանիների, թե՛ մեծահասակների համար: Այն միաժամանակ բանահյուսական նյութերի մի տպագիր սկզբնաղբյուր է, որից կարող են անվերապահ օգտվել մեր ժողովրդագետները: Այստեղ շնորհակալական խոսք պետք է ասել նաև «Սովետական գրող» հրատարակչության հասցեին, որը տպագրելով այս գիրքը, պատշաճն է հատուցել մատաղ բանահավաք սերնդի թափած ազնիվ ու անձնադիր ջանքերին, և «Հրեղեն ձին» այդ իմաստով դառնում է այդ սերնդի աշխատանքի գնահատման մի մնայուն հուշարձան:

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր





ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ժողովրդական բանահյուսության տարբեր տեսակների գրառումն ու հրատարակությունը հայ իրականության մեջ ունի մեկ հարյուրամյակից ավելի պատմություն. բայց բանահյուսական ստեղծագործությունների նկատմամբ մեր օրերում հետաքրքրությունն ավելի է մեծացել, դարձել է գիտական հաստատությունների հետազոտության առարկա: Այսօր գիտական արշավախմբերն ու առանձին անհատներ եռանդով հավաքում են բանահյուսական նյութեր, կորստից փրկում ժողովրդի հոգևոր մշակույթի բազմաթիվ արժեքավոր նմուշներ:

Եվ ուրախալի է, որ այս հայրենանվեր աշխատանքում իրենց համեստ մասնակցությունն են բերում նաև դպրոցականները: Մեր նախաձեռնությամբ 1978 թվականին «Պիոներ-կանչի» մայիսյան համարներից մեկում տպագրվեց հանրապետության դպրոցականներին ուղղված կոչ՝ գրառելու, կորստից փրկելու ժողովրդի ստեղծած բանահյուսական արժեքները: Սա նաև այլ նպատակ էր հետապնդում՝ մատաղ սերնդին ծանոթացնել, նրա շրջանում տարածել հարազատ ժողովրդի բանահյուսությունը և սեր, հոգատար վերաբերմունք դաստիարակել ժողովրդական բառ ու բանի նկատմամբ:

Շուտով ստացվեցին առաջին գրառումները՝ հեքիաթներ, զրույցներ, ավանդություններ, երգեր ու խաղիկներ, հանելուկներ, առածներ ու ասացվածքներ: Շատ չանցած, գիտակցելով գործի կարևորությունը, ավելի ու ավելի շատ դպրոցականներ անցան գործի: Հարյուրավոր նամակներ ստացվեցին ոչ միայն Հայաստանից, այլև Ադրբեջանի հայաշատ վայրերից, Լեռնային Ղարաբաղից ու Նախիջևանից, Վրաստանի հայկական դպրոցներից ու Աբխազիայից, ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամասից: Շուտով մեր թղթակիցների թիվն անցավ հազար հինգ հարյուրից: Նրանց գործնական օգնություն ցույց տվեցին ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Արամ Ղանալանյանի, բանասիրական գիտությունների դոկտոր Սարգիս Հարությունյանի, բանասիրության թեկնածուներ Նելլի Հակոբյանի ու Մառլենա Մուրադյանի՝ բանահյուսության ժանրերին, գրառման եղանակներին և հայ բարբառներին նվիրված հոդվածները, որոնք տպագրվեցին «Պիոներ-կանչում»: Պատանի բանահավաքներին իրենց խորհուրդներով օգնեցին ազգագրական երգերի անզուգական կատարող Հայրիկ Մուրադյանն ու արձակագիր Սերո Խանզադյանը:

Եվ այսպես, կուտակվել էր բավական շատ նյութ, որի մի մասը, շուրջ երկու տարի, պարբերաբար, ամիսը մեկ անգամ տպագրվում էր թերթի «Պատանի բանահավաք» էջում: Այս աշխատանքի ընթացքում էլ հղացավ հավաքված նյութը խիստ ընտրությամբ առանձին գրքով հրատարակելու միտքը: Որոշվեց նաև ամբողջ նյութը հանձնել ՀՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտին՝ ի տնօրինություն:

Այն պարագան, որ երեխաների միջոցով բանահյուսական նյութեր հավաքելու և առանձին գրքով հրատարակելու որևէ այլ փորձ մեզ անհայտ էր, զգալիորեն դժվարացնում էր մեր աշխատանքը: Նախ՝ տարբերակեցինք հարյուրավոր նամակներում սփռված խառը նյութերը՝ ըստ ժանրերի, ապա համեմատեցինք արդեն հայտնի և տպագրված տարբերակների հետ:

Գրքում զետեղված հեքիաթները, զրույցները, ավանդությունները անտիպ նյութեր են կամ նորահայտ, որոշակի հետաքրքրություն ներկայացնող տարբերակներ, որոնք խմբավորել ենք ըստ տեսակների և թեմատիկ նմանության: Խաղիկները, հանելուկները և առած-ասացվածքները դասդասելիս առաջնությունը տվել ենք անտիպներին, ապա նորահայտ տարբերակներին, բայց որոշ նկատառումներով ընդգրկել ենք նաև երեխաների հավաքած այն նմուշները, որոնք ժամանակին հրատարակվել են այս կամ այն գիտական ժողովածուում: Խաղիկները խմբավորել ենք ըստ հանգերի, հանելուկները՝ ըստ թեմաների, իսկ առածներն ու ասացվածքները՝ այբբենական կարգով: Բարբառային բառերի բացատրության համար տեքստերի վերջում զետեղել ենք համապատասխան բառարան:

Ծանոթագրություններում տեղեկություններ ենք տվել այս կամ այն հեքիաթի, երգի ասացողի և գրառողի մասին, որքանով որ դրանք իրենց նամակներում հաղորդել են պատանի բանահավաքները: Նշել ենք նաև այն գրառողների անունները, որոնք մեզ են ուղարկել 20-ից ավելի խաղիկներ: Հանելուկներն ու առած-ասացվածքները չենք ծանոթագրել, քանի որ դրանցից գրառել են «Պատանի բանահավաք» շարժման գրեթե բոլոր մասնակիցները:

Քանի որ այս գիրքը նախատեսված է պատանի ընթերցողի համար, ուստի խուսափել ենք գիտական տառադարձությունից: Պահպանելով բարբառը, որով գրառվել է նյութը, պարզեցրել ենք ուղղագրությունը: Երբեմն օտար և անհասկանալի կամ խիստ սահմանափակ գործածվող բառերը փոխարինել ենք տվյալ բարբառի համապատասխան հայերեն հոմանիշներով: Երբեմն դիմել ենք նաև գրական հայերենին՝ ջանալով չկորցնել տվյալ բարբառի համն ու հոտը: Նկատի ունենալով, որ Համշենի բարբառը բավական դժվարամատչելի է, այդ բարբառով գրառված նյութերը ամբողջովին փոխադրել ենք գրական հայերենի, իսկ խաղիկների, հանելուկների, առածների ու ասացվածքների դեպքում՝ զետեղել ենք նաև բարբառային բնագիրը:

Ասացինք, որ մեր խնդիրն է եղել, նախ՝ երեխաների միջոցով հավաքել և կորստից փրկել բանահյուսական որոշակի նյութեր, ապա՝ նրանց շրջանում տարածել ժողովրդական բանահյուսությունը, սեր և հարգանք արթնացնել վերջինիս նկատմամբ: Կարծում ենք, որ այս ժողովածուն կնպաստի դրան: Իսկ եթե այս բանահյուսական նյութերի հավաքմանը մասնակցած շուրջ հազար հինգ հարյուր դպրոցականներից ոմանք ապագայում ևս շարունակեն զբաղվել բանահավաքչությամբ, ապա մեզ լիովին վարձահատույց կզգանք:

ՍԵՐԳԵՅ ՎԱՐԴԱՆՅԱՆ



Հեքիաթներ,
առակներ,
վեպեր,
պատմվածքներ

ՀՐԵՂԵՆ ՁԻՆ

Ի մարդ ու կնիկ են ըլում. դրանք ըրեխա չեն ունենում: Մի օր էդ մարդը գնացած ա ըլում չութ վարող: Մի փայ հըվաքող ա գալիս դրանց գեղը, դրանց տանը ղոնաղ ընգնում, ասում ա.

— Քիրա ջան, թող սրանք ըստի կենան, ես մի էրկու տուն էլ գնամ:

Էդ կնիկը փայ հըվաքողին մի քանի խան ալիր ա տալիս:

— Ա՛յ կնիկ, խալխը գդալով ու աբռով ա տալիս, դու իրեք խա՞ն:

— Հա՛, բան չկա, ես ու մարդս ենք, ըրեխա չունինք, ո՞վ տի ուտիլ:

Էդ փայ հըվաքողը դրան իրեք հատ խնձոր ա տալիս, ասում ա.

— Դրեք թերեքումը, իրեք տարուց եդը մինը դառնալ տի ոսկեքանքուլ տղա, մինը՝ իմաստուն ձի, մինը՝ էլի իմաստուն շուն:

Դուզ իրեք տարուց եդը ձիուն, տղին ու թազուն վեր են բերում: Թե խալխի տղերքը օրերով են վենձանում, էս տղեն ժամով ա վենձանում: Էս տղեն շատ հնգերտինք ա ունենում: Մի օր էս տղեն գալիս ա տուն: Մինչև տուն մտնելը վազում ա ձիու կուշտը: Տեսնում ա՝ ձիու առաջի էրկու ոտը գեդնումը թաղված ա, ձին էլ լաց ա ըլում:

— Վա՛յ, ձի ջան, էդ ինչ օրն ես ընգել:

— Լաց մի՛ ըլիլ, տեր իմ: Անգաճ արա, ինչ եմ ասում: Էս երգրի թագավորը իմացել ա իմ հունարի մասին, մարդիկ ա ղրկել, որ գան քեզ սպանեն, ինձ էլ տանեն իրա ախոռը: Գնա քու հնգորտանցի մի քանի հատ հաց ճարե բի, փախնենք ուրիշ երգիր:

Տղեն գնում ա, ճարում:

— Դե՛ պլետս վի կալ, ինչքան ուժ ունիս, էնքան էլ ավելացրու ու փորիս տակին հենց վրա բի, որ մի ձող կաշի բըցրանա: Եթե տաս ոչ, — ասում ա, — հա՛մ ես եմ կորած, հա՛մ դու:

Տղեն ձիուն նստում ա, փորի տակին հենց տալիս ա, որ մի ձող կաշի ա ծուլ ըլում: Ձին դուս ա գալիս, թռչում երգինքը: Մխելի գնում ա, վերջը մի տեղ վեր ա գալիս: Մի չոբան ոչխար ա արածացնելիս ըլում: Ասում ա.

— Ա՛յ չոբան, արի՛ ըստի:

Չոբանը զըրմանում ա: Էս ո՞րդիան դուս էկավ էս մարդը: Վախում ա, թե մոդիկանա: Ինչքան կանչում ա, գնում չի:

— Ա՛յ մարդ, խու քեզ ուտել չտիմ, արի՛, էլի:

Դողդողալով գալիս ա:

— Շորերդ հանե՛:

Չոբանը լաց ա ըլում.

— Խի՞ ես ինձ տանջում, խեղճ մարդ եմ:

— Ա՛յ մարդ, քեզ ո՞վ ա տանջում, շորերդ հանե՛:

Վերջը հանում ա: Էս տղեն իրա թազա շորերը չոբանին ա տալիս, նրա գրչերը հագնում:

— Չոբա՛ն, ինձ գառան մորթի տուր:

Գառան մորթի ա տալիս: Գլխին ա դնում, իրա անումը դնում ա Քաչալ, էլի երգինք ա թռչում:

— Տե՛ր, քեզ մեղա, ո՞րդիան էկավ, դվո՞րը կորավ:

Քաչալը գնում ա մի թագավորի երգիր: Ձին ասում ա.

— Դու գնա թագավորի պալատումը ծառայե, երբ պետք գամ, մազիցս վի կալ, կվառես, կգամ:

Տղեն մազ ա պոկում ձիուցը, ձին կորչում ա:

Քաչալը գնում ա պալատը:

— Թագավորն ապրած կենա, ծառա չե՞ս վեր ունիլ: Ի՛նչ ասես, կանեմ:

— Մեր բաղմանչին պառավել ա, կարա՞ս նրա տեղը աշխատես:

— Կարամ, թագավորն ապրած կենա:

Տղեն սկսում ա բաղը բեջարել: Մի օր թագավորի իրեք աղջկերքը գնում են բաղը ման գալու: Քաչալի փափախը թեքված ա ըլում: Էդ աղջկերանցի պուճուրը տենում ա, որ Քաչալի ոսկի մազերը պսպղում են արևի տակին: Ուզում չի քվերտինքը տենան, ճչում ա.

— Վա՛յ, փորս, վա՛յ, գլուխս, վա՛յ, ձեռս, վա՛յ, ոտս:

Քվերտինքը զոռով տուն են տանում: Մթամ հիվանդ էր, մի էրկու օրից եդը սըղանում ա:

Թագավորը իրա էրկու աղջկանը մարդի ա տալիս, պուճուրը գնում չի: Հերը ինչքան համոզացնում ա, ըլում չի: Հերն ասում ա.



— Մի վենձ կարմունջ սարքեցեք:

Սարքում են: Աղջկանը վերևը կանգնացնում ա, իրեք հատ խնձոր տալիս: Իրա երգրումը ինչքան ազափ տղա կա, բերում ա անցկացնում: Աղջկանն ասում ա.

— Որին հըվանես, խնձորով տուր:

Գալիս են անցկենում, մնին էլա տալիս չի:

— Ո՞ւմ ենք մոռացել:

Մինն ասում ա.

— Քաչալին մտահան ենք արել:

Քաչալին բերում են, ուզում են անցկացնեն թե չէ, իրեք խնձորն էլ գլխովն ա տալիս: Թագավորը նեղանում ա: Դրանց մի փուլ էկած տուն ա տալիս, որ միջին ապրին: Փեսեքն էլ Քաչալին մարդի տեղ չեն դնում: Օրերից մի օր էս թագավորը գեշ հիվանդանում ա, ասում ա.

— Ինձ մենակ անմահական խնձորն ու ջեյրանի կաթը կբուժե:

Էրկու փեսեն ճամփա են ընգնում, գնում մի ոչխար են կթում, հանդի խնձոր քաղում, եդ են դառնում: Թագավորը նեղանում ա, որ իրան խաբում են: Մին էլ ա ղրգում: Քաչալը կնգաննն ասում ա.

— Գնա՛ հորդ ասա, թողու ես էլ գնամ:

Աղջիկը գնում ա, հորն ասում ա.

— Ա՛յ հեր, ես էլ մարդ եմ, ես էլ նրան եմ սիրում. ինչ անենք, որ մեր ծառան ա, էլի մարդ ա: Թող ինքն էլ գնա:

— Որ ուզում ա, թող գնա:

Քաչալը մազը վառում ա, ձին գալիս ա:

— Ձի ջան, անմահական խնձոր, ջեյրանի կաթն ա պետք, կարմնք ճարենք:

— Երբ սիրտդ ուզե, տեր իմ:

Տղեն նստում ա ձիուն, ձին երգինք ա ծուլ ըլում: Գնում ա չոբանի կուշտը:

— Բարի օր, չոբան ջան, ինձ ճընաչում ես:

— Հա՛, բա՛ ինչ եմ անում:

— Ըստի մարդ տի գալ, էրկու ջահել տղա: Որ գան, կասեն՝ ջեյրանի կաթն ենք ուզում, անմահական խնձոր, կասես՝ մի մարդ ա էկել, պետք ա իրավունք վիր ունիմ: Դու կրակ արա, շամփուրնին վրին դիր, պողանան:

Չոբանը կրակ ա վառում, թագավորի էրկու փեսենին գալիս են:

— Չոբան ախպեր, սհենց-սհենց բանի հըմար ենք էկել:

— Ըստի մի մարդ կա, նրան հարցնեմ, հետո թե թողու՝ կտամ:

Քաչալը գալիս ա:

— Պետք ա էս շամփուրներով քամակներուդ դաղեմ, հետո կտամ:

Համաձայնվում են: Քաչալը շամփուրնին կրակի վրիցը վիր ա ունում, քամակներուն դաղում, իծի կաթը տալիս, վայրի խնձոր ու ղրգում: Ինքը ձիուն նստում ա ու թռչում:

Ձին մի տեղ վեր ա գալիս, ասում ա.

— Գնա՛, ծառից քաղե:

Տղեն քաղում ա:

— Քիչ վախտից եդը ջեյրանը գալ տի: Որ ջուր խմելիս ըլի, դու դուս կգաս: Հենց ուզենա քեզ ոտքե, կասես՝ տերդ եմ: Կխելոքանա, կկթես:

Ջեյրանը ճաշվա շոգ վախտը գալիս ա, ջրի վրա ընգնում, խմում: Տղեն դուս ա գալիս: Ջեյրանն ուզում ա ոտքե, տղեն ասում ա.

— Տերդ եմ:

Ասում ա ու սկսում կթելը: Կթում ա, պրծնում, ձիուն նստում, թռչում: Գալիս ա տենում՝ նրանք նոր են ձիուցը վեր գալիս: Էն էլ վայ էն նստելուն, որ նստել են: Նրանք գնում են թագավորի պալատը: Թագավորը տենում ա, որ էլի իրա ուզածը չի: Քաչալը կնգաննն ասում ա.

— Գնա հորդ ասա՝ Քաչալը բերել ա, գա՛:

Կնիկը գնում ա:

— Հա՛, թող գա, նրա հունարն էլ տենանք:

Քաչալը գալիս ա շորերը փոխած: Դռան շեմքին փափախը հանում ա, մազերը պսպղալով տուն մտնում: Թագավորը խնձորն ուտում ա, կաթը խմում, ասում ա.



— Հա՛, էս ա:
Բռնում ա պաչպչոտում, ասում ա.
— Սրանից եդը իմ ազիզ փեսեն դու ես:
Թազա աղջկանն ու տղին յոթ օր, յոթ քշեր հըրսանիք ա անում:
Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնուք ձեր մուրազին:

———————

Չութ — *արոր*
Փայ հըվաքող — *մուրացկան*
Խան — *ալյուրի չափ, աման*
Աբռով — *բռով*
Թերեք — *թարեք, դարակ*
Թազի — *որսի շուն, բարակ*
Պլետ — *մտրակ*
Հունար — *շնորհք*
Գուրչ — *քուրջ, ցնցոտի*
Դվոր — *որտեղ, ուր*
Բաղմանչի — *այգեպան*
Բեջարել — *մշակել*
Ծուլ ըլել — *բարձրանալ, թռչել, պոկվել*
Մխելի — *մի քիչ*
Քվերտինք — *քույրեր*
Վենձ — *մեծ*
Մտահան անել — *մոռանալ*
Ջեյրան — *եղնիկ*
Պողանալ — *տաքությունից կարմրել, կրակ դառնալ*
Սհենց — *սհենց — այսպիսի*



ԼՈՒՅՍ ՏՎՈՂ ՁՈՒՆ

Մի պառավ կնիկ ա էղել, դա ունեցել ա մի տղա. քյասիբ կնիկ ա էղել: Էտ տղեն էլ ասել ա. «Ո՞նց անեմ, որ մորս պահեմ»: Քյընացել ա քոլը, փետ ա պերել շըլակով, կեսը ծախել ա, հացի ա տվել, կեսն էլ իրանց համա էրել: Մի ժամանակ իտենց ապրած են: Մի անգամ էլ քյընացել ա փետ ա արել, քնել ա, աչքը պաց ա արել, տեհել ա՝ մութ քշեր ա: Էտ տղեն որ զարթնել ա, ճամփեն կորցրել ա: Տեհել ա՝ հ[illegible]ռու մի տեղ կրակ կա: Դեպա էտ կրակը քյընացել ա, տեհել ա՝ էտ կրակը ծառի վրա ա վառվըմ: Էտ տղեն մի կերպ պարցրանըմ ա էտ ծառի կլուխը: Տենըմ ա՝ մի ծու ա, իրա շուրջն էլ լուս ա տալի: Էտ ծուն վեր ա պերըմ, ծեռին պռնած պերըմ ա, մորն ասըմ ա.

— Նանի՛, ես մի ծու եմ քթել, լուս ա տալի:

Մերը ուրախանըմ ա, Էտ տղեն ասըմ ա.

— Էս ծուն կտանեմ, կտամ թաքավորին, թաքավորն էլ մեզ լավ մտիկ կանի, մենք էլ լավ կապրենք:

Մերն ասըմ ա.

— Չտանե՛ս, տանես՝ հետո լավ չի ըլի:

Ասըմ ա.

— Չէ՛, կտանեմ:

Էտ տղեն ծուն տանըմ ա, թաքավորի վեզիրը հարցնըմ ա.

— Ի՞նչ գործ ունես թաքավորի հետ:

Տղեն ասըմ ա.

— Ես թաքավորին մի նվեր ունեմ, իրան պըտի տամ:

Վեզիրը հարցնըմ ա.

— Էտ ինչ նվեր ա:

Ասըմ ա.

— Հեչ, մի ծու ա:

Վեզիրը ասըմ ա.

— Թաքավորը էտքան հավ ունի, խի նա ծու չունի, որ դու պըտի տաս:

Տղեն ասըմ ա.

— Սա ընենց ծու չի, հլա՛ մի օթախի պատուհանները ետ արա:

Տղեն ծուն հանըմ ա, օթախը լիսանըմ ա: Վեզիրն ասըմ ա.

— Ա՛յ տա, էտ ծուն տու ընձի, ինչ ուզես՝ տամ:

Տղեն ասըմ ա.

— Չէ, ես թաքավորին եմ պերել, իրան պըտի տամ:

Վեզիրը ասըմ ա.

— Դե՛ տու:

Տանըմ ա տալիս ա, թաքավորը ասըմ ա.

— Էս ինչ ծու էս պերել:

Տղեն ասըմ ա.

— Էս ծուն ուտիլի չի, էտ ուրիշ ծու ա, լիս ա տալի:

Թաքավորը փորցըմ ա, տենըմ ա՝ էտ տղի ասածը ճիշտ ա, վեզիրին կանչըմ ա, ասըմ ա.

— Տա՛ր էս տղին, մի կոտ ոսկի տու:

Տղեն դուս ա կալի վեզիրի հետ: Վեզիրն էլ էտ տղին ոսկի չի տալի, մի սիլլա ա տալի, թե՝ գնա՛: Էտ տղեն կալիս ա իրան մոր մոտ: Մերն ասըմ ա.

— Ի՞նչ արիր:

Թե՝ ըսենց, ըսենց: Մերն ասըմ ա.

— Որ ասի, ինձ չլսիր:

Վեզիրը մտածըմ ա, թե ո՞նց անի՝ էս տղին կորցնի: Վեզիրը քյընըմ ա թաքավորի մոտ ու ասըմ ա.

— Շատ ես ուրախացել, որ էտ ծուն պերել ա, չէ՞:

Թե՝ հա՛: Ասըմ ա.

— Էտ ծուն ածող հավքին էլ որ պերի, ինչքա՛ն կուրախանաս, չէ՞.

Ասըմ ա՝ հա՛:

— Տղեն ոնց որ ծուն ա պերել, հավքն էլ կարա պերի:

Թաքավորն էտ տղին կանչըմ ա, ասըմ.

— Պըտի էս ծուն ածողին պերես:

Տղեն, թե.

— Թաքավորը սաղ մնա, էտ ծուն ծառի վրից եմ քթել, ածողը չգիտեմ ուր ա:

Ասըմ ա.

— Թե որ չգիտես, քեզ կսպանեմ:

Տղեն կյալիս ա տուն: Մերն ասըմ ա.

— Ընչի՞ կանչեց:

Ասըմ ա.

— Հավքն ա ուզըմ:

Մերն ասըմ ա.

— Որ քեզ ասեցի՝ ծուն մի տա, չլսեցիր: Դե՛ լավ, էտ ծառի տեղը գիտե՛ս, որ ծուն պերել ես:

Տղեն թե՝ հա՛: Ասըմ ա.

— Քո հետ մի խուրջին բամբակ կվերցնես, կտանես կդնես էտ ծառի կլուխ: Էտ հավքը իրա ծվին ամեն օր ման ա կյալի: Կգա կտենա, որ իրա բնի մեջ քշերով սիպտակ ա, կիմանա իրա ծուն ա, կգա կնստի: Դու էլ կփռնես:

Մերը ոնց ասըմ ա, տղեն էտպես էլ անըմ ա: Հավքը կյալիս ա նստըմ էտ բամբակին: Տղեն էտ հավքին փռնըմ ա, պերըմ տալիս ա թաքավորին: Թաքավորը շատ ա ուրախանըմ, վեզիրին ասըմ ա, որ մի կոտ ոսկի տա տղին: Վեզիրն էլի տանըմ ա տղին, մի սիլլա ա տալի, թե՛ գնա՛: Տղեն կյալիս ա մոր մոտ, ասըմ.

— Ոչ մի բան էլ ոչ տվեց, ոչ էլ:

Վեզիրը միտքն ա անըմ, թե ոնց էս տղին կորցնի: Գնըմ, թաքավորին ասըմ ա.

— Մի ծովի կղզում, մի չտեսնված սիրուն ախչիկ ա ապրըմ: Եթե էտ տղեն էտ ախչկան պերի քեզ տա, աշխարհըմ ոչ դարդ կանես, ոչ էլ կծերանաս, ինչքան կուզենաս, էտքան էլ կապրես:

Էլի տղին թաքավորը կանչըմ ա, ասըմ ա, որ քյընա էտ կղզուց էտ ախչկան պերի: Տղեն կյալիս ա մոր մոտ ու պատմըմ:

Մերն ասըմ ա.

— Տղա՛ ջան, գնա թաքավորի մոտ, ասա. «Թաքավորն ապրած կենա, ես քու հրամանը կկատարեմ, մենակ ինչ որ ուզեմ, էն էլ տի տաս»:

Տղեն թաքավորի մոտ ա կյալի, ասըմ ա.

— Կգնամ, մենակ ինչ որ ուզեմ, պըտի տաս: Մի հատ նավ կշինես, որ լուսնի ղայդի լուս տա, քառասուն ազապ տղա թիավար, քառասուն ազապ ախչիկ, քառասուն մարդ էլ նվագող, երգող, պարող: Ու էտ ամբողջ ծախսը վեզիրը անի:

Երբ որ նավն ու տղի բոլոր ուզածները պատրաստ են ըլում, տղեն քշում ա նավը դբա էտ կղզին, կանգնացնում ա նավը ափին, քառասուն թիավարը թաքնվում են, մնում են քառասուն ախչկերքը, քառասուն ածող, պարող, երգ ասող մարդիկ: Սրանք ամբողջ օրը պար են գալի, երգ ասըմ, նվագ ածըմ, ոնց



որ մեծ հարսանքըմը: Մի օր, էրկու օր, իրեք օր, վերջը էս կղզու թաքավորի ախչիկը ասըմ ա.

— Գնանք տեսնենք՝ էս ինչ բան ա, էս ինչ նավ ա, որ չիմ ախչիկ են ու ըսենց լավ երգ են ասըմ, պար կյալի:

Թաքավորը, թե.

— Մի գնա, էսքան նավ ա մեր կղզին էկել, մինն էլա սրա նման չի եղել, սիրտս կասկած ա ընկել:

Վերջը էս ախչիկը հորը լսըմ չի, էնքան ա սիրում երգն ու պարը, որ դիմանըմ չի, վեր ա կալըմ իրա ծառաներին ու գնըմ տենա, թե էս ինչ նավ ա: Որ կյալիս են նավի մեջն են մտնըմ, էս տղեն հրամայում ա իրա քառասուն թիավարներին, որ նավը թեքեն դեպի իրանց երկիրը: Էս ախչիկը մնըմ ա նավի մեջ: Ըսենց երգ ու պարով հետ են կյալի: Էստեղ թաքավորի ախչիկը տղին հարցնըմ ա.

— Էտ ինձ ոմ հըմա էս տանըմ:


Տղեն, թե.

— Թաքավորի:

Աղջիկը ասըմ ա.

— Տա՛ր:

Երբ որ հասնըմ են թաքավորի պալատը, ախչիկը թաքավորին հարցնըմ ա.



— Թաքավո՛ր, էս ո՞նց ա, որ ոչ բաղ ունես, ոչ ծառեր ունես քո պալատի աղաքը: Բա կնիկ ես առնըմ, ես վերդի՞ եմ ման կյալու էս շոգերին: Գնա՛, չոր փետեր պեր, տնկի քո պալատի աղաքը, ես լաց կլեմ, էտ չոր փետերը կկանաչեն:

Թաքավորը չոր փետեր ա բերըմ, փետերի մի մեծ անտառ ա սարքըմ: Էս ախչիկը լաց ա ըլում, ու էս փետերը կանաչըմ են, դառնըմ մի զմրուխտ բաղը: Էս թաքավորն ու վեզիրը ուրախանըմ են, նի են մտնըմ բաղը ու ման կյալի: Էս ախչիկը լացը թողում ա ու ծիծաղըմ: Էտ որ ծիծաղըմ ա, էտ ամբողջ բաղը նորից չոր փետ ա դառնըմ ու էրվում, ալավը երկինքն ա առնըմ: Էտտեղ էլ թաքավորն ու վեզիրը կորչըմ են, մոխիր դառնըմ:

Էտտի էլ էս տղեն ու ախչիկը իրար հետ ամուսնանըմ են, տղեն լուս տվող ծուն դնըմ ա ախչկա թագի վրեն: Ինքն էլ ա թագ դնըմ ու դառնըմ ա էտ երկրի թաքավոր: Էն լիս տվող ծու ածող հավքն էլ ապրըմ ա էտ պալատի մեջ ու երջանկություն ա բերըմ էտ երկրին:

———————

Քոլ — *անտառ, թփուտ*

Տեհել — *տեսել*

Դեպա — *դեպի*

Ծու — *ձու*

Վեզիր — *պալատական բարձր պաշտոնյա*

Օթախ — *սենյակ*

Ղայդի — *նման*

Ազապ — *չամուսնացած*

Կոտ — *հացահատիկի չափ, աման*

Նվագ ածող — *նվագող, երաժիշտ*

Չիմ — *բոլորը*

Մինն էլ ա — *ոչ մեկը*

Աղաք — *առջև*

Ալավ — *բոց, կրակ*

Հավք — *թռչուն*

Սիլլա — *ապտակ*

Նի մտնել — *ներս մտնել*

Վերդի — *որտեղ*





ԳՅՈՒԼՍԻՆԱՄԸ

Հին ժամանակով գելնի, չելնի՝ մե հեր, մե աղջիկ: Աղջիկն ամեն օր կերթա ջրի, մե կուշ կգա, կհիջնի էտու գլխին: Մե օր, երկու օր, երրորդ օրվան կգա, կասա.

— Հայրիկ, ինչքան կեթամ ջրի, մե կուշ կգա, կհիջնի իմ գլխին, կծլվլա, կեթա:

Հերն կասա.

— Էգուց էլ որ կգա կհիջնի, ասա. «Կուշ ջան, ինչ կա, ինչ ա գուզես»:

Առավոտն աղջիկը կեթա ջրի, կուշն էլի կգա, կասա.

— Ի՞նչ կա, կուշ ջան, ինչ ա գուզես:

Կուշն կասա.

— Դու շատ անբախտ աղջիկ կելնես:

Աղջիկն կգա հորն կասա: Էտ օր գիշեր հեր ու աղջիկ մե յորղան, մե ջեջիմ կըվերուն, էտ գեղից կքոչին: Շատ կեթան, քիչ կեթան, էտ էլ իրանք կիմանան, կեթան ռաստ կգան մե գեղի. էս դռան կկպնին, էն դռան, բոլորն էլ փակ կելնեն: Հեր ու աղջիկ կկպնին մե դռա:ն, էտ դուռը կբացվի, աղջիկը ներս կմտնի, դուռը կփակվի: Հերը կմնա դուրս, աղջիկը՝ ներս: Հերն կասա.

— Գնա՛, աղջիկ ջան, էտ էլ քու բախտն էր:

Աղջիկն էստեղ կմտնի, էնտեղ, մեկել կտենա մի կույր տղա նստած ա մե անկյուն: Աղջիկը յոթ տարի կպահա էտ տղուն: Օրերից մե օր մե բոշա կգա բան ծախելու, էտ աղջիկն բոշի աղջկան կվերու իրան ծառա: Բոշի աղջիկն

ամեն օր կեթա առուտուր անելու: Մե օր էլ աղջիկն բոշի աղջկան կթողա տուն, ինքը կեթա բազար առուտուր անելու: Մինչև իրա գալն, էտ տղու աչքեր կբացվեն, էտ տղեն կասա բոշի աղջկան.

— Հը՛, աղջի՛կ, ես յոթ տարի դո՛ւ ես ինձ պահել:

Աղջիկն կասա.

— Չէ՛, մե հատ էլ ծառա ունեմ, ուղարկել եմ բազար:

Աղջիկը բազարից կգա տուն, կտենա՝ էտ տղու աչքերը բացվել ա, էտ էլ բոշի աղջկան ա առել, շատ կզարմանա, բայց արդեն ուշ գելնի:

Օրերից մե օր էլ տղեն կեթա բազար առուտուր անելու, իրա կնգան կասա.



— Ի՞նչ կուզես:

Աղջիկը կասա.

— Ասեղ, մատնոց...

Ծառային կասա.

— Դու ինչ կուզես:

Ծառան կասա.

— Դդմենի:

Տղեն բազարից կառնի բոշի աղջկա ուզածները, դդմենին կմոռանա. ճամփին էլի ետ կդառնա, որ գա առնի: Դդմենի ծախողը կասա.

— Էս ով ա կուզա, էսի դարդ ունեցող կուզա, որ դդմենին կտաս իրան, ինքը իրա դարդը կպատմա, վերջում կասա. «Դդմենի, ես պայթիմ, թե՛ դու», դու կասես. «Դդմենին»:

Տղեն կբերա կտա աղջկան, ինքը կմտնի դռան հետև: Աղջիկը բոլոր դարդը կպատմա, կպրծնի, վերջում կասա.

— Դդմենի, ես պայթիմ, թե՛ դու:

Տղեն դռան հետևից կասա.

— Դդմենին:

Էստեղ իրար կհասկանան: Տղեն բոշի աղջկան կթողա, Գյուլսինամին կառնի: Բոշի աղջկան էլ կանեն իրանց ծառա:

Երկնքից երեք խնձոր ընկավ, մեկը՝ պատմողին, մեկը՝ գրողին, մեկն էլ արար աշխարհին:

———————

Կուշ — *ղուշ, թռչուն*

Ռաստ գալ — *հանդիպել*



ԱՐՋՆ ՈՒ ԳԵԼԸ

Լում ա, չըլում՝ մի աղքատ մարդ: Էս մարդը մի օր կնգանն ասում ա.

— Ա՛յ կնիկ, խալխը մի կոտ ցանում ա, հազար կոտ վիր ունում, ես մի կոտ ցանում եմ, մի կոտ վիր ունում: Գնում եմ աստծուն գանգատ անեմ:

Կնգանը լսում չի, զոռով քաշ գալով գնում ա: Շատ ա գնում, թե քիչ, եդ ա մտիկ անում, տենում մի մարդ ա գալիս: Գալիս ա մոդիկանում, բարև էլ չի տալիս: Քիչ գնում են, գնում, էն եդի էկողը մեչկին կապած աղլուխը եդ ա անում, միջիցը մի սաղ հաց ա հանում, կես անում, կեսն ուտում, կեսը էլի միջին դնում, մեչկիցը կապում: Էն աղքատը տենում ա, որ իրան տալիս չի, ասում ա.

— Ա՛յ մարդ, մի կտոր էլ ինձ տուր, էլի:

Ձեն չի հանում: Մին էլ ա ասում, էլի ձեն չի հանում: Որ մին էլ ասում ա, բրախում ա, փախչում: Էս խեղճ մարդը շատ ա գնում, թե քիչ, մին էլ տենում ա ծմակումը ծուխ ա ծուլ ըլում: Մոդիկանում ա, տենում ա մի ջաղաց: Մեջն ա մտնում, տենում ա էրկու գերան իրար վրա դրած վառվում են: Բիրդամ դուս ա մտիկ անում, տենում ա մի արջ, մի գել են գալիս: Մի կերպ վազում ա, ջաղացի ցրթոնումը տապ անում: Տուն մտնելիս գելն ասում ա.

— Ը՛, ը՛, արջ ախպեր, մրթահոտ ա գալիս:

— Չէ՛, գել ջան, թաց ենք, կրակի կուշտ էկանք, մեր ֆոտն ա:

Նստում են, դինջանում: Արջն ասում ա.

— Գել ախպեր, գիդե՞ս, էս ջաղացիցը քսան ոտնաչափ հեռու մի

կակալքի կա: Էդ կակալքու տակին մի կարաս կա, կեսը ոսկի, կեսը արծաթ:

— Էդ հեչ, դու անգաճ արա, տես ինչ եմ ասում: Էն փլան երգրի թագավորի աղջիկը ծանդրը հիվանդ ա: Մի տարի ա ոչ սաղ ա, ոչ մեռած, զոռի տրփտրփում ա: Ով մեր թագավորի կոտոշավոր էծը մորթե, մորթին հագցնե, աղջիկը կսըղանա, թագավորը լավ պատիվ կանե:

Էն աղքատը չիմ լսում ա: Ռավոդը վիր են կենում, գնում: Էն աղքատը ջահել ա ըլում: Հլե ուզում ա դուս գա, որ գնա, մի սիրուն աղջիկ ա դուս գալի, որ արևին ասում ա դու դուս մի գալ, ես ըստի եմ: Ջաղացը ջրհանում ա, ավլում, իստակում, գերաննին մոդիկացնում, կտուտում ու կորչում: Էդ տղան դուս ա գալի, գնում կակալքու տակը, մի տոպրակ ա ունենում, կեսը ոսկի ա ածում, կեսը արծաթ: Մին էլ տեսնում ա՝ հրեն չոբանի շները: Ձենը փորն ա ընկած ըլում, ձեն ա տալիս.

— Ա՛յ չոբան:

— Արի՛, ախպեր, արի՛:

Չոբաննին աղաքն են գալիս: Ձեռով գլխի ա գցում, որ սոված եմ: Ոչխարնի են մորթում, մի լավ ուտացնում, որ ինքն ասում ա՝ հերիք ա:

— Քշերվա որ վախտը վի կենաս, կի:

Քնում են: Ռավոդը տղեն ոսկին ու արծաթն իրանց ա տալիս, ուզում ա գնա:

— Կացի՛, մի ոչխար մորթենք, հետդ տար:

— Չէ՛, քեզ մատաղ, — ասում ա, — ուզում չեմ, մենակ էն կոտոշավոր էծը մորթեցեք, մորթին ինձ տվեք:

— Էդ թագավորինն ա:

— Հա՛, բան չկա, կասեք՝ գելը կերել ա:

Մորթին տալիս են դրան: Գնում ա խնամախոսի քարին նստում, կանչում.

— Ես հեքի՛մ եմ, ես բժի՛շկ եմ:

Թագավորի նազիր-վեզիրնին լսում են, գնում թագավորին ասում: Թագավորն ասում ա.

— Սաղ երգրումս հեքիմ ու բժիշկ չթողի, դա տի՛ իմ աղջկանը բուժիլ: Աղքատ ա, հաց, շոր տարեք:

Տանում են, տղեն վիր չի ունում:

— Գնացեք ասեք՝ ես փայ հըվաքող չեմ, ես հեքիմ եմ, ես բժիշկ՛եմ:

Գնում են թագավորին ասում, որ շատ, որ շատ՝ թագավորը դրան կանչում ա, թե.

— Իմ աղջիկը մի տարի ա ոչ սաղ ա, ոչ մեռած: Թե բուժես, աղջիկս քեզ, թե չէ՝ գլուխդ կտամ:

Պայման են գրում, մի էրկու գեղացի կանչում, ստորագրել տալիս: Էդ



տղեն գնում ա աղջկա սենյակը: Սաղին էլ դուս ա անում, աղջկա հետ մնում մենակ: Իվզիզ տկլորում ա, իծի մորթին հագցնում ու բգումը կապում: Մին սառը քրդինք ա գալիս, մին՝ տաք: Գալիս են տեղաշորը փոխում, գնում: Մին էլ ըհը՛, աղջիկը աչքերը ճպճպացնում ա, բաց անում: Էդ տղեն թագավորին կանչում ա, աչքալիս անում: Աղջիկը լավ բուժվում ա, սկսում բախչեքումը ման գալ: Էդ տղեն ու թագավորը վիճելիս են ըլում, աղջիկը ձեններուն լսում ա, գալիս:

— Էդ ինչ խաբար ա, խի՛ եք կռվում:

— Ես քեզ բուժեցի, հերդ իրա պայմանը եդ ա վիր ունում, քեզ ինձ հետ ամուսնացնում չի:

Աղջիկը տղի կուռն ա ընգնում: Թագավորը դրանց հըրսանիք ա անում, իրա նկարը պատիցը պոկում, տղի նկարը կախ անում:


Օրերից մի օր էն մարդը, որ հացը մենակ ուտում ա, տղին տալիս չի, էդ մարդը սինին գլխին խնձոր ծախելիս ա ըլում: Թե ոնց ա ըլում, բիրդամ բրաուրդ ա անում, որ պատիցը էն տղի նկարն ա կախ արած: Թագավորի կնիկը խնձոր ա առնում:

— Քիրա ջան, հլա մարդիդ ասա՝ ախպերդ կանչում ա:

Թագավորն ասում ա.

— Ես ախպեր չունիմ:

Որ շատ ասում ա, դուս ա գալիս: Փթաթվում են, դես, դեն, էն մարդն ասում ա.



— Էդ ո՛րդի ես թագավոր դառել:

— Քու գործը չի՛:

Շատ փող, ոսկի ա տալիս, ասում ա.

— Տա՛ր ապրի, որ հատնու, կգաս:

Որ շատ ասում ա՝ որդի ես թագավոր դառել, ասում ա.

— Ջաղացումը:

— Ես էլ տիմ գնալ:

Գնում ա էն ջաղացը, որդի որ արջն ու գելն են ապրում: Գնում ա ջաղացի ցրթոնումը տազ անում: Արջն ասում ա.

— Մրթահոտ ա գալիս:

— Ճիշտ ա:

Ման են գալիս, գդնում, վեր կոխում, ուտում:

Էն թագավորն ու իրա կնիկը հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին:

———————

Բիրդամ — *հանկարծ*

Իվզիզ — *լրիվ մերկ*

Բրաուրդ անել — *նկատել*

Ցրթոն — *ջրաղացքարի տակի աշխատանքային անիվի մոտի ազատ տարածությունը*

Բրախել — *թողնել*

Աղլուխ — *թաշկինակ, կապոց*

Կակալքի — *ընկուզենի*

Փլան — *այսինչ*

Չիմ — *բոլորը, ամեն ինչ*

Ռավոդ — *առավոտ*

Աղաք — *առաջ*

Հեքիմ — *բժիշկ*

Գլուխդ կտամ — *գլուխդ կկտրեմ, կգլխատեմ*

Կուռ — *թև*



ԱՆՊԵՏՔ ՄԱՐԴԸ

Մի քյասիպ մարթ կնգան ըսեց.

— Կնի՛գ, մե խատ գարու խաց թխա, ճամփա կերթամ:

Գնաց, ճամփի մեչտեղ տեսավ՝ արջը կանգնած ա: Արջը ըսեց.

— Խա՛յ, դո՛ր ա կերթաս:

Մարթն ըսեց.

— Կերթամ աստծու կուշտ բողոք:

Արջն ըսեց.

— Աստծուն ըսա՝ իմ մեչք կցավա, իմա՛լ էնեմ, օր լավանա:

Մարթը գնաց, հանդիպեց մե արտի: Արտ հնձողներ ըսին.

— Խա՛յ, դո՛ր ա կերթաս:

Մարթն ըսեց.

— Կերթամ աստծու կուշտ:

— Կերթաս կըսիս աստծուն, օր էս արտը, օր գիքա ժամանագը, հնչի՞ ցորեն չի տա:

Մարթն թորգեց գնաց, հանդիպավ մե խատ ձգան: Ձուգն ըսեց.

— Խա՛յ, դո՛ր ա կերթաս:

— Կերթամ աստծու կուշտ բողոք:

Ձուգն ըսավ.

— Աստծուն կըսես, խոռ՛րի իմ գլոխ կցավա:

Մարթն թորգեց գնաց: Քիչ ա մացել խասի աստծու կուշտ, հրիշտագներ հառեչ կկդրեն, կըսեն.

— Խա՛յ, դո՛ր ա կերթաս:

— Կերթամ աստծու կուշտ: Գացեք աստծուն ըսեք, օր էն քյասիպ մարդ աբրուստ ա գուզա:

Հրեշտագներ կերթան, աստծուն կըսեն.

— Էս մարթ աբրուստ ա գուզա:

Աստված կըսե.

— Խնթրքավորներուս հարցերու պատասխան քեզ կըսեմ, կերթաս կըսիս, մե կճուճ օսկի կստանաս:

Էս մարթ նեղացավ աստծուց, ըսեց.

— Ես մե կարաս օսկու հըմար չեմ էկե, ես միլիոն-միլիոն օսկու աղքատ եմ, ես մե կճուճ օսկու աղքատ չեմ:

Մարթ թորգեց, հետ էկավ: Ճամփին տեսավ, օր արտն չորացել ա:

Հնձվորներ էկան ընդոր դիմաց, ըսեցին.

— Խա՛յ, աստված ի՞նչ ըսեց.

— Աստված ըսեց, օր էնտեղ մե խատ քար կա, քար շուռ տվեք, արտ կկանաչի:



Հնձվորներ քար շուռ տվին, տեսան, օր օսկի ա կթափի, ըսին.

— Խա՛յ, արի մե կճուճ օսկի տար քեզի:

— Հա՛յ-հա՛յ, ես մե կճուճ օսկու քյասիպ չեմ, ես միլիոն-միլիոն օսկու քյասիպ եմ, — ըսավ մարթ ու թորգեց գնաց: Հանդիպավ ձգան, ըսեց.

— Աստված ըսեց, օր ձգան գլխի մեչ օսկի խաչ կա, խանա, ձուգն կլավանա:

Ձուգն խաչն հանեց, ըսավ.

— Խա՛յ, առ էս օսկի խաչ, տար քեզի:

— Հա՛յ-հա՛յ, ես խաչի քյասիպ չեմ, ես միլիոն-միլիոնի քյասիպ եմ, — ըսավ մարթ ու ուր ճամփեն շարունագեց: Էգավ հանդիպավ արջուն: Արջն տեսավ, օր մարթն էկավ, ուրխըցավ, ըսեց.

— Վա՛յ, խայ ջան, էկա՛ր, աստված ինչ ըսեց:

Մարթն արչուն պատմեց ուր գլխի էկած բաներ ու ըսեց.

— Աստված ըսեց, օր մե խատ անպետք մարթ կհանդիպա, մեջք ջարդա, ուդա կլավանա:

Արջն ըսեց.

— Է, քեզնե անպետք մա՛րթ, արի քե ուդիմ:

Արջն էդ մարթու մեջքն կջարդա, կուտա:

Դա՛ր — ուր, որտե՞ղ

Խայ — մարդ

Կուշտ — մոտ

Իվալ — ինչպես

Խուրի — ինչու

Ուր — իր

Խանա — հանիր

ՉՈՐԱՆԸ

Լըմ ա, չի ըլըմ, մի չորան: Երեսուն տարվա չորան ա ըլըմ: Էս մարդը շատ գող ա ըլըմ: Նա իր հարևանից սելը գողանըմ ա: Գեղի վարդապետնին մի օր գնըմ են ասուխոսի, սա էլ վարդապետնուն հարցնըմ ա, թե ուր են գնըմ: Սրանք էլ պատասխանըմ են, որ գնըմ են աստծու մոտ: Ինքն էլ ա ուզում գնա, աստծուց թողություն խնդրի, ու հետները գնըմ ա: Երբ գնըմ են, գիշերը ընկնըմ ա, ու սրանք մնըմ են մի գյուղում: Վարդապետնին գնըմ են իրանց ծանոթ տները, իսկ ինքը մի հատ հողի տուն ա տենըմ ու դպա դենը գնըմ ա: Հասնըմ ա, դուռը թըխկթըխկացնըմ ա, մի պառավ ա դուռը բաց անըմ, չորանը հարցնըմ ա.

— Նանի՛, չե՞ս թողա քու տանը քըշերեմ:

— Ղոնախը աստծունն ա, համա ոչ բան ունենք ուտելու, ոչ էլ տեղ ունենք քնելու, — պատասխանըմ ա պառավը:

Սա էլ վերջը համոզացնըմ ա, որ իրան բան պետք չի, նոր պառավը թողնըմ ա:

Պառավը էրեխեքին խաբելու համար քար ա էփելիս ըլըմ, էրեխեքն էլ ըսպասըմ են, ըսպասըմ ու վերջը քնըմ են: Սա որ տուն ա մտնըմ, մոտենըմ ա օջախին, շերեփով պղնձի տակն ա տալի ու ասըմ.

— Բա էս քավթառը ասըմ ա ոչ մի բան չունեմ, հրես լոբի ա էփըմ:

Երբ որ իմանըմ ա ինչն-ինչոց ա, հարցնըմ ա.

— Նանի՛, ըստի ոչխար ունեցող կա ո՞չ:



— Կա՛, բալա ջան, խի՞ չկա, հրե մեր դիմացի տանը երեսուն հատ ոչխար կա, — պատասխանըմ ա պառավը:

Սա որ իմանըմ ա, գնըմ ա երդիկից մտնըմ ա գոմը, ընդեղից մի ոչխար ա գողանըմ, մորթըմ, տանըմ միսը տալիս ա պառավին ու ասըմ՝ էփի: Պառավը մի քիչ վախենըմ ա, բայց հետո էփըմ ա, չոբանին էլ ա կերակրըմ, էրեխեքին էլ: Առավոտը որ բացվըմ ա, լիսը բացվի ձեր վրա, էս չոբանը գնըմ ա վարդապետների հետևից, տենըմ ա՝ հըրես դրանք իրանց փարաջեքը գցել են ծովի վրա ու անց են կենըմ: Ինքն էլ իրա չուխեն ա հանըմ, գցըմ ա ծովի վրա ու ինքն էլ ա անցնըմ: Գնըմ են, գնըմ, հասնըմ են աստծուն: Աստվածը վարդապետներին լսըմ ա ու ներըմ չի.

— Ձեր մեղքերը շատ ա:

Իսկ չոբանին ասըմ ա.

— Դու ավազակութին շատ ես արել, բայց դե իրեք հոքի ես ազատել, քեզ պատժում չեմ, ես քեզ ներըմ եմ, որ էն էրեխեքին սովիցը փրգել ես: Տերը քեզ հետ, գնա՛:

———————

Ասուխոսի — *մեղքերի թողության*

Դպա — *դեպի*

Ղոնաղ — *հյուր*

Փարաջա — *հոգևորականի զգեստ*

Չուխա — *տղամարդու բրդյա զգեստ*



ՍԸՏԱՆԵՆ

Մի մարդ ու կնիկ են ըլում: Էս կնիկը սաղ օրը անընծում ա մարդին:

«Հա՛յ քրքրվիս, հա՛յ աստծու տակիցն ընգնիս, հա՛յ դոշիդ վարդեր դնեմ, հա՛յ փլան, հա՛յ փստան...»:

Որ շատ, որ շատ, էս մարդը ասում ա.

«Մինչև երբ տի անընծես: Ես սրան փթոցի տիմ տալ»:

Էս մարդը իրեք հատ ոսկի ա ունենում, վիր ա ունում, ջեբին դնում, գնում: Ռիգունը տուն ա գալիս թե չէ, կնիկը ասում ա.

— Հողեմ էդ շաշ գլուխդ, ո՞րդի էիր կորած, էս ըշխարհքիցը հենց կորչիս, որ մենակ ես գիդենամ: Գնա՛, որդի ման ես էկել, գնա ընդի:

Մարդը ձեռը ջեբն ա տանում, ոսկին հանում:

— Հա՛, վի՛, քեզ մատաղ ըլիմ, կանաչ օրով ըլիս, էս ո՞րդիան ա:

Ասում ա ու ճպռապորում, խլում:

— Ա՛յ կնիկ, սհենց, սհենց, իմ հնգորտանցով ոսկու ֆոր ենք գդել, ոսկին կիտած ա, տախտակը դեմ արած. հեքուց ռավոդը գնալ տինք, բերի: Համա վախում եմ իրանք շուտ գնան, հանեն, ինձ տան ոչ: Մենք ծեգելհանա կգնանք, կհանենք:

Կնիկը ուրախանում ա, ըշխարհքովը մին ա ըլում, ասում ա.

— Ա՛ բեմուրազ, դրդակված, բա որ տեղը գիտեիր, խի՞ չասեցիր, ա՛ մուրազդ մեռնի:

Համա ձեզ եմ հարցնում, ինչ՞ ոսկի, ինչ՞ բան: Էս տղեն մի ֆոր փորած ա

ըլում, մի հեյվարա ջըղացքար կշտին դրած, մի կաղնի էլ կտրած ա ըլում, բերած: Սաղ քշերը էս կնիկը դուս ա ըլում, տուն մտնում.

— Ադա՛, վի կաց, լիսացավ, ադա՛, վի կաց:

Որ շատ զահլեն տանում ա, վիր ա կենում, գնում են, գնում, հասնում են մի ծառի:

— Ա՛յ կնիկ, նստենք դինջանանք:

— Բալքի նստիս, էլ վիր չկենաս: Շուտ արա, իրանք կհանեն, մեզ տալ չեն:

Որ հասնում են ֆորին, մարդը ասում ա.

— Ա՛յ կնիկ, դու մեջը մտի, ոսկին հըվաքի:

— Չէ՛, դու մեջը մտի:

— Չէ՛, ես որ ոսկին լցնեմ, դու կարալ չես համ ինձ հանես, համ ոսկին, դո՛ւ գնա:

Կնկան շրջում ա ֆորը, կնիկը դես-դեն խլշկոտում ա, ասում ա.

— Ադա՛, բեմուրազ, ո՛ւր ա ոսկին:

— Գնա՛, քու հերն էլ անըծած:

Ջըղացքարը վրին ա գցում, կաղնքին վերնադիր շուռ տալիս ու՝ հայդա՛ տուն:

Մխելի վախտը եդը ասում ա.

— Գնամ տենամ՝ կնիկս ինչ էլավ:

Կացինը վեր ա ունում, գնում. քարը եդ ա քաշում, մի պուճուր ծելպ անում, տեսնում, որ էս կնիկը մի սըտանա ձեռին՝ խեղդում ա: Սըտանեն բրաուրդ ա անում, ասում ա.

— Ա՛յ հողեղեն, ինձ ազատե, քեզ մի լավություն կանեմ:

— Չէ՛, խաբում ես, սըտանեն սուտլիկ ա:

— Շատ չէ, մի լավություն կանեմ:

Տղեն մի երգեն ձողի ա կտրում, բերում ֆորումը դնում: Համի սըտանեն ուզում ա դուս գա, էս կնիկը թողում չի, ասում ա.

— Ի՛նձ էլ տար:

Սըտանեն ծուլ ա ըլում, դուս գալիս, տղեն էլի ջըղացքարը վրին ա գձում: Սըտանեն ասում ա.

— Ես գնում եմ. մխելի վախտից եդը ժուռնալ կընգնի, որ թագավորի աղջիկը հիվանդ ա: Կգնաս, հենց որ տենաս ես գլխի կշտին եմ կանգնած, տուն չմտնես, եթե ոտների կռանն ըլիմ, տուն կմտնես:

Սըտանեն գնում ա, տղեն տուն ա գալիս: Մխելի վախտ ճամփա ա պահում, մին էլ ժուռնալ ա ընգնում, որ թագավորի աղջիկը ծանր հիվանդ ա: Տղեն գնում ա, խնամախոսի քարին նստում ա, սկսում գոռալը.

— Ես հեքիմ եմ, ես բժիշկ եմ:



Թագավորը լսում ա, ասում ա.

— Սաղ երգրումս էլ հեքիմ ու բժիշկ չթողի, սաղին էլ կանչեցի, հիմի էս կաթնակերը տի՛ բուժիլ:

Հրամայում ա, որ տղին կանչեն: Գնում ա, պայման են կապում, որ եթե աղջիկը բուժվի, թագավորը նրան իրան բժշկողին ա տալիս, եթե չէ՝ գլուխը կտրում ա:

Տղեն տուն ա մտնում, տենում ա սըտանեն ոտների կռանն ա կանգնած, դուռը բաց ա թողում, սըտանեն փախչում ա, աղջիկը բուժվում ա: Դրա հետ հըրսանիք ա ըլում: Մին էլ իմանում ա, որ էն փլան երգրի թագավորի աղջիկն էլ ա հիվանդ: Գնում ա, տենում ա՝ սըտանեն գլխի կռանն ա կանգնած: Սըտանեն ասում ա.

— Քեզ ասի ո՛չ գա՛ս ոչ:

— Գիդե՞ս խի եմ էկել. էն կնիկը փոսիցը դուս ա էկել, հա՛մ ինձ ա ման գալիս, հա՛մ քեզ:

Սըտանեն վիր ա կենում, փախչում, աղջիկը սըղանում ա: Էդ թագավորը իրա խազինի կեսը տալիս ա տղին, պատվով եդ ղրգում:

Էն տղեն ու աղջիկը հասան իրանց մուրազին, դուք էլ հասնուք ձեր մուրազին:

———————

Փթոցի տալ — *փորձանքի ենթարկել*

Հեյվարա — *ահագին, մեծ*

Ծելպ — *անցք*

Խազինա — *գանձ, գանձարան*

Փլան — *այսինչ*

Մխելի — *մի քիչ*

Ժուռնալ ընգնել — *հայտնի դառնալ, հայտարարվել*

Ծուլ ըլել — *վեր թռնել*

Ֆոր — *հոր*

Խլշկոտել — *ականջները ցցել, ուշադիր զննել*

Ճպռապորել — *ձեռքից խլել, թռցնել*

Րիգուն — *երեկոյան*

Շաշ — *գիժ, հիմար*



ՀԻՄԱՐ ԿԻՆԸ ԵՎ ԽԵԼԱՑԻ ԱՄՈՒՍԻՆԸ

Լինում են մըն մարթ, մըն կնեկ: Կնեկը մի քիչ խելքից թեթև ա ըլում: Օրին մի օրը դաշտից մարթը կյամ ա, ասում ա.

— Ա՛յ կնեկ, բա տկլոր եմ, մեր տանը պյուրթը լիքը, գոնե էդ պյուրթը մի քիչ մանչես, որ ինձ հետի մի շալվար անեմ, բա տկլոր պետի՞ մնամ:

Ասում ա.

— Ա՛յ մարթ, լավ ես ասում. տանեմ մանեմ:

Տանում ա տամ ուրիշի, մանում ա, պիրում ա:

— Ա՛յ մարթ, լա՛վ եմ մանա՛լ, մըն տես, է՛, ինչ մանած եմ ըրալ, է՛:

Ասում ա.

— Ա՛յ կնեկ, դե կործել տուր, էլի՛:

Կնեկն ասում ա.

— Դե տանեմ կեցիլ տամ:

Համարյա կյամ, կյուղան տուրս ա կյամ, քինում Ղազի գյոլ, տեսնում ա կյորտը մըն կռկռում ա վեր, ասում ա.

— Ա՛յ պելի-պիլաքին, իմ մարթը տկլոր ա, շալվարը կկեցե՛ք:

Կյորտը կռկռում ա.

— Կոռռծեք, կոռռծեք, կոռռծեք:

— Բա հե՛փ, հե՛փ եմ կյալու տանեմ:

— Օռռփատ օրը, օռռփատ օրը, օռռփատ օրը:

— Հա՛, դե լավ, լավ, դե որ էդպես ա, լահա շուտ ա, էն մարթը տկլոր ա, մեխկն ա:

Կնեկը մանածն ածում ա էդ գյոլին մեջ, ըտեղ թողում, կյամ տոն:

— Ա՛յ մարթ, տվել եմ պլաքենը կեցի, օռփատ օրը քինամ շալտ պիրեմ, կարեմ, կեց:

— Ա՛յ կնեկ, լավ ես արալ, խելոք կնեկ ես:

Օռփատը կյամ ա: Էդ կնեկը վեր ա կենում քինում: Էտ օրտ էլ ցորտ ա ըլում, կյորտերը ծեն չեն հանում:

Կանչում ա.

— Ա՛յ պելի-պիլաքին, պելի-պիլաքի՛ն:

Ծեն չկա: Ոտերը հանում ա, մտնում գյոլը: Տես ա ման կյամ, տեն ա ման կյամ, մին էլ տեսնում ա՝ ոսկի ջամ: Էդ ոսկի ջամտ վերցնում ա, ասում ա.

— Վեր տուք իմ շալս տամ չեք, ես էլ ծեր ջամը տալ չեմ:

Ասում ա, ջամը եր օնում, քինում: Կյամ ա, ասում ա.

— Ա՛յ մարթ, բա ասիլ չես՝ կլոխս հինչ ա եկալ. շալը տվին վեչ, ես էլ ջղայնացա, էտ ջամս վերցրի պիրի:

Էտ մարթը, որ տեսնում ա ոսկի ջամ, աչքերը չռում ա.

— Ա՛յ կնեկ, ինչ խելոք կնեկ տուրս էկար, լավ ես արել, կտորը կերան, ջհաննամը, թաք էտ պերած ինես:

Կենում ա, մարթն ասում ա.

— Դե՛ տիր ընդեղ:

Տինում ա ընդեղ: Րիգունը վեր կնեկը քնավ ա հընցում, սա վերցնում ա տանում, հաքի ամբարում կյաղում ա:

Օրին մի օրը, ոնց ա տյառնում, սաղսի ծախող ա կյամ էդ տեղերը: Էդ կնեկը քինում ա, ասում.

— Ախպե՛ր, կորան քանի՞ կտաս, ինձ հարկավոր ա, ախար մի քանի աման ա հարկավոր:

Ասում ա.

— Ա՛յ քիր, մեջը լիքը ցորնով եմ տալիս:

Ասում ա.

— Լավ, քինամ պերեմ:

Քինում ա, որ ցորենը պիրի: Հանկարծ ցորենը ետ տալու ժամանակ էդ ջամը տուրս ա կյալիս:

— Վա՛յ, — ասում ա, — հողեմ էն պրուտի կլոխը, մարթս չարչարվի, ես ցորենը տանեմ տամ պրուտին, հազիր էս ջամը կտանեմ, խափեմ, սաղսին առնեմ:

Ջամը տանում ա տամ պրուտին: Պրուտի աչքերը չռվում ա.

— Վա՛յ, — ասում ա, — ա՛յ կնեկ, ինչ բարի կնեկ ես տու, եթե էդպես ա՝ էս պեռինը քեզ:

Պեռնը վերցնում ա, պիրում ա էդտեղ, թափում: Էդ մարթը երեսը տեն, դաբանը հետ՝ յալլա փախչում:

Րիգունը կնեկը սկսում ա էս սաղսին կուտրատելը: Կուտրատում ա, լավ զիզիլիքներ անում, տոնը նախշում: Մարթը կյամ ա, ասում ա.

— Ա՛յ մարթ, դու ինձ ասում ես լավ կնեկ չեմ, մըն մտի տես տոնը հունց եմ սարքել, է, էնպես տոն եմ սարքել, որ չեղած:

Մարթը մտնում ա, տեսնում՝ հիմնչ. սաղսին փշրած, տոնը սարքած:

— Ա՛յ կնեկ, էս ինչո՞վ ես առել:

— Բա էն ջամովն առա, էլի, խափեցի, ամբողջն առա, պիրեցի:

Ա՛յ քո սհենցը, նհենցը, կնկանը մի երկու տալիս ա, կնեկը փախչում ա: Շատ ա քինում, քիչ ա քինում, մի ճանապարհի ղրաղին նստում ա: Թագավորական ոսկի են հավաքած ըլում, օխտերը բառնած, էդ ճանապարհովը գնալիս են ըլում: Ոնց ա տյառնում, մըն սպիտակ օխտ ոսկին պյեռնած հանկարծ էդ ղաթան տուրս ա պրծնում, կյալիս էդ կնկանը կողքը: Պենջար ա ըլում, համ պենջարը օտում ա, համ էլ՝ կնդում:

— Չէ՛, պելի, հացը վկա ա, ես կյալու չեմ, ես էն մարթի կողքը էլ եկողը չեմ. ինձ թակալ ա, սպանալ ա. պելի՛, խնդրես վեչ:

Դե օխտը հիմնչ անի, համ օտում ա, կլոխը քաշ գցում, պրցրացնում: Կնեկը գյուդում ա թա՝ խնդրում ա իրան.

— Դե՛ լավ, վիզը կեռ, բա վոր եկալ ես, եկալ ես. պելու խաթրը ես շատ եմ ազիզ սիրում, արի մեջքիտ նստեմ, քինանք:

Օխտին նստում ա՝ յալլա դեպի տոն: Շատ ա կյամ, քիչ ա կյամ, վերչը կյամ ա հասնում ա տոն:

— Ա՛յ մարթ, — ասում ա, — մըն տուրս եկ, տե՛ս, հիմնչ կա տրսումը. շոռ տաս վիզը կեռ պելու կլխավը, եթե վեր վիզը կեռ պելին չլներ, ես քու կողքը եկողը չի, հա՛. գիդաս վեր պելու խաթրն եմ եկալ:

Մարթը տուս ա կյամ, տեսնում՝ էրկու ջվալ ոսկով պեռնած օխտին, ասում ա.

— Ա՛յ կնեկ, շատ էլ լավ ես ըրալ, եկալ ես պելուն խաթրին:

Ոսկին վերցնում ա, քցում մի հորի մեջ, օխտի կլոխը կտրում, քցում մյուս հորի մեջ: Քյամ են տոն, ասում ա.

— Ա՛յ կնեկ, գիտե՞ս հինչ կա:

— Հիմնչ կա:

Ասում ա.

— Մենք րիգունը պըտի հրսանիք անենք:



Մարթը քյամ ա բզարան լավ հաքուստ, ուտելիք պերում, հաքնում են, ուտում, խմում: Մարթը ծափ ա տամ՝ կնեկն ա պար կյամ, կնեկը ծափ ա տամ՝ մարթն ա պար կյամ: Մարթը կնկանը էնքան ա պար ածում, բիզարում ա:

Ասում ա.

— Ա՛յ կնեկ, բոլ ա, վեր կաց քոն ինենք:

Վեր են կենում, քոն ինում: Կնեկը վեր քնավ ա հնցնում, մարթը եր ա կենում, քինում էս ոսկին, օխտը հորից հանում, օրիշ տեղ կյաղում: Առավոտը լուսանում ա, կնեկը եր ա կենում, կոժը օսին քինում ճուրը: Քինում ա տեսնում՝ աղպրի ղրաղին նստած են իրեք մարթ:

— Բարի՛ լուս, ա՛յ մարթիկ, ի՞նչ մարթիկ եք, բալքի օխտատերն եք:

— Հա՛, — ասում ա մինը, — ա՛յ քուր, օխտատերն ենք, մըն օխտ ենք կորցրել:

— Հա՛, սպիտակ օխտ, չովալը կեցած, փնջանի քողերը վզին, ոսկին շալակը:

— Հա՛, քուր ջան, հա՛:

— Ես եմ տարալ, ես եմ տարալ, ա՛յ ախպեր, եկեք:

Էդ մարթկանց հետան ա անում, պերում հորին կողքը, պյանում են, տեսնում՝ պյան չկա: Մարթին հարցնում են.

— Ախար քու կնեկը օխտը պերալ ա, հի՞նչ ես ըրալ:

Մարթն ասում ա.

— Ա՛յ ախպեր, իմ կնեկս խելքից թեթև ա, սուտ բաներ ա ասալ, դուք էլ եկալ եք:

— Ա՛յ մարթ, ո՞նց ա սուտ ասալ, բոլոր նշանները դյուզ են:

— Ա՛յ մարթ, կարող ա իրա մեչան հնարի, էդ բանը չի էղել:

Էս գործը տալիս են դատի: Մարթը եր ա կենում, կնկա հետ քինում դատի: Դատարանում կնեկն ասում ա.

— Ընկեր դատարան, օխտը ես եմ պերալ՝ չուվալը կեցին, փնջանի փողերը վզին, ոսկին շալակը: Մարթս ոսկին ածալ ա մի հորի մեջ, օխտն էլ մի հորի մեջ:

Մարթն ասում ա.

— Ա՛յ մարթիկ, էս կնեկը գիժ ա, հարցրեք ասեք. «Ո՞ր ժամանակին ա էղել»:

Դատարանն ասում ա.

— Քուրի՛կ, ո՞ր ժամանակին ա էղել՝ օխտը որ բերել ես:

— Ընկեր դատարան, իմ հրսանքավն ա էղել:

Օխտատերն ասում ա.

— Ա՛յ մարթ, էս քսան տարվա հարսնացու ա, իմ օխտը կորելը դեռ իրեք օր ա:

Դատարանն ասում ա.

— Քուրի՛կ, դուզն ասա:

— Ա՛յ մարթ... դատարան... աստված, երկինք, գետին վկա յա, իմ հրսանքավն ա էղել:

Էստեղ դատը հեչ ա տյառնում: Տեսնում են՝ էս կնեկը գիժ ա, օխտատերերը թողնում են քինում:

Երկնքից իրեք խնձոր ա ընկնում՝ մինը ասողուն, մինը լսողուն, մինն էլ անունը տամ չեմ:

———————

Պյուրթ — *բուրդ*

Մանչես — *մանես*

Ինձ հետի — *ինձ համար*

Կործել — *գործել*

Կեցիլ տամ — *գործել տամ*

Կեց — *հագիր*

Կյուղան — *գյուղից*

Կյորտ — *գորտ*

Հեփ — *երբ*

Օռփատ — *ուրբաթ*

Լահա — *հալա, դեռ*

Պելի-պիլաքին — *քավոր-քավորկին*

Պիլաքի — *քավորկին*

Տես ա ման կյամ — *այս կողմն է ման գալիս*

Ոսկի ջամ — *ոսկի թաս*

Ինես — *լինես*

Րիգուն — *իրիկուն, երեկո*

Քնավ ա հընցում — *քնով է անցնում, քնում է*

Կյաղում ա — *թաքցնում է*

Սաղսի ծախող — *ապակեղեն վաճառող*

Պրուտ — *բրուտ*

Պեռնը — *բեռը*

Դաբանը հետ — *ներբանը ետ, կրունկը ետ, փախչել*

Հունց — *ինչպես*

Օխտերը — *ուղտերը*

Ոնց ա տյառնում — *ինչպես է պատահում*

Էդ ղաթան — *այդ արանքում*

Պենջար — *բանջար*

Համ էլ կնդում — *համ էլ պոկում, պռճոկում*

Գյուդում ա — *իմանում է*

Քո կողքը — *քո մոտ*

Բիզարում ա — *հոգնում է*

Քոն ինենք — *քնենք*

Բալքի — *գուցե*

Չուվալը կեցած — *ջվալը հագցրած*

Դյուզ են — *ճիշտ են*

Իմ հարսանքավն ա էղել — *իմ հարսանիքի ժամանակ է եղել*

Գյոլ — *լիճ*

Եր օնել — *վերցնել*



ՈՒՂՏԸ

Լում ա, չըլում մի մարդ: Էս մարդը մի շաշ կնիկ ա ունենում: Օրերից մի օր էս կնիկը ճամփումը մի բեռնած ուղտ ա տենում, վազում ա մարդի կուշտը, թե.

— Ա՛յ մարդ, էնա հազիր իրա ոտովը մեր դուռն ա էկել: Յա՛ բախտ, յա՛ ղսմաթ, բի՛ մորթենք:

Էնա ասելն ու հադաղ մարդը բեռը վրիցը վեր ա բերում, մորթում: Մխելի վախտ ա անց կենում: Էս կնիկը տենում ա, մի մարդ վռազ-վռազ գնում ա, ձեն ա տալի.

— Ա՛յ մարդ, ուղտիդ ես ման գալիս:

Էս մարդն ասում ա. «Հլա հա՛ ասեմ»:

— Հա՛, քիրա ջան, կարող ա՛ տեհած ըլիս:

— Ի՛, զուր ես ման գալի. ուղտի մսիցը քեզ էլ ենք պահե, արի՛ կեր:

Էս մարդը գնում ա դատավորի կուշտը: Դատավորը շաշի մարդին կանչում ա:

— Ա՛յ մարդ, էս մարդի ուղտի միսը խի՞ ես կերել:

— Վա՛յ ծով, ցամաք, երգինք, գեդինք, ես բեխաբար եմ: Վկա բերեք, որ հըվատամ:

— Վկեն քու կնիկն ա:

— Է՛, խելքդ սիրեմ, դատավոր ախպեր, իմ կնիկը շաշ ա. նրա վերի կուռը թամուզ ավլած ա: Հմի ես ասեմ, դուք անգաճ արեք: Մի արև, պլպլան օր էր.

ասեին կնիկդ շաշ ա, ուզեի ոչ հըվատամ: Վերջը, որ շատ, որ շատ, ասի՝ մարդ ա, էլի, հնարավոր ա, լա՛ փորձեմ: Ասի.

— Ա՛յ կնիկ, նոր աստոծի հետ խոսեցի, ասավ գեշ սելավ տի լիլ:

Կնիկս ծուլ-ծուլ էլավ, թե.

— Վախում եմ, ինձ մի տեղ պիե:

Տարա թոնրի մեջը գցեցի, վրին մի տախտակ դրի, տըխտակի վրին էլ մի փեշ ցորեն ածի, հավերը վրին արի: Հմի նրանք կտկտացնելով ուտում են, նա էլ միջին ճվճվում ա: Որ կերան, պրծան, կնգանս թոնրիցը հանեցի: Ասում ա.

— Ա՛յ մարդ, էս ի՞նչ զուլում կարկուտ էկավ:

Էլ ասում չի, թե գեդինը խի՞ ա ցամաք: Հմի դուք էն շաշի ասածին անգամ եք անում, հըվատո՞ւմ...

Դատավորի խելքը կտրում ա, որ էտ կնիկը դուզ շաշ ա: Սհենց էլ դատից ազատում են:

———————

Շաշ — *հիմար*

Բեխաբար — *անտեղյակ*

Թամուզ — *մաքուր*

Նրա վերի կուռը թամուզ ավլած ա — *բնավ խելք չունի, հիմար է*

Սելավ — *հեղեղ*

Լա — *հալա, հապա*

Զուլում — *պատուհաս, խիստ, սաստիկ*



ՄԻ ԲՈՒՌ ՀՈՂ

Հարոն-Կարոն շատ հարուստ կեղի, աշխրի չափ օսկի կունենա: Օր կծերանա, քառասուն դև կմորթա, կթալա կշերուն, օր հուր ապրուստի տեղ մարդու կըսա չէնեն: Սալ կշրջեն, նազիր-վեզիր ապրուստ կլցեն տակ, կեթան: Էդունց շատ ժամանակ գնցի, ժուկըմ կմնա, Հարոն-Կարոն կմեռնի:

Ժամանակով մոլեն ու տերդեր ճամբախ կեթան: Կշեր վերևանց քխոսան: Էն մի կուշ կըսա.

— Տերոջ ջեբ օսկի կա:

Մոլեն կծըծղա: Տերդեր կըսա.

— Հորի՛ կծըծղաս վըր ընձի:

Էն մե կուշ էլի կըսա.

— Օր մոլեն տերոջ սպանա, ահագին օսկի կխանա:

Մոլեն կծըծղա, կըսա.

— Հարոն-Կարոն օսկուց ինչ խասկցավ, օր ես ինչ խասկնամ, — կըսա, — տերդեր, ինչ կա քու ջեբ:


Տերդեր կըսա.

— Բան էլ չկա, մոլա, մե խատ սոխ ա:

Կշեր էլի կզրուցեն, էն մե կուշ կըսա.

— Հարոն-Կարոնի ապրուստ օր թաղին, մենք հէնօր ենք կուշտ կերե:

Մոլեն էլի կծըծղա: Տերդեր կըսա.



— Մոլա՛, էդ ինչ ա եղե, հնչի՞ քեզի-քեզի կծըծղաս:

Մոլեն կըսա.

— Գըլսե՛ս, տերդեր, էտա կշեր քսեն օր մենք Հարոն-Կարոնի ապրուստ թաղելու օրն ենք կուշտ կերե:

Կեթան-կեթան, կխասին թագավորի քաղաք, տերդեր կեթա թագավորի ոտ, կըսա.

— Թագավոր ապրած կենա, մոլեն Հարոն-Կարոնի ապրուստի տեղ գինա:

Թագավոր նազիր-վեզիր կճամփա, մոլին կառին գիքան, կըսա.

— Մոլա՛, հուզես-չուզես՝ Հարոն-Կարոնի ապրուստ պտի բերես, չես բերե՝ քու գլուխ կըկդրեմ:

Մոլեն կըսա.

— Տերդեր, քու վիզ կոդրի, էս ինչ էր էնեցիր իմ գլոխ, — կըսա, — թագավոր ապրած կենա, օր կըսես՝ կըսես: Ընձի յոթ դևաբեռ միս տուր, ամեն դևի խետ՝ մե մարդ, մե խատ էլ՝ դևի կաֆսա:

Սաբախտան գելի կառի դևանք, կեթա: Կեթա-կեթա, կըխասի էնդեղ, դոր թաղած ա Հարոն-Կարոնի ապրընքներ: Միս կցփկնա էտերանք, հինք կըմտի դևի կաֆսա, կմնա: Ինչքան էրուն-թռչուն կան՝ գժողվվին, գիքան էդ միս կուտեն: Մեկ դախ թռչուն Հարոն-Կարոնի վախտուց մացուկ կեղի, գիքա կնըստի վըր դևի կաֆսային, կտուց գզենա, կպուպուզի, կըսա.

— Մենք մեկ էլ Հարոն-Կարոնի ապրուստ թաղելու օրն ենք էսմալ կերե, օր Հարոն-Կարոնի ապրուստ թաղին էտա սալի տակ:

Մոլեն գըլսի, գելի: Օր գելի, թռչուն կըճչա ու կպադռի, կըսա.

— Հերթում էր դրուկ մեր վրեն, հորի՞ ըսի:

Մոլեն սալ կիտա շրջել, Հարոն-Կարոնի ապրուստ կբառնա դևենք, կխեծի, գիքա: Գուքա թագավորի պալատ, կըսա.

— Թագավորն ապրած կենա, քու հուզածն բերեր եմ:

Թագավոր հուրին-հուրին կըսա. «Լուսուն ձեն հընգի ախշար, կըսեն՝ թագավոր քեսիբ էր, գնաց Հարոն-Կարոնի ապրուստ առավ էկավ»: Կըսա.

— Մոլա՛, դարձու տար:

Կառի կեթա, գըլցա սալի տակ, գիքա:

Թագավոր կըսա.

— Մոլա, ինչ գուզես քե տամ. իմ խամար չարչրվար, գացիր, էկար, մե բան հուզա:

Մոլեն կըսա.

— Ապրած կենա թագավոր, ընձի տերոջ գլոխ կիտաս:

Կճամփեն, տերոջ կառին գիքան, գլոխ կըկդրեն: Թագավոր կըսա.

— Բեր տերոջ գլոխ, դնենք քաշենք, ինչքան օսկի վերուց, քե էղի:

Կշեռք կառին գիքան, տերոջ գլոխ կըդնեն վրեն, ինչքան օսկի գըլցեն, գետնեն չբանցրնա: Մոլեն կըսա.

— Թողեք, ես էդոր գլոխ բանցրցում:

Կեթա դսուց մե ճանգ խող կբերա, գըլցա, տերոջ գլոխ կբանցրնա, կըսա.

— Թագավո՛ր, տե՛ս, մեզի էսի յա պետք, մեզի մինեկ խողն ա: Դու ինչքան օսկի լցիր՝ չբանցրցավ, մե ճանգ խող լցի՝ բանցրցավ:

Էդուց տերոջ գլոխ տանին թալեն դեն, թագավոր մոլին գհարգապատվա, դնա ջաղդի, կըսա.

— Դը գնա, մոլա, Հարոն-Կարոն ի՞նչ տարավ էս ախշրեն, օր ես տանիմ:

———————

Հարոն-Կարոն — *խոսքը, ըստ երևույթին, 8-րդ դարի արաբ խալիֆա Հարուն-ալ-Ռաշիդի մասին է:*

Ապրուստ — *հարստություն*

Դևաբեռ — *ուղտաբեռ*

Դևի կաֆսա — *ուղտի խրտվիլակ*

Սաբախտան — *առավոտյան*

Հերթում — *երդում*

Դան — *այնտեղ*

Ջաղդա — *ճանապարհ*





ԲՈՍՏԱՆՉՈՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ

Կեղնի, չեղնի, մէ հատ բոստանչի կեղնի: Մէ անգամ էդ բոստանչին հողը փորելիս մէ պուդուկ օսկի կգդնի ու կըսա.

— Ով որ էգավ իմ բոստանի մոդով հնցավ, էս գդուգ օսկին կկիսեմ ընդրա հեդ:

Հանկարծ թաքավորն գիքա ու գնցնի էդ բոստանչու բոստնի մոդով, բոստանչին թաքավորին կտենա ու կըկանչա.

— Թաքավորն ապրած կենա, արի՛, էս օսկին կիսենք:

Թաքավորն էդ օսկին տենալով աչքերն կըչռա, բոստանչու մոդեն օսկին կառնի ու կփախնի: Էդ բանն օր բոստանչու աղջիկներն կտենան, հորն կըսեն.

— Հայրի՛կ, դու մի վշտացիր, էսա մենք իրեք քրովս կեթանք ու օսկին կբերինք:

Բոստանչու աղջիկներն կեթան թաքավորի պալատ:

Թաքավորն իրա բաղում նստած կլնի: Թաքավոր օր իրեք հուրի-փերի աղջիկ կտենա, գուզա ծանոթանա, կհարցու առաջին աղջկան.

— Օրիո՛րդ, քո անունն ինչ ա:

Աղջիկը կըսա.

— Իմ անունը Իմ Նման ա:

Մյուս աղջկան կհարցու, աղջիկն կըսա.

— Իմ անունը Ընձնից Բեթար ա:

Երրորդ աղջիկն կըսա.



— Իմ անունը Հուր Խաղամ ա:

Բոստանչու խորամանկ աղջիկներն թաքավորին լավ կխմցուն, կքնցուն, հերեսներ կեսն կթրաշին, կեսն կթողին, գլխի մազերու կեսն կխուզին, կեսն կթողին էդենց փրչոդ, ու օսկիներ կառին, կթողին կերթան իրանց տուն:

Առավոտ թաքավոր գելնի քնուց, կտենա, օր ոչ աղջիկներ կան, ոչ օսկին: Ըդեղ թաքավոր գլխու գնգի ու կվազի վեզրի մոտ.

— Իմ Նմանին տեսա՞ր:

Վեզիր զարմանալով կըսա.

— Վա՛յ, ես քու նման ըսկի չեմ տեսե:

Թաքավոր էլի կհարցու.

— Ընձնից Բեթարին տեսա՞ր:

Վեզիրն էլի կզարմանա, կըսա.

— Վա՛յ, թաքավորն ապրած կենա, օր քու նմանին չեմ տեսե, քեզնից բեթարին հո՛ր տենամ:

Թաքավորն էլի կհարցու.

— Բա Հուր Խաղամն հո՛ր ա.

Վեզիրն էլի զարմացուկ կըսա.

— Վա՛յ, թաքավորն ապրած կենա, իդա լեն ու բոլ բաղերը, իդա լեն ու բոլ դաշտերը տեղ չկա՛, օր դու էթաս խաղաս, օր ընձի կհարցուս:

———————

Բոստան — *բանջարանոց*

Գդուգ — *գտած*

Գիքա գնցի — *կգա կանցնի*

Բաղ — *այգի*

Ընձնից բեթար — *ինձանից վատթար*

Հուր խաղամ — *որտեղ խաղամ*

Պուդուկ — *կճուճ*

Հուրի փերի — *գեղեցիկ, չքնաղ*

Իդա — *այս*





ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԱՐԱԳԱՎԱԶԸ, ԱՄԵՆԱԳԵՐՆ ՈՒ ԱՄԵՆԱՔԱՂՑՐԸ

Ժանքսի վախտն ա ըլում: Մի քյասիբ մի թայ եզն ա ունենում, քինում ա մի հարստից մի թայ եզն ա վեր ունում: Պիրում ա էս քյասիբ մարթը, ցանքսը անում ա, էլ ետ եզը տալիս ա հարուստին: Անցնում ա մի վախտ, էս հարուստի եզը սատկում ա: Էս հարուստը գալիս ա էս քյասիբի մոտ ու ասըմ ա.

— Իմ եզը տուր, դու ես մեղավոր, որ իմ եզը սատկել ա, ո՛վ գիտի ինչ էս արել, որ հայվանը ոտները տնգել ա:

Վերջը էս հարուստը գնում ա դատարան բողոքի, թե թող քյասիբը մի եզ տա ինձ: Դատավորն էլ ասըմ ա.

— Մի հանելուկ կասեմ, որըդ քթնի, նա էլ դատը կշահի:

Ասըմ ա.

— Աշխարհքի արագավազը ինչն ա, աշխարհքի չաղը ինչն ա, աշխարհքի ամենաքաղցր բանը ինչն ա: Իրեք օր ձեզ ժամանակ, իրեք օրից էլեդ կգաք:

Էս քյասիբը գնըմ ա տուն, տխուր նստըմ օջախի մոտ ու սկսըմ փետով կրակը խառնել: Էս քյասիբն էլ մի սիրուն, խելոք աղչիկ ա ունենըմ: Էս աղչիկը որ տենըմ ա հերը կրակն ա խառնըմ, հարցնըմ ա.

– Ա՛ հեր, ինչ ա ըլել, խի՞ էս տըհե անհանգիստ:

Հերը աղչկանը պատմըմ ա: Աղչիկը հորը ասըմ ա.

— Ա՛ հեր, դարդ մի անի, քնի, իրեք օր եդը վեր կկենաս, կգնաս դատավորի մոտ ու կասես պատասխանը:

Իրեք օրը որ թամամում ա, աղչիկը հորը հանելուկի պատասխանը ասըմ ա ու ղարկում դատավորի մոտ: Դատավորը ասըմ ա.

— Դե՛, ասեք տենամ, ո՞րն ա ամենաարագավազը, ո՞րն ա ամենաչաղը, ո՞րն ա ամենաքաղցր բանը:

Էս հարուստը ասըմ ա.

— Դատավոր ջան, էտ քու հասարակ հարցերի պատասխանը էս ա. ամենաարագավազը ձին ա, ամենաչաղը խոզն ա, ամենաքաղցրը մեղրն ա:

Հմի էլ դատավորը քյասիբին ա հարցնըմ: Քյասիբը ասըմ ա.

— Աշխարհքի ամենաարագավազը միտքն ա, ամենաչաղը հողն ա, ամենաքաղցրը քունն ա:

Ըստի դատավորը ասըմ ա.

— Ապրես, դու գտար:

Էսպես քյասիբը ուրախ-ուրախ ետ ա գալի իրա տուն:

———————

Վախտ — *ժամանակ*

Թայ — *կենտ, զույգի մեկը*

Պիրել — *բերել*

Էլեդ — *նորից*


Ղարկել — *ուղարկել*

Քյասիբ — *աղքատ*

Տըհե — *այդպես*

Ոտները տնգել — *սատկել*

Թամամել — *լրանալ*



ՀՈՐ ՏԱՆ ԳԻՆԸ

Ի մարդ գուզա հուր տղին տուն առնի, որ բաժնա: Տղին կուղարկա տուն առնելու, կըսա.

— Կխարցուս, որ տուն խոր սարքուկն էղավ՝ կառիս, որ տղի սարքուկն էղավ՝ չառիս:

Տղեն կերթա, գիքա, կըսա.

— Ա՛յ խեր, էդ տունը տանտիրոջ խոր սարքուկն ա:

— Առա՛նք, — կըսա էս մարդ:

Կերթան, տուն կառին:

Էն մեկել տարին էս մարդը իր մեկել տղին կկարգա: Ասել ա՝ էս մարդուն համաշա վատ խարսներն ա ռաստ գիքան, գուզա էս տղին էլ բաժնա:

Տղին կըսա.

— Գնա քու համար տուն շուռ արի, որ խոր սարքուկն էղավ՝ կառինք, տղի սարքուկն էղավ՝ ձեն-ձու չանես:

Տղեն կերթա, գիքա, կըսա.

— Խոր սարքուկն ա:

— Առա՛նք, — կըսա էս մարդ

Մե հուրիշ մարդ էնդեղից գիելի, կըսա.

— Ա՛յ ախպեր, էդ ինչ հաշիվ ա, համաշա խոր սարքուկ տներն ա կառիս:

Էդ մարդ կծիծաղա, կըսա.

— Խոր սարքուկ խեզեր մանեթի գործ՝ որդին մե կոպեկի կիտա, հուր սարքուկ մե կոպեկի գործ՝ խեզեր մանեթի չիտա:

———————

Հուր — *իր*

Տուն շուռ արի — *տուն ման արի, տուն փնտրիր*

Ձեն-ձու — *ձայն-ծպտուն*

Կըսա — *ասում է*

Խոր — *հոր*

Համաշա — *միշտ*

Խեզեր — *հազար*

Ռաստ գիքան — *հանդիպում են*

ԽԵԼԱՑԻ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

Երկու եղբայր գնում են իրենցից մեկի համար հարսնացու փնտրելու: Շատ տեղեր են լինում, շատ աղջիկներ են տեսնում, բայց ոչ մեկին չեն հավանում: Մի անգամ գնում են մեկի տուն՝ աղջիկ տեսնելու: Տեսնում են, որ աղջիկը շատ գեղեցիկ է, բայց մի աչքը շիլ է: Եղբայրը եղբորը հասկացնում է.

— Տունը լավ տուն է, համա ծխնելույզը ծուռ է:

Աղջիկը կռահում է նրանց միտքը և ասում.

— Ծխնելույզի ծուռ լինելուն մի՛ նայեք, կարևորը, որ ծուխը ուղիղ է բարձրանում:

Եղբայրներին շատ է դուր գալիս աղջկա խելացի պատասխանը, և նրանցից մեկը աղջկան իրեն հարսնացու է ընտրում:

———————

* Փոխադրված է Համշենի բարբառից



ՔՆԿՈՏ ՊԱՀԱԿԸ

Լել ա մի թաքավեր: Էտ թաքավերը շարունակ հորսի քյնալիս ա ըլել իրան տղու հետ: Օրերից մի օր էս թաքավերի պահակը ըրազըմը տեհել ա, վեր թաքավերի տղեն խփվեց: Տա վեր ա կցել, քյնացել թաքավերի կուշտն ու ասել ա.

— Թաքավերը ապրած կենա, ըսօր տղիդ հորսի տանես վեչ, քշերիս կեշ ըրազ եմ տեհել:

Էտ թաքավերը սրա ասածին անգաճ չի կալել ու տարել ա: Հորսի տեղը հսնիլն ու թաքավերի տղի խփվիլը մին ա ըլել: Էս թաքավերը հորսիցը կյալիս ա ու, թքավերին ինչպես լայաղ ա, կանչըմ ա իր դահիճին ու հրամայում ա, վեր պահակին տանի ու ժողովրդի ըղաքին կլուխը թռցնի: Երբ վեզիրնին հարցնըմ են, թե. «Թաքավերը ապրած կենա, խի՞ ես կլուխը թռցնիլ տալի», թաքավերը ասըմ ա.

— Պահակը խի՞ ա քնել, վեր միել ըրազըմը տոիս տեհել ա խփված:

———————

Հորսի — *որսի*
Կուշտը — *մոտը*
Կեշ — *վատ*
Ըրազ — *երազ*
Լայաղ ա — *վայել է*
Ըղաքին — *առջև*



ԱՌԵՎՏՐԱԿԱՆՆ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՆ

Լինում է չի լինում, մի աղքատ գյուղացի: Այս գյուղացին ամբողջ օրն աշխատում էր, բայց հազիվ էր ծայրը ծայրին հասցնում:

Մի օր էլ, երբ տանը բոլորովին ուտելու բան չի լինում, երկար-բարակ միտք է անում, վերջը գնում է մի առևտրականի մոտ, նրանից հինգ ոսկի է պարտք վերցնում: Առևտրականը տալիս է, բայց պայմանով, որ երեք ամսից հետո գյուղացին տասը ոսկի վերադարձնի:

Երբ գալիս է ոսկին վերադարձնելու ժամանակը, առևտրականը տեսնում է, որ գյուղացին չի գալիս, ինքն է գնում նրա մոտ և սկսում գոռգոռալ ու վախեցնել նրան: Գյուղացին, ճարը կտրած, չի իմանում ինչ անի, սկսում է իր սիրած երգը երգել: Երգում է, հա՛ երգում, չի թողնում առևտրականը բերանը բացի ու խոսք ասի: Կատաղած առևտրականը գյուղացուն քաշ է տալիս կալվածատիրոջ մոտ՝ գանգատի: Գյուղացին շարունակում է իր սիրած երգը երգել: Պարզվում է, որ այդ երգը կալվածատիրոջ էլ ամենասիրած երգն է: Երբ որ լսում է գյուղացու երգը, տրամադրությունը բարձրանում է և սկսում է նրա հետ երգել: Առևտրականն ավելի շատ է կատաղում և գյուղացուն քաշ է տալիս թագավորի մոտ: Թագավորը հրամայում է գյուղացուն, որ առևտրականի ոսկիները ետ տա, թե չէ՝ գլուխը կտրել կտա: Գյուղացին այս անգամ էլ սկսում է իր սիրած երգը երգել: Դու մի ասի, ջահել ժամանակ թագավորը նույնպես շատ է սիրել այդ երգը, և հիմա էլ միտքն է ընկնում ու սկսում գյուղացու հետ երգել, ուրախանալ ու քեֆ անել: Վերջը թագավորը հրամայում է ծառաներին, որ առևտրականին տասը ոսկի տան, իսկ գյուղացուն ասում է.

— Դու որ այդքան լավ գիտես երգի ուժն ու գինը, ուրեմն, դու շատ խելոք ու հասկացող մարդ ես:

Եվ գյուղացուն դարձնում է իր նազիր-վեզիրը:

———————

* Փոխադրված է Համշենի բարբառից



ՉՈԲԱՆՆ ՈՒ ԱՇՈՒՂԸ

Ի աշուղ ճամփեննի գնալիս ռաստ ա գալի մի չոբանի: Իրան-իրան միտկ ա անում, թե սա վերու չոբան ա, մի զադ էլա գիդանալ չի, ես աշխարհ-աշխարհ ման եմ եկել, սրան զոռ անեմ, մի ոչխար պլոկեմ: Մոդիկանում ա չոբանին ու ասում.

— Չոբան ախպեր, արի ես քեզ մի հանելուկ ասեմ, թե գդնաս ոչ, ինձ մի ոչխար տաս:

Չոբանը համաձայնվում ա:

— Էն ինչն ա ինչը՝

Հինգ ախպեր մի հորի վրա պատ են դնում:

Չոբանը գդնում ա.

— Մլերը՝ գուլպա գործելիս:

Աշուղը մնում ա մատը բերանումը: Հըմի էլ չոբանն ա ասում.

— Մի հանելուկ էլ ես ասեմ, թե գդնաս ոչ, սազդ ինձ տաս:

Աշուղը միտկ ա անում, թե սա բռի չոբան ա, ինչ տի ասի, որ գդնամ ոչ:

Չոբանն ասում ա.

— Էն ինչն ա ինչը՝

Վրեն քսան ծակ ունի արած,
Քսանի միջովն էլ թել անցկացրած,
Բերած մի տեղ փթաթ տված:

Աշուղը միտկ ա անում, միտկ, գդնում չի: Չոբանն ասում ա.

— Աշուղ ախպեր, ես ամենահասարակ հանելուկն ասի, էդ ոնց ա՛ գդար ոչ: Հեսայ, իմ հագի տըրխնին են: Դե որ գդար ոչ, սազդ տուր:

Աշուղը ղաչանք, միննաթ ա անում, չոբանը սազն իրան ա տալի ու ասում.

— Էստունց եդը, էլ ասես ոչ, թե բռի չոբանը զադ չի գիդե:

———————

Ռաստ ա գալիս — *հանդիպում է*

Վերու — *վայրենի*

Մի զադ էլա — *ոչ մի բան*

Ջոռ անել — *ստիպել*

Տըրխնին — *տրեխները*

Ղաչանք — *աղաչանք*

Միննաթ անել — *խնդրել*



ԱԽՈՐԺԱԿԻ ԴԵՂ ՓՆՏՐՈՂԸ

Ի մարդ լսել էր, թե այսինչ քաղաքում կա Լոխման անունով բժիշկ, որը դեղ ու դարման է անում ախորժակ չունեցողներին: Վեր է կենում, որ գնա նրա մոտ: Ճանապարհին մտնում է մեկի տուն մի փոքր հանգստանալու: Տան տերը հյուրի համար առատ սեղան է բացում: Հյուրը մոտենում է սեղանին և առանց գլուխը բարձրացնելու սկսում է ուտել: Խեղճ տանտիկինը իր քունջ ու պուճախի ունեցածը բերելուց հետո գնում է հարևանների եղած-չեղածն էլ հավաքում-բերում է հյուրին կերակրելու: Բայց հյուրը չէր կշտանում և գլուխը կախ շարունակում էր ուտել: Տանտիրուհին ճարը կտրած մածուն շինելու տակառիկով թան է սարքում, նորից հյուրասիրում նրան: Հյուրը սա էլ է խմում և նկատելով, որ ոչինչ չկա ուտելու, սրբում է բեղերը:

— Մի քիչ էլ լիներ, կուտեի, բայց ինչպես առածն է ասում. «Ջվալը լցված տեղից են կապում», — ափսոսանքով ասում է նա և վերջին կում թանը կուլ տալով, ետ քաշվում սեղանից:

Հյուրը մի քիչ էլ նստելուց, սեղանին աչք ածելուց հետո վեր է կենում, որ գնա իր ճանապարհով: Տանտերը դիմելով նրան հարցնում է.

— Ամոթ չլինի հարցնելը, բարեկամ, ո՞ւր ես գնում այդպես շտապելով:

— Գնում եմ ախորժակի դեղ առնելու Լոխման հեքիմից, վերջին ժամանակներս ախորժակից ընկել եմ, վախենում եմ՝ սովից մեռնեմ:

— Լավ ես անում, — ասում է տանտիկինը, — բայց վերադարձին ուրիշ ճամփով որ անցնես, լավ կլինի, մենք հեռու երկրներ ենք գնալու, տանը ոչ ոք չի լինի:

———————

* Փոխադրված է Համշենի բարբառից



ՀԱՐՈՒՍՏՆ ՈՒ ՉՈԲԱՆԸ

Լել, չըլել, մե հարուստ մարթ ըլել: Ինչ ասես, որ չունենալ էտ հարուստ, համա աշխատանք ասված պանը չի իմանալ՝ինչ ի: Որ հեչ աշխատանք չանել, էտ մարթը հիվանդանալ: Ինչ ուտել, չուտել, տար հիվանդըթունը չանցնել: Իրանց կյեղի չոբանին մե օր հարցուցել.

— Չոբան ախպեր, էտ քո կերածն ինչ ի, որ տու էտքան առողջ ես, ես ախշըրքի տակ էլ պան չմնաց, որ չուտեմ, բայց էլ էն հիվանդն եմ:

Չոբանն ասել.

— Տու քո մե օրվա ուտելիքը վերց պե սարը, մե տեղ խաց կուտենք, ու ես պատասխան կտամ քո հարցին:

Հարուստն հըլել մե հարիր տեսակ պան վերցել ու հետը տանել սարը: Նստես են խաց ուտել: Չոբանը կաթը կթել, խացն էլ փրթել մեջը ու ուտել: Էտ հարուստն էլ իր պերածի մե մասն ուտել: Ուտելուց հետո էդ չոբանն ասել.

— Դե, դու քո ուտելիքն դիր մե տեղ, էթանք մե քիչ ման գանք:

Ինքն էլ կաթը կթել, տընել ախպրի աչքը: Էթաս են մե իրեք-չորս ժամ ման կյալ, էտ հարուստի շունչը կտրվել, չինալ քայլել, բայց չոբանի հեչ վեջը չի: Չորս ժամեն հետո իկյաս են ախպրի մոտ, տըսնաս են էդ չոբանի կաթը պաղե, սերն էլ տըվե իրեսը, համա էդ հարուստի ուտելիքը շոքը որ տվել ի, թթվե, փչացել ի:

Չոբանն ասել.

— Քյո հարցի պատասխանն էտ ի, քո կերածն, ա՛յ, ըտենց փչանալ քո մեջ ու քեզ հիվանդացուցել, քանի որ ուտելուց հետո տու չես աշխատել: Աշխատանքն ի մարդուն առողջ պահել: Եթե ուզես ես հիվանդ չըլել, չափավոր ուտես ու աշխատես:

———————

Տար — *նրա*

Կյեղի չոբան — *գյուղի հովիվ*

Վերց պե — *վերցրու բեր*

Ախպրի աչք — *աղբյուրի ակ*

Իկյաս են — *գալիս են*





ՊԱՆԻՐ ՕՏԻԼԸ

Ուն շատ հարուստ, բայց ագահ մարթ ա ինում, ուրան էլ մի դուքան ա ունում: Էտ հարուստը ուրան ծառաներին պանիր չի տալիս ուտելու, մինակ հաց ա տալիս ինում: Մին օր էլ նոքյարնին կռեվ են սարքում.

— Մեզ խե չես պանիր տամ, հիմնչ ա, մենք պանիր օտիլը գյուդում չենք:

Էս մարթը մին բանկա յա եր օնում, մեչը մի պատառ պանիր տունում, պենդ փակում, վեր կարան վեչ պյանան: Էս բանկան տունում ա մի տեղ, ասում.

— Սրանից ետը հացը կըքիցեք պանրի բանկին, հետո կօտեք:

Մի օր էլ էտ բուղազան վեչ կտրածը քինում ա օրիշ տեղ, պանիրն էլ պինդ փակում ա սնդուկումը: Վեր կյամ ա, հըրցընում ա.

— Բա էսօր հիմնչ եք կերալ:

— Հաց ու պանիր, — ասում են նոքյարնին:

— Վիյա, հունց թա, հունց էք կերալ:

— Հացը քիցա ենք սունդուկին կերալ, — ասում են նոքյարնին:

— Վիյա, ըրեվում ա, տյուք ինձանա ժուլիկ էք, — ասում ա դուքանի տերը:

———————

Դուքան — *խանութ*

Օտիլ — *ուտել*

Գյուդում — *իմանում*

Կըքիցեք — *կքսեք*

Ժուլիկ — *ճարտար, հնարագետ*

Նոքյարնին — *ծառաները*

ԹԱՔԱՎԵՐԸ

Լնըմ ա, չի ըլնըմ, մի թաքավեր: Խաբար ա կյալիս, վեր թաքավերի նոքարը մեռել ա:

Էտ երկրի ժողովուրդը վեր են կենում, ուխտերը պեռնում, իրանք էլ լավ պըտրաստվում, վեր քինան նոքարը թաղեն:

Հըղըցումը մի պառավ ա պտահում հու ասըմ.

— Ա՛ իմ ախպերտինք, էտ վերդե՞ղ եք քինում:

Սրանք ասըմ են.

— Թաքավերի նոքարը մեռել ա, քյում ենք թաղենք:

Պառավն ասըմ ա.

— Ախր թաքավերն ա մեռել, վեչ թա նոքարը:

Էտ ժողովուրդը լսիլին պես, ուզում են թա ուխտերը վեր ունեն հու ետ տառնան:

Պառավը զարմանըմ ա հու ասըմ, թա խի՞ են ետ տառնում:

Ժողովուրդը պատասխանում ա.

— Մենք էսքանը տանում ինք, վեր թաքավերը տենա, դե թաքավերը վեր կա վեչ, էլ տանում ենք վեր ո՞վ տենա:

———————

Խաբար — *լուր*

Նոքար — *ծառա*

Հըղըցումը — *ճանապարհին*

Վերդեղ եք քինում — *ո՞ւր եք գնում*

Հու — *ու, և*



ՆՈՔԱՐ ՍԻՄՈՆԸ

Ի մարթ, անըմը Սիմոն, մի ունևորի տուն նոքար ա քընըմ: Էտ տունը վենց վեր ընիծած ըլեր, խեղճ Սիմոնը վետը տնիլն էտ տան շեմքեփետեն ու էտ տանեն ամեն ինչ կորչիլը, քըչանալը մին ա ըլըմ: Օրերից մի օր, տրանց չալ հավը իրան ծուն կորցընըմ ա: Էտ մարթի իրեք հարսները էլ առանց էրգան-պարակ մտածիլու ասըմ են. «Էտ Սիմոնի արածն ա»: Էտ ասծու ըլավի եկածի լուզուն էլ պտտըմ չի, թե բալքի ասի. «Ես չեմ արել»: Վախըմ ա թե ասի, քացով տերը տա ու ասի. «Հայդա՛, մեջքտ տենամ»: Տրա հըմար էլ ինչ կորչըմ ա, ասըմ են. «Սիմոնն ա ըլել»: Տրա լեզուն էլ էտ վախտը հլեյի լալկած ըլի: Մի օր էլ կովն ա կոմըմը սատկըմ, հարսները էլետ ետ են տառնըմ ու ասըմ, թե. «Սիմոնն ա արել, էլ վեչ ով չի արել»: Էտ իրեք հարսիցը մինն էլա ըրեխա պիրիլիս չի ըլել, թե վենց ա ըլըմ, վենց չի ըլըմ, էտ հարուստի մեծ հարսը մի տղա յա պիրըմ: Չիմն էլ ուրախանըմ են, քեփ անըմ, մենակ էտ խեղճ Սիմոնն ա նստըմ պատի տակ ու լաց ըլըմ: Հարուստը կյալիս ա, վեր տենըմ ա, ասըմ ա.

— Խալխը ուրախանըմ ա, տնաշեն, տու եկել ես լաց ես ըլըմ:

Սիմոնը հա՛մ լաց ա ըլըմ, հա՛մ էլ ասըմ ա.

— Բա ինչ անեմ, վեր լաց չըլեմ, վախըմ եմ հարսներտ էլետ ասեն. տա էտ էն փասոնը կտրած Սիմոնի արած պանը կըլի:

———————

Շեմքեփետեն — *շեմից, շեմի փայտից*

Վենց վեր ընիծած ըլեր — *ոնց որ անիծած լիներ*

Ասծու ըլավի եկածի լեզուն — *աստծու կրակն ընկածի լեզուն*

Հլեյի — *կարծես*

Լալկած — *պապանձված*

Էլետ — *նորից*

Վեչ ով — *ոչ մեկը*

Մինն էլա — *ոչ մեկը*

Չիմ էլ — *բոլորն էլ*

Փասոնը կտրած — *այլանդակ*



ՇԱՇ ՂՈՆԱՂԸ

Ըն հետ մի մարթ քինում ա ուրան հինգերին տոն: Օտում ա, խմում, ուրուգնադեմին վեր ա կենում վեր կյա ուրանց տոն: Մըկ էլա եշում, տեսնում երգինքը տրաքեց, թօռը նի կալավ:

— Բահո՛, էլ հունց եմ կըրալու քյամ տոն, — ասում ա էդ ղոնաղը:

Տընատերը տենում ա էլ ճար չկա, ասում ա.

— Ա՛ հինգեր, էս թօռավը եր չես կենալու քինաս տոն, հունց անենք, գիշերը մնա մեր տանը, էլ վե՛ր օրվա հինգերունք ենք:

Վերջը էս ղոնաղը համաձայնվում ա:

Տընատերը մըկ էլ ուրան կընեկը զբաղվում են ուրանց կուրծերավը, մըն էլ եշում են, տեսնում՝ ղոնաղը կա վեչ:

Խիլա վախտան ենդան տեսան, ըհը՛, ղոնաղը լրիվ թրջած, ճյուր տյառած նի մտավ:

— Ա՛ մարթ, տոնդ շինվի, էս թօռավը ըշտե՛ղ ես քյացալ:

— Քյացալ եմ տանը ասալ, վեր թօռին դյարդա գիշերը մընալու եմ ծեր տանը:

———————

Շաշ — *հիմար*

Ղոնաղ — *հյուր*

Մըն հետ — *մի անգամ*

Հինգեր — *ընկեր*

Թօռը նի կալավ — *անձրևը սկսվեց*

Եշել — *նայել*

Խիլա վախտան ենդան — *բավական ժամանակ անց*

Ըշտե՛ղ — *որտեղ*

Քյամ — *գնամ*

Կա վեչ — *չկա*

Դյարդա — *պատճառով*



ԻՇԻ ՁՈՒՆ

Մի հլիվոր մարդ գնում ա քաղաք, տենում ա՝ բազարումը ձմերուկ են ծախում, մոդիկանում ա, թե.

— Ախպերացու, էս ինչ ա:

Էս ձմերուկ ծախողը տենում ա, որ միամիտ մարդ ա, ձեռ առնելով ասում ա.

— Իշի ձու ա:

Էս հլիվորն մտածում ա. «Մեր էշը սատկել ա, մի հատ առնում տանիմ, ինչ կլի՝ կլի»: Մի հատ առնում ա, տանում: Ճամփումը նստում ա, որ մըքիչ դինջանա, էս ձմերուկը թոլ ա ըլում, գնում մի քարի դիպչում, ջարդվում: Էդ քարի տակին մի նապաստակ ա ըլում, դա էլ էդ քարի տակիցը դուս ա գալիս ու փախչում: Էս նաչար հլիվորը եդնեն վազում ա ու ձեն տալիս.

— Քուռի-քուռի, քուռի-քուռի...

Նապաստակը փախչում ա, գնում: Էս մարդը փոր-փոշման տուն ա գնում, կնգանը պատմում.

— Բա՛, այ կնիկ, գլխիս օղբաթ էկավ: Մի իշի ձու առա, ճամփումը թոլ էլավ, քուռակը դուս էկավ, փախավ: Ինչքան վազեցի, հասա ոչ: Հենց վազեր, ոնց որ մի նապաստակ: Ափսո՛ւզ, կպահեինք, կվենձանար, ձմեռվա համար փետ կբերեի:

Կնիկն ասում ա.

— Ա՛յ մարդ, հետո կթողեիր կժերը վրին դնեմ, գնամ ախպրիցը ջուր բերեմ:

Էս մարդը կնգանը տալիս ա, ջարդում, թե.

— Տո՛ շան կնիկ, ես գնամ նաչար իշին փետ բարձեմ-բերեմ, դու էլ բեզարած-բեզարած տանիս ջուրը՛...

———————

Թոլ ըլնել — *գլորվել* Օղբաթ — *փորձանք*

Նաչար — *խեղճ*



ԹԵ ԻՆՉՈՒ ԵՆ ԿԱՎԵ ԱՄԱՆՆԵՐԸ ԾԱՆՐ

Կեղնի, չի էղնի, մե մարդըմ ու կնիգըմ կեղնի: Էսոնք քյասիբ կեղնին: Կնոջը շոր չի ունենա: Տեղ էրտալուց մարդը կնգան դնե կը կարասի մեջ և գլորե կը: Ճամփեն ռաստ գուկան ուրիշ մարդ ու կնգա: Ինոնք հարցնեն կը, թե ընչի գլորես կը կարասը: Էս մարդը կըսե, թե կնիգը շոր չունի, մտել ա կարասը: Էս մարդը գուզե իր քովի չթեն տա, որ էդ կնգան շոր կարեն, հագնի ու կարասեն ելնի: Կարասի միջեն կնիկը լսե կը ու կըսե.

— Սատին էլ չէ՝ չիթ. չէ մարդ, գլորե՛:

Ինոնք կերթան իրանց ճամփեն:

Հիմի կըսեն, թե կավե ամանները էդ կնգա երեսեն էն ըդման ծանդր:

———————

Չթեն — *չթից*

Ըդման — *այդպես*



ԱԿՌՈՒ ԱՂԻ ՔԻՆԱԼԸ

Ըն օր Ակռին եզնը եր ա օնում, քինամ Նախճավան: Եզնը աղն ա պեռնում ու քշում կյալիս ա: Կյալիս տեղ Ակռին, մըն թայ աղը ծախում ա, մնամ ա մըն թայը: Մըն թայն էլ քար ա պեռնըմ, վեր հավասար ինի: Ըստհենց պեռնած քինում ա տոն: Պըտահում ա մըն մարթը, էս մարթը հըրցնում ա.

— Ակռի՛, էդ եզանը էդ հի՞նչ էս պեռալ, ըդի ծանդրը:

Ակռին ասում ա.

— Ըղըրեղացե ըմ կյամ, մըն թայ աղը ծախալ ըմ, մըն թայն էլ քար ըմ ածալ, պեռալ եզանը:

Ասում ա.

— Ա՛յ տնաշեն, էդ խե՞ էս ըտհենց ըրալ, քարը տեն ածի, աղը կես ըրա, կեսը ածի մըն թայը, մըն կեսն էլ՝ էն մըն թայը: Եզանը հետի թիթև կինի:

Ակռին մտածում ա, վեր էս մարթը խելունք ա ասում, փռնում ա քարը տեն ածում, աղը կես անում, թիթև պեռնում եզանը: Քինում ա ու մտածում. «Վեր էս մարթը էսքան խելունք ա, տեսնամ քանի՞ վեչխար, տավար օնի»: Ետ ա տյառնում, հըրցնում.

— Ա՛յ մարթ, տյու վեր էդքան խելունք էս, քանի՞ վեչխար, կով, եզնը օնես:

Էս մարթը ասում ա.


— Ես մըն քյասիբ մարթ եմ:

Ակռին մտածում ա. «Թա էս մարթը վեր ինձանա խելունք ա, պա խե վեչխար չօնի, ես օնիմ. չէ, ես ուրանանա խելունք եմ»: Եր ա օնում աղը, նորից մըն թայը ածում, մըն թայն էլ քար ածում, եզնը քշում:

———————

Ղըրեղաց — *ալրաղաց*

Ուրանանա — *իրենից*



ՄՈՌԱՑԿՈՏ ՀԱՐՍԸ

Ի տղթվեցի փըսակվում ա, համա ըտա օզած ախճիկը շատ բեհուշ ա ինում: Շորվան վեր եփում ա, աման դոնում շիրեփը մըտան թըռնում, թողնում ա տըռանը: Շոնը կյամ ա շիրեփը լյուզ տամ: Էթ հարսը վեր տեսնում ա, շիրեփը լվանում ա, տանում տերտերի կոշտը, վեր օծի, հըլալվի: Էթ օյինը մի քանի հետ կյամ ա ըտրա կլոխը, ալա տանում ա տերտերի կոշտը, վեր հալալ անի:

Մեհետ ալ վեր էթ հարսը շիրեփը տանում ա տերտերին կոշտը օծիլի, տերտերն ասում ա.

— Ա՛յ օրթնած, դե վեր աման դոնում շիրեփը մըտաթ քցում ես, թողում տռանը, շոնը լյուզ ա տամ, էն վախտը պեր լիա մի յոնլուղ ծեր շանը դուդուռը օծեմ, էտ ցավաթ պըրծնենք:

———————

Տղթվեցի — *տաթևացի*
Օզած — *ուզած*
Բեհուշ — *մոռացկոտ, անուշադիր*
Շորվա — *ջրալի ճաշ*
Շոն — *շուն*
Աման դոնում — *ամեն անգամ*
Լյուզ տամ — *լիզում*
Յոնլուղ — *միանգամից*
Դուդուռ — *դունչ*
Մըտան թըռնում — *մոռանում*
Հըլալվիլ — *հալալվել, մաքրվել*
Օյին — *խաղ, փորձանք*
Ա՛յ օրթնած — *այ օրհնած*



ՀԵՌԱՏԵՍ ՄԱՐԴԸ

Ա մարդըմ իրիկունը շատ մտածմունքի մեջ կյնի: Կնիկը կըսե.

— Ա՛յ մարդ, ինչի՞ էտման թթվել ես, ինչ ա էղե:

Էս մարդը կըսե, թե դրկցի էշը առանց պոչի քուռիկըմ ա ծնե:

Կնիկը զարմանա կը ու կըսե.

— Դրկցի իշու համա՞ր էլ մարդ մտածե:

Էդ մարդն էլ, թե.

— Էսօր, էկվան, մեկել օր էտոնց քուռիկը որ մեծանա, լծեմ, ջաղաչ էրթամ, չամուռը որ խրվի, վերտից բռնեմ, որ դուս քաշեմ, ախր, պոչ չունի, է:


———————

Կյնի — *կընկնի*

Էտման — *այդպես*

Դրկցի — *հարևանի*

Չամուռ — *ցեխ*



ԶԱՐՄԱՆՈՒՄ Ե՛ՆՔ, ԶԱՐՄԱՆՈՒ՛Մ

Գեղացու մեկը վար կէնա: Էդ ժամանակ կտեսնի, օր էրկու ջահել էկան, նստան սարի գլխին ու կնայեն գեղացուն:

Իրար մեջ վճիռ կէնեն, թե իմալ եզան մեկը գողանան: Վճռելուց հետո էրկուսն էլ իրար հետ գոռում են, թե.

— Զարմանում ենք, զարմանում ենք...

Էս լսելով գեղացին գկանգնեցու լուծը: Էստեղ մե ընկերը կըսա մյուսին.


— Դու գոռա՝ «Զարմանում եմ», ես էլ էթամ եզը գողանամ:

Էսպես էլ անում են: Էդ ժամանակ գեղացին կմոտենա ու կհարցնա, թե.

— Տղեք, էդ ինչ ա էղե, որ զարմանում եք:

Նրանք էլ ասում են, թե.

— Զարմանում ենք, թե դու մե եզով իմալ վար կէնես:



ՄՈՒԿԸ ՄԿԱՆ ՀԵՏ ԽՆԱՄԻ ԿԼԻՆԻ

Լինում է, չի լինում, մի մուկ է լինում: Երբ որդուն ամուսնացնելու տարիքը գալիս է, ընկնում է մտատանջության մեջ: Մկան հետ խնամիանալ չէր ուզում, փնտրում էր մեկին, որ իրենից բարձր լինի ու իրեն էլ վերև քաշի: Երկար մտածելուց, չափելուց հետո որոշում է, որ արևից ուժեղը չկա և գնում է նրա մոտ՝ խնամախոսության: Երկար-բարակ խոսելուց հետո հայտնում է իր միտքը:

— Լավ ես արել, որ եկել ես ինձ մոտ խնամախոսության, համարելով ինձ աշխարհի ամենաուժեղը, — ասում է արևը, — բայց տեսնում ես այն ամպը, որին որքան աշխատեցի հեռացնել ու աշխարհը լուսավորել՝ չկարողացա: Բայց նրա հեչ պետքը չէ, տեղից չի շարժվում: Նա ինձնից ուժեղ է:

Մուկը տեսնելով ամպի փռված, անհոգ տեսքը, իսկույն իջնում է նրա մոտ:

— Մի բան եմ քեզ ասելու, — մոտենալով դիմում է մուկն ամպին:

— Չեմ կարող սպասել, դու ասելիքդ ասա, — վիզը ծռելով՝ ասում է ամպը:

— Եկել եմ քեզ մոտ խնամախոսության, իմ լսելով դու աշխարհի ամենաուժեղն ես:

— Լավ ես արել, որ եկել ես, — ասում է ամպը, — բայց տեսնում ես, թե ինչպես է քամին ինձ ուզած կողմը քշում: Նա ինձնից ուժեղ է:



Մուկը շտապում է քամուն հասնել և ընթացքի մեջ հազիվ կարողանում է հասկացնել իր գալու նպատակը:

— Իզուր ես կարծում, որ ես եմ ամենաուժեղը, — ասում է քամին, — տեսնում ես այն կաղնին, հինգ հարյուր տարի կանգնած է. փչում եմ, փչում, բայց տեղից չի շարժվում ու հեգնանքով ինձ է նայում: Նա ինձնից ուժեղ է:

Մուկը գնում է կաղնու մոտ ու ասում իր գալու նպատակը:

— Դու մուկ ես, իսկ մկներից ուժեղ աշխարհում չկա: Տես, ինչպես են արմատներս կրծել, շուտով կտապալվեմ, — հուսահատ ասում է կաղնին:

Մուկը զարմանում է ու գնում մկան մոտ՝ խնամախոսության:

———————

*Փոխադրված է Համշենի բարբառից:



ԽՄՈՒԿ ՄԿԱՆ ՊԱՅՄԱՆԸ

Մե խատ գեժ մուկ վախից կփախի, գելի կնստի կարսի պռնկին, խոտ կառի, կքեֆովնա, գընգի մեչը: Մուկը, խեխտվելով, կաղաչա աստծուն.

— Աստված ջան, էտ ինչ կրակի մեջ թալիր ինձի: Ես էս եքա գինու կարասի մեչ պըտի խեխտըվիմ, մկա մե կատվու բաժին էլ չարժիմ: Հոմր ա, կատուն ընձի ուտեր, քան թե անտեղի կուրսիմ գինու ծովի մեչ:

Էտ ըսելու վախտը որտեղից-որտեղ մե խատ չալ կատու կարսի պռնկից ձեն կիտա.

— Մըկա որ քեզի խանեմ, կըթողես քեզի ուտեմ:

— Մենակ էտ ձևի լավություն էրա, ընձնից քեզի մեծ լավություն կէղի:

Կատուն թաթը կըթալա, մկան կարսից կըխանա, կըթողա, օր մե քիչ սարվոտի:

Մուկ, դու մուկ, էղիս, մըտիս ծակը: Կատուն վիզը կըծըռա, կիշկա, կիշկա, կըսա.

— Բա ինչ էղավ մեր սուրբ պայմանը:

— Դու էլ բան ըսեցիր, — վրա կբերա մուկը, — խմուկ վախտըս մե բան էր՝ ըսեցի, կըրակ հընգամ:

———— ————

Խմուկ — *խմած, հարբած*
Խոտ — *հոտ*
Կքեֆովնա — *կհարբի*
Եքա — *մեծ*
Հոմր ա — *ոմր է*
Կուրսիմ — *կորեմ*
Սարվոտի — *չորանա*
Կիշկա — *նայում է*



ԷՇՆ ՈՒ ԳԵԼԸ

Մի գել ինգյավ էծի իտեվեն, որ պռնի: Բայց էծը պանցրացավ մե պանցր տեղ, վարտեղ վնաս չկար: Գելը պախկվավ ցածը: Ընցավ մի քյանի օր, վերջը՝ գելը շատ քաղցըցավ, էծն էլ ծարավավ: Երկուսն էլ կնացին տարբեր ուղղություններով. գելը կնաց, որ ուտելիք ճարի, ետով էծը, որ ճուր խմի: Էծը ճուր խմելու վախտը ուր սուրաթը տեսավ ճրի մեջ, ասեց.

— Էտ ինչ խորոտ պոզեր ունեմ: Ես գելին կհաղթեմ, չեմ թողնի, որ ինձ ուտի:

Գելը իտեվեն էտ հմենը լսեց ու ասաց.

— Էծ ախպեր, էտ ինչ ես խոսում:

Էծը տեսավ, որ նեղն է ինգյե, ասաց.

— Ա՛խ, գել ախպեր, խղճա ինձ, էծերը հմեն ըտենց են, որ խմես են, իրանցը կորսես են:

———————

Սուրաթ — *դեմք, պատկեր*

Պախկվել — *պահվել, թաքնվել*

Որ խմես են, իրանցը կորսես են — *որ խմում են, իրենց կորցնում են*

Քաղցըցավ — *սովածացավ*

Վարտեղ — *որտեղ*



ՋԱՆԱՎԱՐՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Մ ըն օրի աղվեսը քինում ա ջանավարին կոշտը, ասում ա.

— Ախպեր, ինձ հեյվան ցրեվ տալ սուվուրցուրու:

Ջանավարն ասում ա.

— Ե՛ք քինանք, տես թա հունց եմ հեյվան ցրեվ տամ:

Եշում են տեսնում, հեն ա, մըն եզնը հանդումը ըրածում ա: Ջանավարն ասում ա.

— Եշի՛, մհեկ ցրեվ եմ տալու: Տե՛ս, մազերս բիզ-բիզ կաղնե՛ց:

— Հա՛:

— Տե՛ս, աշկերս կրմրոտե՛ց:

— Հա՛:

— Տե՛ս, հաքյուս քինում ա, կյա՛մ:

Ասում ա.

— Հա՛:

Ջանավարը լոք ա տամ, եզանը փորը ցրեվ տամ: Սկսում են ինքն ու աղվեսը օտիլ: Աղվեսը քուշտանում ա, ասում.

— Ես արդեն սուվերեցի, քինամ ես էլ մըն քանինը ցրեվ տամ:

Աղվեսը կյամ ա ուրան հնգեր աղվեսին ասում.

— Ե՛ք քինանք, տես հունց եմ հեյվան ցրեվ տամ, սուվերի:

Քինում են, քինում, տեսնում են մըն ճորի: Մուտանում են, աղվեսը ասում ա ուրան հնգերին:

— Ի՛նձ եշի, տես, աշկերս կրմրոտեց:

Ասում ա.

— Չէ:

Ասում ա.

— Տու ասի՝ հա՛:

— Հա՛:

— Տես, հաքյուս քինում ա, կյա՛մ:

Ասում ա.

— Չէ:

— Տու ասի՝ հա՛:

— Հա՛:

— Տես, մազերս բիզ-բիզ կաղնեց:


Ասում ա.

— Չէ:

— Տու ասի՝ հա՛:

— Հա՛:

Աղվեսն ասում ա ուրան հնգերին:



— Դե եշի, մհեկ ցրեվ եմ տալու:

Աղվեսը լոք ա տամ, վեր ճորան ցրեվ տա՝ ճորին քացի ա տամ ճկատին՝ պարան տամ: Էս դոնում հնգերը մուտանում ա, ստակուղ աղվեսի ընջուկին ասում.

— Հինչ վեր օգում իր, մհեկ կա՝ աշկերդ էլ ա կրմրալ, մազերդ էլ ա բիզ-բիզ կաղնալ, հաքյուտ էլ քինում ա, կյամ:

———————

Ջանավար — *գայլ*

Կոշտը — *մոտ*

Ցրեվ տալ — *պատառոտել*

Եշի — *նայիր*

Մհեկ — *հիմա*

Ճորի — *ջորի*

Հաքյու — *պոչ*

Լոք տալ — *ցատկել*

Պարան տալ — *վայր գցել*

Էս դոնում — *այս անգամ*

Ընջուկին — *ականջին*



ԳԵԼՆ ՈՒ ՁԻՆ

Մի անոթի գել կհանդիպի ձիուն, կուզա էդ ձիուն ուտա, էդ ձին կասա.

— Ա՛յ գել, ես շատ ծեր եմ, ընձի մի կեր, էն ա՝ չոլն մե հատ ջայել քուռակ կա, գնա՛, ընդոր կեր:

Էս գելն կասա.

— Իմա՞լ հավատամ, որ դու ծեր ես:

Ձին կասա.

— Իմ ոտի տակ իմ տարիքն գրուկ ա:

Գելն կերթա մոտիկ, որ կարթա, ձին կըխփա գիլու ճակտին, գիլու հաչկերուն կանաչ-կապուտ կերևա: Գելն կասա ինքն իրան. «Ա՛յ անխելք գել, քո պապերուց մինչև մկա ղասաբ ես հեղե, հմի ինչ գործ ունես գիր ու գրականության հետ»:

———————

Չոլ — *դաշտ, ամայի տեղ*

Ղասաբ — *մսագործ*

Իմալ — *ինչպես*

Հեղե — *եղել*

Մկա — *հիմա*



ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

Լել ա, ըլել չի, մի իմաստուն Սողոմոն ա ըլել: Էտ Սողոմոնը իրա մոտ ա կանչում թաքավորին, իրա իմաստուն գաղտնիքները նրա առաջ բաց անելու: Թաքավորը ճանապար ա ընկնում Սողոմոնի մոտ: Ճանապարին առաջինը տենում ա մի ջրաղաց: Էտ ջրաղացը ցորենը աղում ա, ալյուրը ջուրը լցում: Թաքավորը բան չի հասկանում էտ ջրաղացից: Շատ ա գնում, թե քիչ, տենում ա՝ երկու եզը մի գերան են քաշում. մեկը աջ ա քաշում, մյուսը՝ ձախ, գերանն էլ տեղից չի շարժվում: Էլի թաքավորը բան չի հասկանում: Շատ ա գնում, թե քիչ, տենում ա, որ մի վանքի գլխից փուչ պոպոքներ են թափում. նորից թաքավորը բան չի հասկանում: Վերջը, շատ ա գնում, թե քիչ, հասնում ա իմաստուն Սողոմոնի մոտ:

— Թաքավորը ապրած կենա, ճանապարին ինչ տեսար, — հարցնում ա Սողոմոնը:

— Ինչ տեսա-չտեսա, ոչ մի բան չհասկացա, — ասում ա թաքավորն ու պատմում իրա տեսածները:

Իմաստուն Սողոմոնը սկսում ա թաքավորին մին-մին բաց անել իրա գաղտնիքները:

— Էն որ ջրաղացը աղում ա, իսկ ալյուրը ջուրը տանում ա, էտ թաքավորն ու ժողովուրդն են. ժողովուրդը աշխատում ա, թաքավորը ծախսում, ջուրը ածում: Երկրորդը, էն որ երկու եզը մի գերան են քաշում տարբեր կողմեր, էտ էլ ա թաքավորն ու ժողովուրդը. եթե մի երկրում համերաշխություն չլինի, էն երկրում գործը առաջ չի գնա: Իսկ երրորդը, որ վանքի գլխից փուչ պոպոք են թափում, էտ էլ ա թաքավորն ու ժողովուրդը. թաքավորները կգան-կգնան, համա ժողովուրդը վանքի նման հաստատուն կմնա: Էս են իմ իրեք գաղտնիքները, բա աշխա՛ր ես ղեկավարում էդպես փուչ գլխո՛վ:



ՍՈՂՈՄՈՆ ԻՄԱՍՏՈՒՆՆ ՈՒ ԲԻԶԵՆ

Սողոմոն իմաստունը ճամփով հնցնելու ա հլնում, տենում ա մե գեղացի բիձա ծառ ա տնգում: Սողոմոն իմաստունը հարցնում ա բիձուն.

— Որ տնգում ես, կուտե՞ս:

Բիձեն պատասխանում ա.

— Տնգել են՝ կերել եմ, տնգում եմ, որ ուտեն:

Սողոմոն իմաստունը տենում ա, որ էտ մարթը խելոք ա էրեվում, էլի հարց ա տալում.

— Ջրաղացից իմա՞լ ես: (Ջրաղաց բերանին ա ասում):

Բիձեն պատասխանում ա.

— Ջրաղաց կա, քար չկա: (Գյիվա թե՝ բերան կա, համա ատամ չկա):

Սողոմոն իմաստունը մեկել ա հարցնում.

— Բա աշխատանքդ հո՞ր ա:

Բիձեն պատասխանում ա.

— Ես աշխատեցի, խալխը տարան: (Բիձեն աղջիկ ա ունեցել ու մարթի տվել):

———————

Գյիվա — *իբր, այսինքն*



ՄԱՆԳԱՂ ՇԻՆԵԼԸ

Մ հետիս, մըն մարդ կյամ ա նալբանդ Պետունց Արշակին կուշտը, ասում ա.

— Արշա՛կ, ինձ հետի մըն օրաղ շինի, օրաղս կոտրալ ա, գործս կիսատ ա մնացալ:

Նալբանդ Արշակը, թե.

— Ժամանակ չօնեմ, ա՛յ մարդ, օրիշ գործ եմ անում:

Էս մարդը ասում ա.

— Տնաշե՛ն, օրաղ շինիլը հի՞նչ ա, մըն արկաթ ա, ծռում ես, մըն ղօլը սրում, տյառնում ա օրաղ:

Նալբանդր ասում ա.

— Հարևա՛ն, տյու հետա շինեցիր օրաղ, երկալ քինա:



———————

Մհետիս — *մի անգամ*
Օրաղ — *մանգաղ*
Նալբանդ — *պայտառ*
Արկաթ — *երկաթ*
Ղօլ — *կողմ*
Ինձ հետի — *ինձ համար*
Երկալ քինա — *վերցրու գնա*
Հետա — *այդ է, արդեն*

ՇԱՊՈՒՀ ԱՐՔԱՆ ՈՒ ԴՐԱՄ ԿԵՂԾՈՂԸ

Ին Պարսկաստանում մե խատ հայ մարդ կկեղծա պետական դրամն: Կկասկածեն էտ հայու վրեն ու կբանդարկեն: Դատն կլսին Շապուհ արքայի ատյանում: Որոշում կընդունեն՝ հայուն կախելու համար: Վերջին խոսքըն կիտան հայուն: Հայն էլ նստուկ տեղից հանգիստ գելի կայնի ու կխարցու.

— Արքա՛, իմ ո՛ր մեղքի խամար ընձի կախեք:

Արքան կըսա.

— Մեր պետական դրամն կեղծելու խամար: Դու կտենաս, օր մեր դրամի վրեն նկարուկ ա ձին հառեչ, իսկ դու սխալմամբ նկարել ես քուռիկն հառեչ, ձին՝ հետև:

Էտ վախտ հայն կիտա հուր երկրորդ հարցըն, թե.

— Արքա՛, դու քու ջեյել վախտ ըսկի քուռիկ ունեցող ձի նստած կա՞ս:

— Այո՛, շատ ա պատահել:

— Եփ հելեր ես ամառանոցներ, կանաչ դաշտում պատահե՞լ ա, օր քուռիկն ուրխըցե, տռճկացե ու հնգե մորից հառեչ:

— Էտ էլ շատ ա պատահել, — պատասխանում ա Շապուհ արքան:

— Դը՛ մկա էլ դրամի վրեն քուռիկն ուրխըցե, տռճկացե, հնգե մորից հառեչ, ես էստեղ ի՞նչ մեղք ունիմ:

Շապուհ արքան կըմտածա ու կըսա, օր հուրանք սխալ ա կդատեն: Իմալ մկավա ջեյելներ ծերերուց հառեչ ա կվազին:

———————

Գելի — *ելնում է*

Ջեյել վախտ — *երիտասարդ ժամանակ*

Տռճկացե — *թռչկոտել, ցատկոտել*

Մկավա — *հիմիկվա, այժմյան, ժամանակակից*

Հուրանք — *իրենք*

Հուր — *իր*




ՓԱՆՈՍԸ

Օրերից մի օր Փանոսը ընկերների հետ գնում ա գողության: Գիշերվա կես էր, հասնում են գողության վայրը: Հիմի պիտի բարձրանան երկրորդ հարկ, որ գողություն անեն: Փանոսը վախենում ա բարձրանա, մյուս ընկերը չեմ ու չում ըրավ, մյուսն էլ վախեցավ բարձրանա երկրորդ հարկ: Վերջը, երեքով կպան իրանց էն մյուս կորած-մոլորած ընկերոջը, թե՝ դու պիտի բարձրանաս: Էս ընկերը մի քիչ չեմ ու չում ըրավ՝ երկրորդ հարկը բարձր ա, կարալ չի բարձրանա: Վերջը համաձայնվեց, բարձրացավ երկրորդ հարկի պատշգամբը, ուզում էր տուն մտներ, էս Փանոսը ըսկսեց ներքևից գոռալ.

— Ադա՛, բա ասում ես՝ չեմ կարա, ադա՛, բա ասում ես՝ չեմ կարա, ադա՛, բա ասում ես՝ չեմ կարա, տեսա՞ր, որ կարացար...

Էս ձենի վրա տնեցիք արթնանում են և լսելով Փանոսի գոռգոռոցը, բռնում են գողերին ու մի լավ ջարդում:



ՉՈՒՏԸ

Որ գեղն է էղե՝ չեմ ըսե.. Մե թամբալ մարդըմ կէղնի, ամեն գարուն ըդօր զոռով, կռվով կնիկը արդը վարել կուդար:

Մե անգամ էս մարդը, գարնան գլուխ իրա չուտը առած կերթա արդը վարելու, ու էդ վախտ ամբերը կճվան, թեզ անձրև գուկագը ու մե սև ամբըմ կնստի ըդօր արդի վրա: Մեկ էլ կալրգի հետը տանի, չուտը կպայե ամբի տագը ու գուկա տուն:

— Ա՛յ մարդ, ոՒրտեղ ա չուտը, — կհարցնե կնիկը:

— Պայել եմ, ղայդին տեղ էր, — կիպարտնա էս մարդը:

Անձրևն օր կտրիգը, կերթա գործը շարունակելու, չուտը չի գտնի: Ամբերը ցրվել են, աչքը ծակ մարդն էլ գոխցել է, ու կսենգը օր մինչև հըմի կնիկը մարդու հետ կռվիգը ու չուտը գուզե... Էն մարդն էլ ուրդեղ մե սև ամբըմ կտենա, կերթա տագը ման գալու, ու մինչև հըմի ման գուկագը...

———————

Չուտ — արոր


Թամբալ — ծուլ

Կուդար — կտար

Թեզ — արագ, հորդ

Կալրգի — ալարում է, ծուլանում է

Ղայդին — կարգին





ԱՇՈՒՂ ՉԻՉԱԳՆ ՈՒ ՀՈՏԱՂՆԵՐԸ

Աշուղ Չիչագ անունով մե աշուղ ա ըլնում: Մե օր հեծնում ա իրա դանան, էթում ա Վան՝ աշուղության մեջ մրցի: Ճանապարհին հանդիպում ա հոտաղների: Բարև ա տալի, տղաներ ասում են. «Աստծու բարին, աշուղ Չիչագ»: Աշուղը զարմանում ա.

— Ի՞նչ եք իմանում, որ ես աշուղ Չիչագն եմ:

Հոտաղները ասում են.

— Էդ դանան որ նստել ես, մենք էլ իմանում ենք, որ աշուղ Չիչագն ես, մեզի մեր ծնողներն են ասե:

Էստեղ մե հատ հոտաղ ասում ա.

— Մե հանելուկ ասեմ՝ կհանես, աշուղ Չիչագ:

Ասում ա.

— Ասա տենամ:

— Էն ինչ թռչուն ա, մեկ քիթ ունի, քառասուն աչք:


Աշուղն շատ ա մտածում, չի կարում հանի, հետ ա դառնում, գալիս տուն, կնգան հարցնում.

— Կնիկ ջան, էտ ինչ թռչուն ա, մեկ քիթ ունի, քառասուն աչք:

Կնիկն ասում ա.

— Էդ ոտիտ տրեխն ա:

Չիչագը դառնում ա հոտաղների մոտ, ասում ա, որ տրեխն ա:



Հոտաղները ասում են.

— Մե հանելուկ էլ ասենք, կհանես:

Չիչագն ասում ա.

— Ընչի՞ չեմ հանի որ:

— Էն ինչն ա, ինչը, — ասում ա հոտաղ տղեն, — որ ոչ գետնին ա, ոչ երկնքումը:

Չիչագը էս էլ չի կարում հանի, մեկ էլ ա հետ գնում տուն, բոլորը պատմում կնգանը: Կնիկը հարցնում ա.

— Էդ հոտաղները ինչ էին անում:

— Գոմեշներն էին Վանա ծովու մեջ լողացնում, — ասում ա Չիչագը:

Կնիկը ասում ա.

— Էդ գոմեշներն են ծովում, որ ոչ ոտներն ա գետնին առնում, ոչ էլ երկնքում են:

Էլ աշուղ Չիչագը տնից դուրս չի գալի, ասում ա.

— Էդ որ Վանա հոտաղներն են էդքան խելոք, էլ ես ո՛ւր գնամ աշուղության մեջ մրցելու:

———————

Աշուղ Չիչագ — ըստ ավանդության խառակոնիսցի Նահապետ Քուչակն է:

Դանա — մոգի, հորթ



ՈՐՍՈՐԴԸ

Լինում է, չի լինում, մի որսորդ է լինում: Վերցնում է հրացանն ու գնում որսի: Վաղ առավոտյան մի նապաստակ դուրս էր եկել շրջելու: Որսորդը հրացանն ուղղում է նապաստակի վրա ու ինքն իրեն խոսում. «Կսպանեմ նապաստակը, միսն ու մորթին կծախեմ, մի թուխս կգնեմ, մանր ճտերով: Երբ ճտերը մեծանան, թուխսը ճտերի հետ կծախեմ ու մի էշ կգնեմ, էշով փայտ կտանեմ քաղաք ու կվաճառեմ: Երբ մի քիչ գումար հավաքեմ, էշն էլ կծախեմ ու մի ձի կգնեմ: Հավաքածս փողերով խանութ կբացեմ, առևտուր կանեմ և, երբ մեծ գումար հավաքեմ, ագարակներ կգնեմ, բոստան կցանեմ: Երբ ձմերուկն ու սեխը հասունանան, պահակ կվարձեմ, որ գողերից պաշտպանեն, ու ինքս էլ մեկ-մեկ գողտուկ կգնամ ու հանկարծ կկանչեմ.

— Էհեյ, անբաններ, լավ հսկեցեք...»:

Նապաստակը, լսելով նրա ձայնը, նետվում է թփերի մեջ ու անհետանում:

———————

* Փոխադրված է Համշենի բարբառից



ԱՐՋՆ ՈՒ ՄԱՐԴԸ

Մի անգամ արջն ու մարթը հընգերացան: Շատ ըն ապրալ, թե քիչ, մի օր մարթը արջին ասում ա.

— Արջ ախպեր, քու տմբտմբալեն ման կյալը դուրըս չի կյալի:

Արջը եր ա օնում, ասում.

— Մարթ ախպեր, խանչալով տուր կլխիս:

Մարթը տամ ա արջի կլխին, ճղում: Արջը թողում ա, քյնըմ:

Օրերից մի օր մարթը հանդիպում ա արջին, հրցնըմ ա.

— Արջ ախպեր, կլխիտ յարան հոՒնց ա:

Արջը պատասխանըմ ա.

— Կլխիս յարան լավացալ ա, ամա քո ասած խոսքի յարան չի լավանում:

———————

Եր օնել — *վերցնել*

Խանչալ — *դաշույն*

Յարա — *վերք*

Հունց — *ինչպես*



ՕՐԹՄԱ

Մարդու մեկը գարնան գլոխ օրթմա է շինըմ:
Ժողովուրդը հարցնըմ է.
— Ա՛յ մարդ, ինչըղ էղավ օր օրթմա շիքեցիր:
Էդիգ էլ, թե.
— Առաջը աշուն է գալըմ:
Աշուն օր գալըմ է, օրթման քանդըմ է:
Ժողովուրդը նորից է զարմանքով ըսըմ.
— Էդ ինչըղ էղավ օր օրթման քանդեցիր:
Մարդը, թե.
— Առաջը գարուն է գալըմ:

———————

Օրթմա — *նախամուտքի ծածկ՝ մուտքը անձրևից և ձյունից պաշտպանելու համար, նաև՝ չարդախ, պատշգամբ:*



ԱԲԼԲՈՒՀԱՐՑԻ ԱԼՈՆ

Ուեր էրգիր շադեր գինեն Բուլանըխի Աբլբուհար գեղի փահլևան Ալոյի պատմուտեն:

Իմ հորոխպեր տեսեր էր ընդրան ու շադ բան կպատմեր Ալոյի մասին:

Մե անգամ իրեք հատ ուժեխ մարթ գիկան ու կկայնին գեղի մեջտեղ, ձեն կիդան, կըսին.

— Է՛ հեյ, աբլբուհարցիք, ձեր մեջ մե ուժեխ մարթ չկա՞, գա մեր հետ գուլաշ կպնի, կանչեք թող իգա, թե չէ՝ կելնինք կքանդինք ձեր տուն ու տեղ:

Է՛, ով գիշխներ, տան դռնից գլոխ հաներ: Էդ իրեք մարդիկ կելնին, ծառեր քոքահան կէնին, դռներ կպոկին, հանդիպած մարդուն կվերուն ու կզարգին գեդին:

Հավար կըքցին, ձեն կերթա կհասնի Ալոյին: Էնի լե ուր հարդ կվարեր: Ալոն (իսկական անուն Ալեքսան կեղնի) , գիկա կտեսնի, օր էդ իրեք ազրայիլ մարդ ավերակ ա գործաձ, քարուքանդ ա էրաձ, դռներու մոդ քանիմ ջանդագ ընգուգ ին:

Ալոն թևեր կըքշտե, կընգնի մեջտեղ, կըգրկե էդրոնց, կբռնե, գեղից կտանե դուս ու շպրտե հեռու:

Դու մի ըսա, ըդրանք սուլթանի փահլևաններ կէղին: Կերթան հմեն բան կգանգատվին սուլթանին: Սուլթան կկարգադրե, թե բդի էրթաք Աբլբուհար գեղ ու Ալոյին բռնիք, բերիք:



Գիկան, կհասնին գեղի մոտ, կտեսնին, օր մե մարդ վար կէնե, կհարցուն.

— Աբլբուհար գեղ հեռո՞ւ է էստեղից:

Ալոն ձեռ կթալե մանջբուռ, արոր կբանձրցու, կմեկնե հառեճ ու կըսե.

— Հանա՛ ձեր ուզած գեղ, ընչի՞ կերթաք:

— Ալոյին բռնինք, տանինք...

— Ալոյի՞ն, էդի ես եմ, ըսեք ընչի՞...

— Սուլթանի ֆերմանով:

Ալոյին կտանին, կհասցուն սուլթանի պալադ: Սուլթան կընդունե ու կըսե.

— Ալո՛, անիրավ մարդ, դու իմ իրեք փահլևանին խայդառագ իս էրե, մկա քու հետ գիկան մրցելու իմ եռսուն փահլևաններ, թե զարգեցիր գեդին, ազատ իս, թե չէ՝ քու գլոխ կըկդրիմ:

Ալո, դու Ալո, եռսունին լե գեդին կզարգե, գիկա կըկայնի սուլթանի հառեջ:

— Ըսե, Ալո՛, ինչ գուզիս իդամ, օր մնաս իմ պալադ:

— Թաքավոր ապրաձ կենա, ես իմ գեղից չըմ փախնի, երբ քեզի պետք իմ, կանճե, բան չեմ ուզի, մենակ մեր գեղացիք հարկ շադ կիդան, կըրնաս կրճատե:

— Լա՛վ, — կըսե սուլթան:

Ալոն գիկա, կհասնի իրանց գեղ: Կանցնեն տարիներ, հմա հարկեր էրտըլով կշադնան:

Ալոն մենձ-մենձ ջաղացքարեր ձեռքի վրեն կխաղցուցեր ու կըսեր.

— Ի՛նչ կէնիք, էրեք, հմա թաքավորներու խոստման չհավատաք:

———————

Փահլևան — *ըմբիշ*

Գուլաշ — *ըմբշամարտ, կռիվ*

Ո՞վ գիշխներ — *ո՞վ կհամարձակվեր*

Հավար — *տագնապի կանչ, լուր*

Ազրայիլ — *հսկա, ահռելի*

Քանիմ — *մի քանի*

Հառեճ — *առաջ*

Մկա — *հիմա*

Հմա — *բայց*

էրտըլով — *գնալով*

Ֆերման — *հրաման*

Մանջբուռ — *արորի մաճի բռնակը*



ԾՈՒՌ ԹՈՒՄՈՆ

Էր գեղ Թումո անվոր մե մարթ կար: Էն տարըստանք հա՛ կերթեր ռըսու երգիր՝ Թիլվիս, դհա հուրիշ քաղքներ. կըսեն չուրի Պեդրեպոլ լե խասեր էր: Թումոն ընենց բաներ կըսեր, օր ըսկի մեգ լե չհավադեր, կծիձղին ուր վրեն, ձեռ կառին...

Կըսեր, օր ռըսու երգիր մե բան կա, պոպեզ կըսին ըդրան: Շադ հերգեն ա, կըսեր, իմալ մեր տուն, ձեր տուն, Սրկեյ տուն, Գրքեյ տուն ու դհա հուրիշներ կբուն հիրար ու դնին վըր ագներուն՝ էրթա: Էրգթներու վրով կերթա, ըդրան լե էրգըթգիձ կըսին:


Մենք կխարցուցինք, օր քանի ջուխտ եզ ու գոմեշ ա լձուգ, Թումոն կըսեր. օր ըսկի մե խատ լե լձուգ չէ, հմա ուրան-ուրան կրագ կվառա, ծուխ ու մուխ կըխանա, կըփնչա, կըփռշտա ու կերթա: Կէնա պո՛ւմ..., պո՛ւմ..., չըխկ-չըխկ, փո՛ւմ..., փո՛ւմ... Ըդմալ լե կերթա:

— Տո՛, էդի ինչ ա օր, — կըսեր Թումոն, — էրգըթից շադ մենձ խավքու նման բան կա, երգնքով կերթա, տաս-տըսվերգու մարթ լե կընստին մըչ ընդրան: Ընդրան այրոպլան կըսին, ըմալ կըդռռա, օր մարթ ուր անգջներ կըբռնա, չուրի հնցի էրթա:

Գեղի մարթիք շատ կափսոսին. մեգ կըսեր՝ «Ափսո՛ս, խազար ափսոս Թումոն», մեգել կըսեր՝ «Էդ ցավ հմա բդի Թումո՛ն բռներ», դհա մեգել ուր ձեռներ կըբանցրցուցեր, կըսեր՝ «Սուրփ Գևորք, դու փրգես ըդրան, ջահել ա...»:

Մե վախտ հընցավ, էլ ոչ մեգ չըխղջեր Թումո, մանդր ու բեդ ձեռ կառին, կըկանչին հօդեն, օր ըսեր, ուրանք լե խնդանին: Մըչ գեղուն տենին թե չէ, չորս յանից կըբռռին.

— Թումո՛, դըռռ..., Թումո՛, փո՛ւմ, փո՛ւմ, փո՛ւմ..., պո՛ւմ..., պո՛ւմ..., պո՛ւմ..., — ու ըսմալ միալար:



Ախպերդիք Թումո տեղ չմնաց, օր չտարան, չուրի Մշու սուրփ տան սուրփ Կարաբեդ լե տարան, մեռիմ ընդրա զորավոր զորքին, իլաջ չեղավ, չլավացավ: Թումոն լե չըկռներ դիմաներ գեղի մանդր ու բեդի ձեռ, կիերսոդեր, գելեր վըր ամբրոցին ու վըր գլխու ուրին կըտփեր գեդին:

Ամիսըմ, էրգու կպարգեր, էլման...

Ու ըսմալ Թումոն մեռավ:

Ժողովուրթ ըսին. «Աստվաձ խասավ ընդրան, ինչ լավ էղավ, օր մեռավ, թե չէ մեղք էր»:

Թումոն ծուռ էր: Ընդրան գերեզմներուց եռու մի տեղ խորին, ոչ խաց, ոչ պադարաք: Ըսկի Տեր Թումաս չգնաց, օր կարք լե կադարեր:

Մնաց մե վախտ աշխարավեր կռիվ էղավ: Ռըսու զորք լցվավ Ալաշկերդ: Ըդրա խամար էրգըթգիձ գցեց, Շայթախտից գիքեր, կզարգեր Մակու, ընդուց Բայազդու քաղքի միչով, Սինագա փեշերով գիքեր մեր երգիր, իմ խոր տան յոնջի միչով լե կերթար դիբա Մշու յան:

Ասուն օր չուրանամ, խազար ին խարիր տըսնվեց յա տըսնօխտ թվի կալոցին ըսեցին, օր հէսօր պոպեզ գիքա: Գեղացիք հմեն հավքվան գձու բոլոր: Հագոփ աղեն էրինջըմ մորթեց, սուֆրա փռեց վըր կանչներուն: Մեգ լե տեսանք՝ Սինագա փեշերուց մուխ հելավ, ձեն լսվավ. պոմ... պոմ... էգավ-էգավ, ինչ էգավ, մանդր-մանդր տներ կբուգ հիրար, չխկչխկալով, փնչալով կայնավ: Զինվորներ թափան դուս, էդ քշողին լե Լուգանփեդոր կըսին: Հիչան կերան, խմին ու գացին:

Մեր գեղցիք ըդմալ կայնուգ լե մնացին:

— Է՛, օղորմի քեզի, Թումո, — ըսին շադեր, — դու կըսեիր, հմա մենք քեզի չխավադինք, քեզի ծռու տեղ դրինք...

Ժողովուրթ գնաց, ընդրա գերեզման հիստգեց, բերին մե քար լե քաշին վրեն, Տեր Թումաս գնաց կարք կադարեց ու քարին լե գրեց.

«Անգեդներու մեջ գիդունը ծուռ ա»:

Թումոն էդ ծռերուց էր...

———————

Ծուռ — *խենթ, հիմար*

Անվոր — *անունով*

Պոպեզ — *գնացք*

Հերգեն — *երկար*

Խավքու նման — *հավքի, թռչունի նման*

Հօդա — *սենյակ, հյուրասենյակ*

Իլաջ — *հնար, միջոց*

Կիերսոդեր — *բարկանում էր*

Ամբրոց — *ցանի կամ աթարի դեզ*

Էրինջ — *երինջ*

Հիստգել — *մաքրել*

Տարըստանք — *տարիներ*

Չուրի — *մինչև*

Մշու սուրփ տան սուրփ Կարաբեդ — *Մշո սուրբ Կարապետ վանքը*

Զորք — *զորություն, կարողություն, ուժ*

Մանդր ու բեդ — *փոքր ու մեծ*

Յոնջա — *առվույտ*

ԼԵՆԻՆ

Լենու անուն մեր էրգիր լե խասավ: Մգա չըմ կռնա ըսեմ եփ էր, մինագ գինամ, օր հուռյաթից իրեք, չորս տարի հառեչ էր...

Աշնան մե օր մեր Կազու գեղ իրեք կարիբ մարթ էրևացին: Գեղացիք հա կիշկին էդա կարիբներուն: Էդա մարթիք պդոդեցին մըչ գեղ, գնացին մդան մըչ մեր ժամ, ընդեղից էրեխեմ ճամփին իմ ախպեր Սիրոյ քամագ. դու մի ըսա Սիրոն ըդոնց կըճանչներ... Սիրոն գնաց, առավ էգավ: Տարավ մըչ մառան, խաց դրինք, թաց դրինք, կերան խմին ու հիրար խեդ կզրուցին:

Սիրոն մեզի կխասկցուցեր, օր եռու էրթանք, հմա ես, օր խաց-մաց կտանի, կլսի ըդոնց: Ըդոնք մեր լեզվով չխոսին, ըդմալ մե տեսագ կխոսին, կերևեր կարթցվոր մարթիք ին:

Եփ էղավ հիրիգուն, հելան գացին հօդեն, էլի մարթիք խավքվան, Կումլիպուջաղա Գափոյ Քոչոն լե էգավ ուր խմփով: Էդա կարիբներուց մեգի անուն Արմենագան էր, մեգելին՝ Մգրդիչ, էն մեգելին՝ մդես գացե: Ըդոնք ոչ մե հուրի՞շ մարթ չթորգին հօդեն: Եդո Սիրոն մեզի ըսեց, օր էդա մարթիք ըսին աշխար Լենի կա, մգա լե մըչ Պեդրոպոլին ա, էնի գուզա, օր վըր աշխարքին արթարութին տիրա, էնի աշխրքի թաքավորներու, փադիշայերու, սուլթաններու, անխիղջ հարուստներու խոքեառն ա, հմեն լե ընդրանե կզարզնդին, չուրի ռըսու թաքավոր լե, օր աշխրքի կուաթովն ա, կդողա... Հմեն լե զորք ու զորապեդ կխանին ընդրա դեմ, հմա ինչքան ռուտ ու չլուտ,

ֆայլա ու մշագ կան, կկայնին Լենու թիգունք, ըդմալ կջարթին, կփշրին զորքին...

Իմ ախպեր Սիրոն չըմքի ֆիդայի էր, հերգեն վախտ Վանա, Բիթլիսու սարերն էր, գողդու գիքեր տուն, էլման կերթեր: Ուր հընգերներ Սիրո չսեն, մե տեսագ անուն կիդեն, ինչքան գուզեմ բերեմ իմ միդ, չըմ կռնա:

Սիրոն կսեր, օր իդա մարթիք ըսին՝ Լենու խեդ շադ խայ կան, մե մարթ կա՝ Աստուր ա եղէ անուն, Լենու խեդ իմալ ախպեր էղի...

Սիրոն կսեր, օր բդի խումփ շիքինք, զենք բերինք բաժնինք, եփ ժամանագ գա, հելինք դուշմնին զարգինք:

Էդա մարթիք Թիլվիս ու Վան կերթին-գիքին: Լենու նգար տվեր ին Սիրոյ, ուր ծոց դրուգ էր, մեզի նշանց տվեց: Ըդմալ ջահել-ջահել, պստիգ մուրուսով, ըդմալ լեն ճագթով, բեղերով տղամարթ էր, ջանով, ջանդգով, դու ասուն խավադաֆս, մե գոմփ իդեր, էդա ջոչ քար կեղեր կդոր-կդոր...

Լենու անուն հմեն լե հիմցան, չուրի էրեխեք լե գինին: Չէ օր ըսեր ին ուժով, կուաթով ա, կզարգա թաքավորներուն... Էրեխեք լե գիշերներ էրազ կտենին, կճչին, կթռին տեղեն: Ուրանց մերեր կգրկին, կսին. «Լենի բան չենա, լաո, Լենի լավ մարթ ա, ձեզի չիր ու չամիչ կբերա...»:

Մե քանի հեղ ես լե մըչ էրազին Լենու տեսա, ըմալ ջոչ էր, օր ուր գլոխ մըչ ամբերուն էր, օդներ վըր գեդնին...

———————

Հուդյաթ — նկատի ունի 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո ընդունված սահմանադրությունը:

Կուաթով — ուժեղ

Պեդրոպոլ — Պետերբուրգ

Կարիբ — դարիբ, օտարական

Կիշկին — կնայեին

Պդոդել — շրջել, պտտել

Չթորգել — չթողնել

Ֆայլա — մշակ, բանվոր

Խայ — հայ

Իմալ — ինչպես

Գոմփ — բռունցք

Ջոչ — մեծ

Չուրի — մինչև իսկ

Ուրանց — իրենց

Հեղ — անգամ



ՆԱՎԹԻ ԼԱՄՓ

Մեր էրգիր ճրաք կվառենք. ճրաք լե ձիթու, յա եղի ճրաք էր: Կավե, ըդմալ ճոռբերան բան էր, իմալ չորցուգ չարոխ: Սան վրեն պստիգ թարեք էր մխուգ, ընդրա վրեն լե ճրաքն էր դրուգ: Ճրաքր կողքին թելով մե տեղե պստիգ բիզ էր կախուգ, տան խարս կնստեր էդա սան տագ ու հա՛ էդա բզով պադրուքի ծեր հառեչ կիդեր: Մըչ ճրաք կդավադու ձեթ կլցենք: Է՛, չկա՛ր կդավադու ձեթ, ամեն տուն խինգ-վեց կարաս ձեթ կխանեն. կարաս եմ ըսե, մարթ հընգեր մեչ՝ կխեխտվեր: Ի՛նչ ձեթ էր, հլա խամ մըչ իմ բերան ա: Էդ ձիթեն կուդինք, գոմշդանք լե կձիթինք, հլա ճրաք լե կվառինք: Ջանըմ, էն վախտ էդա անտեր ճրաք ըման լուս կիդեր, օր խարսներ կընստեն ջոչ կուբի քնջներ, ասեղ կթելեն, փոթ ու բուջ կփինեն... Մեր Ավեդիս էրզրում կկարթեր. օր գիքեր, կնստեր կուբի մե քոշեն ու ավեդրան կկարթեր: Ջանըմ, մգա մեգ-մեգ օր լամփ կվառեն, հիրար անջախ կտենանք, էլ դոր մնաց՝ կարթան:

Էսա հեդին տարըստանք, մեր գեղից Սրկեյ Վարթան գացե խասեր էր Թիլվիս: Օր էգավ, ուր խեդ մե բան էր բերե, ըդմալ շուշեն վրեն, հերգեն, իմալ լագլագու վիզ. տագ լե կլոր պղնձե բան էր... Ըդրան լամփ կսեն: Էդա օր Սրկեյ տուն լիք լցվեր ին, ասեղ թալեր, գեդին չընգեր: Վարթան լամփ վերուցեր էր ձեռ, մե բան կըպդոդեր էսա յան, էնա յան... Ըմա՛լ լուս կիդեր, իմալ չրաղվան, տան հմեն ծագ ու ճուղ կերեվեր, կիշկինք՝ կզարմանինք: Մարթ օր կիշկեր էդա լամփ, աչքեր կըմռմռեր:

Էդի ձեթ չվառեր, նավթ էր լցուգ մեչ: Իմալ փիս խոդ էր հնգե ըդոնց տուն, օր մարթ ուրան քիթ կբռներ... Սրկեն Վարթանին կքրվեր, օր՝ էս ինչ ա բերե, քցե մըչ տուն, մարթ խոդու չըկռնա գիշեր լե սըթրի: Խոդ լցվեր էր գեղ, մարթիք կըթքուցեն, կսեն.

— Էդա անամոթ չամչցե, ըդմալ բան ա առե էգե...

Տեսնողներ ըսեցին, օր Սրկեյ տնագան օց լե, պադերու ճղանգներու մողոզիգներ լե սողացե, հեռացեր են նավթի խոդու: Էդ օրվնե ընդոց դոլվաթ չհառաչացավ, կուկուն կիդեր, պուպուն կտաներ...

Մնաց մե հաղըմ լե, փախեփախի հառչի տարըստանքն էր, շադեր առան էգան էդա լամփուց: Կերթին Սուքեսար, կըշրչվին էն յան, Կաղզվանից, յա Բասենուց կառին գիքին: Լամփեր օր շադըցավ, նավթու խոդ լե շադըցավ: Մարթիք ուրանց լամփեր պալանդրգեցին դուս ու ձիթու ճրաքներ կվառեն, չըմքի գիշեր չկռնեն քնեն էդա գեշ խոդու:

Գեղի մարթիք խավքվան, գառ վերուցին, գացին Փութկա սուրփ Գևորք, մեռիմ ուրան զորավոր զորքին, մադղեցին, օր էդա խոդ հնցնի գեղեն: Ըդմալ լե էղավ, մե վախտ հնցավ, էլ ըդմալ խոդ չիքեր նավթեն, ըստաղ շադեր լամփ բերին, հմա ուրանք չըկռնին վառին, ամեն հեղ կվազին Վարթանի քամագ: Մեգ կսեր՝ արի մեր տուն, մեգել կկանչեր ուրանց տուն: Ըսմալ օր հիրգուն գիքեր, Վարթան գեղի մե գլխուց, ով ուներ, կվառեր, չուրի խասեր մեգել գլոխ:

Վարթանին մըչ գեղ ուստա կսեն, էնի դարցեր էր լամփու ուստա:

———————

Չորցուգ — *չորացած*

Պադրուք — *պատրույգ*

Կդավադ — *կտավատ*

Խամ — *համ*

Կուբա — *ղուբա, հազարաշեն ծածկով գմբեթանման սենյակ, տուն*

Փոթ ու բուջ — *գուլպա*

Փինել — *վերանորոգել, կարկատել*

Կկարթեր — *կսովորեր*

Անջախ — *հազիվ*

Լագլագ — *արագիլ*

Իշկել — *նայել*

Սթրել — *տեղավորել, հանգստանալ*

Մադղել — *մատաղ անել*

Հաղ — *ժամանակ*

Չրաղվան — *հրավառություն*

Դովլաթ — *ունեցվածք*

Պալանդրգել — *նետել, շպրտել, գցել*

Չըմքի — *քանի որ, որովհետև*



ԱՆԳԱԽ ԱՔԼՈՐԸ

Շնան օրերուց մե օր մեր Կազու գեղի Բրսոն գուզա էրթա Կարաքիլիսեն: Դե, ձմեռ ա գիքա, նոթ ու կդոր, ային-օյին առի ու գա: Կնգան կըսա.

— Շողո՛ւ, ես ու Վարսո բդի էրթանք Կարաքիլիսեն, մգա կըքնինք, հմա աքլորներ հառչի բերան կանչին, գիմցուս մեզի, օր սել լձինք էրթանք:

Պստիգ տղեն՝ Պողսոն, գըլսա ու երգու ոդ կդնա մեգ սոլ.

— Չէ՛, օր չէ՛, ընձ էլ բդի տանիք խըդ ձե:

Բրսոն ինչ կէնա, վըր տղին չըկռնա, կըխասի՝ չափալախըմ էրգու կզարգա ու կերթա քնի:

Պողսոն կըխռովի, մըչ ուր մդաց կսա. «Ըմալ քյալագ խանիմ ըդոնց գլուխ օր...»: Դու մի ըսա, էդի աքլորի պես ըմալ կկանչա, օր ըսկի չջոգիս՝ աքլո՛ր ա, յա մարթ:

Հլա ուրանց աչք նոր ին կբուցե, Պողսոն գողդու գելի դուս ու աքլորի պես կկանչա: Իդա ձենի վրեն ուրանց ու գեղի շադ աքլորներ վըր թառին թևեր թափ կիդան ու կկանչին: Պողսոն ըդմալ գողդու կմդնի ներս ու յորղան կքաշա վըր գլխուն:

Շողոն ձեն կիդա Բրսոյ ու Վարսո տղին: Ըստոնք շուշուդ գելին, կըխաքին, գոմշտանք կըքշին դուս, կըլձին, գընգին ճամփա:

Հա՛ կերթան, հա՛ կերթան, օր լուս բացվի: Կըխասին Կազարագեղ, ձեն-ձու չկա, գեղ քնուգ ա. գնցին, շադ կերթան, կըխասին մեգ հուրիշ գեղ, մինագ շներ զուզա կիտան, կըխաչան, մեգ լե նոբադարներն ին հիմաց, ըդոնք կըկդրին սելի դեմ, կըսին.

— Ի՞նչ մարթ իք, դորե՛ն ա գիշերափախ կեղիք, դո՛ր կերթաք:

— Ախպրտիք, Կազա գեղից ինք, Կարաքիլիսեն կերթանք, — կսին խեր ու տղեն ու սել կքշին, գեղից գնցին: Հա՛ կերթան, հա՛ կերթան, հլա լուս չբացվի: Մե գախ լե կերթան, կտենան՝ նոր աղոթրան էղավ: Է՛, սաղ գիշեր չեն

քնե, պաղ քամին լե կիդա, ուրանք կըմրսին, մեգ գելին սել, մեգ գիչին, ոտով կերթան ու ըսմալ միալար, օր տաքնան: Ըսմալ քնացող ու մրսուգ կխասին Կարաքիլիսու քաղաք, էլ չըկրնան պդտին մեչ քաղաք, կերթան մե խան, սել կըթորգին, գոմըշդանք կէնին ներս, ուրանք լե գնգին գոմշդոց կողք ու կըքնին:

Մեգել օր գելին, ային-օյին կառին ու կդառնան: Վարսո գլխու գընգի, որ էդի Պողսոյ բաներն ա, չըմքի հինք լսեր էր, որ էն աքլորի պես կըկանչա: Խոր կսա, խեր դհա կըյերսոդի, կխասի տուն, փեդ կըվերու, օր իտա Պողսոյ գլխուն, հմա տղեն կըխնդանա, ուրանա կթալա խոր շլինք, կսա.

— Ափո՛, էլ ըդմալ բան չէնիմ...

Էդ բան սաղ գեղ հիմցավ: Էդ օրվնե Պողսոյ անուն մնաց Անգախ Աքլոր:

———————

Անգախ — *անժամանակ*

Նոբադար — *գիշերապահ*

Գիմգուս — *կարթնացնես, իմաց կտաս*

Սոլ — *կոշիկ, ոտնաման*

Չափալախ — *ապտակ*

Մըչ ուր մդաց կսա — *իր մտքում ասում է*

Քյալագ — *պատուհաս*

Գողդու — *գաղտագողի*

Գոմշտանք — *գոմեշներ*

Չեն-ձու — *ձայն-ձուն*

Դորեն — *որտեղից*

Գախ — *ժամանակ*

Աղոթրան — *լուսաբաց (առաջին աքլորականչի ժամանակը)*

Խան — *իջևանատուն*

Նոթ ու կդոր — *նավթ ու կտորեղեն*

Ային-օյին — *մանրուք, տան համար առօրյա գործածության առարկաներ*

Ըսմալ — *այսպես*

Յերսոտել — *զայրանալ, ջղայնանալ*

Շլինք — *վիզ, պարանոց*



ՉՈՒԽԱ, ԽԱՅ ԿԵՐ...

Հագոփ աղեն Ալաշկերտու Կազի գեղ կաբրեր: Մենք լե Կազու գեղից ինք: Է՛, մեռիմ ընդրա խող ու ջրին.. Հագոփ աղեն գեղի ռեսն էր, շադ հարուստ էր, ռըսու խեդ լե կաբ ուներ: Ընդրա հարստութեն օր մըչ ծովուն լցնեն, ծով կցամքեր: Դու ասուն խավադմա, Խուգասովի կռվուն ռըսու զորքին մե տարի ուր խացով, ուր ջրով պախեց: Թաքավոր լե ըդրա խամար բազբանդ կաբեց ընդրա թևին:


Աշուն կեղի, Հագոփ աղեն մե օր կխանա ուր չուխեն, բուխարի փափախ կըկախա հօդի մխեն, զենք ու զրախն էլ կըդնա ուր տեղ, կխաքի խին, քրչոտ-մրչոտ շորեր ու կերթա Նբադ սար, մշկու մոտ, ուր օչխրներ տենա: Դառնալուց մութ կիդա: Մե գեղով եփ գըհնցի, դհոլ-զուռնի ձեն կառնի ուր անգաջ:

— Կա-չկա խարսնիք ա, — ուրին-ուրին կըսա Հագոփ աղեն, — սովաձ իմ, էրթամ քչում խաց ուդիմ, եդո լուսնագ ա, կերթամ...

Հագոփ աղեն հուշիգ-հուշիգ կերթա դիբա խարսնքատուն: Ըսկի մեգ լե չիշկա վըր ընդրան: Օր շադ կըկայնի, խառսնքավորներուց մե մարթ կըսա.

— Ախչի՛ Գուլե, խեղջ մարթ ա, քչում խաց, կըդորըմ լե միս տուր, թըխ ուդա:

— Խա՛յ, առ կեր, — ուրան ավելցուգ քասեն կըպարզա դբա Հագոփ աղեն մե հուրիշ մարթ:



— Չէ, ընդենց չեղի, ըստեղ մարթիք ին նստուգ, անխարմար ա, — վերի գլխուց կբոռա խաչքավոր, — տարեք, թըխ մըչ մառան խաց ուդա...

Հագոփ աղեն ամոթ-զամոթ մե բրթուջ կըդնա մըչ ուր բերան ու կըթողա կերթա:

Մեգել տարին Հագոփ աղեն գիմանա, օր էդ խարսնքատեր ֆլան ամսի, ֆլան օր ուր մեգել տղին լե կըկարքա: Կըխաքի ուր չուխեն, բուխարի փափախ կդնա, զենքեր կըկաբա, կխեձի սև ձին, օր խըդ ամբերուն կխաղա ու կերթա:

Խարսնքավոր կիշկին, օր մե յորղա ձիավոր գիքա, թաշախուստով, զենք ու զրախով... կզարմանան. «Ջա՛նըմ, էս ինչ փաշա յա...» — մեգ-մեգի կըսա: Ջահելներ կվազին հառեչ, մեգ ձիու չումբուլ կըբռնա, մեգել կըսա.

— Հրամեցե՛ք, էֆենդիմ:

Խաչքավոր գիքա վերին գլխուց.

— Իմ աչիչ վըրեն տեղ ունիս, հրամեցեք, — ու կտանի խարսնքատան վերին գլոխ, վըր բարցին կընստցու, իրեք բարց լե դնել կիդա թիգունքին ու կողքեր:

— Տղեգնե՛ր, թասեր լցեք, — կըսա խաչքավոր, — վըր օդաց խմինք մեր պադվագան խոնախի կենաց...

— Կե՛ր, անուշ էնա, ազիզ խոնախ, — էս յանից, էն յանից կըսին մարթիք:

Հագոփ աղեն հմնու աչքերու հառեչ ուր չուխի փեշի ծեր կըվերու ձեռ ու կըմդու մըչ քասեն, բոռալով կըսա.

— Չուխա՛, խաց կեր, է՛, ախր դու ինձի խանիր ըստեղ...

———————

Խաց — *հաց*

Ռես — *տանուտեր*

Խուգասովի կռվուն — *խոսքը 1877—78 թ.թ. ռուս-թուրքական պատերազմի մասին է, որին ուրիշ հայ գեներալների հետ մասնակցել է նաև նշանավոր զորավար Ա. Տեր-Ղուկասովը*

Բազբանդ — *բազկակալ, բիլազուկ*

Բուխարի փափախ — *կարակուլի թանկարժեք մորթուց փափախ*

Մշկու — *մշակի*

Դիբա — *դեպի*

Քասա — *կավե խոր աման, ափսե*

Քչում — *մի քիչ*

Յորղա — *արագավազ*

Չումբուլ — *սանձ, կապ*

Խոնախ — *հյուր*

Ֆլան — *այսինչ*

Կըմդու — *մտցնում է*

Էֆենդիմ — *իմ պարոն*

Աչիչ — *աչքի*

Հուշիգ-հուշիգ — *կամաց-կամաց*

Խարսնքավորներ — *հարսանքավորներ*

Գ ՏԱՌԻ ՆԱՂԼԸ

Լում ա, չի ըլում՝ մի թաքավեր: Ըսրա ըմրաթումը ըլում ա մի շատ խելոք, իմաստուն մարթ: Էս մարթը քյընըմ ա ուրիշ երգիր, ընդղա էլ կյալիս ա իրանց քաղաքը հայոց տառերը հետը պըրիլավ: Էս թաքավերը մի սեղան ա քցում, մի սեղան, վեր էլ ասելու չի: Էս թաքավերի ծառանիքը սըվերում են էտ տառերի կրիլի ձևը հու քյընըմ, էտ տառերը Հայաստանով մին տարածում: Էս ծառաներից մինը, վեր անունը Փառնակ էր, կյալիս ա մեր Գարդմանցոց ըշխարհումը տուս կյալի: Տա կյալիս ա մի հարուստ մարթի տուն, համա ըտե տրան ասում են. «Քյընա կորի, մեր մղակովը նի չմտնես»: Տա ճարը կտրած քյընըմ ա մի աղքատ մարթի տուն, վերի անունը Մակիչ ա ըլել: Էս Մակիչը տրան ինչքան կարում ա՝ պատվում ա, կինի ա խմցնում, կյաթա ըտցնում հու ըռավետը դբա լիսին ճամփա տնում: Տու մի ասիլ, էս Փառնակի սիրտը ըլետ ա կյաթա ու կինի ուզում, համա էլ կար վեչ, պրծել էր: Էնա էս Փառնակը կողի ա ընգնում, լոխ տառերը սրանց ա տալի, բացի Գ տառից: Տրանից ետը էս ժողովուրթը վեր բառասկզբում ուզում ա Գ ասի, կարում չի: Տրանք էլ իրանց Գարդմանի անունը փոխում են հու տնում Քարթման:

———————

Նաղլ — *զրույց, պատմություն*
Ըմրաթ — *ամարաթ, պալատ*
Քյընում ա — *գնում է*
Ընդղա — *այնտեղից*
Կյալիս ա — *գալիս է*
Պըրիլավ — *բերելով*
Կինի — *գինի*
Կյաթա — *գաթա*
Ռավետ — *առավոտ*
Ըլետ — *նորից*
Կողի ընգնել — *համառել*
Լոխ — *բոլոր*
Դբա լիսին — *լուսադեմին*
Մղակ — *շեմ*



ՄԻՆՔԵՆԴ

Ստրանա մըն խիլլի վախտ առաջ, արնախում Թեմուրլանգը ուրան երգիրան մինչև Հայաստան ինգյած ճնփումը ամեն հինչ ավիրելավ, կրակ տալավ հասնում ա Հայաստան: Ու Հայաստանըմն էլ ինը հարիր իննսունինը շեն ու քաղաք թորին տակը տալով, քընդիլավ, մարդոցը սպնիլավ, կյամ ա Սյունաց աշխարքը՝ միեկվա Զանգեզուրը: Թեմուրլանգը բանակ ա տինում Սյունիքի շեներոցը մընին հանդամը: Հիբ վեր Թեմուրլանգին ալաչուղը եր են թողնում, ինքը նի ա մտնում ալաչուղ, թորը հանում ա, քիցում տափին ու ասում ա.

— Օ՛ֆ, մինքենդ:

Հայերան էդ նշանակում ա.

— Օ՛ֆ, հազարերորդ շեն:

Էդ դյոնում Թեմուրլանգը հիշում ա ուրան հորը խոսկերքը, վեր մըն օրումը հազար կլյոխ չի կտրես, մըն լուսնումը հազար շեն ու քաղաք չավիրես, թեչնա ալլահը քեզ կպատժի, թորդ ծեռքադ եր կոնի:

Էս դյոնամ շենին քյոխվան ու տանուտերը փեշքեշներավ եկած են ինամ Թեմուրլանգին ալաչուղի մղակը, վեր հպատակվում են ու խնդրում են, վեր Թեմուրլանգը ուրանց ծեռք չի տա: Թեմուրլանգը տյուս ա կյամ ալաչուղան ու ասում ա.

— Ես ծեր շենին ծեռք չեմ տալ, որովհետև հորս խոսկերքը հիշեցի, թող

ալլահը ընրան ջեննեթավ հատուցի: Փառք տվեք հորս, վեր փրկեց, ծեր շենը մինքենդ ա:

Էքսի օրը Թեմուրլանգը շենն ա նի մըտամ, ժողովրդին հպատակացնում ա, խարջ ա եր օնում, ամմա մարդ չի սպանում, շենը կրակ չի տամ: Ալօր Թեմուրլանգը ուրան ծանդր բանակը եր ա օնում, շենան հռվանում:

Ամմա էդ օրվանից եննա, էդ շենին անումը մնում ա Մինքենդ հազարերորդ շեն:

———————

Մինքենդը գտնվում է Ադր. ՍՍՀ Լաչինի շրջանում

Մի խիլլի վախտ առաջ — *շատ ժամանակ առաջ*

Թեմուրլանգ — *Լենկ Թեմուր*

Թոր — *թուր*

Մհեկվա — *այժմվա*

Հիբ վեր — *երբ որ*

Ալաչուղ — *մեծ վրան*

Հայերան — *հայերեն*

Էդ դյոնում — *այդ անգամ*

Կլյոխ — *գլուխ*

Մըն լուսնումը — *մի ամսում*

Թեչնա — *թե չէ*

Ջեննեթ — *դրախտ*

Ալօր — *հաջորդ օրը*

Եննա — *հետո*

Շեն — *գյուղ*

Խարջ — *հարկ*

Էքսի օր — *հաջորդ օր*



ՊԸՐԿԸԿԵՐԻ ԱԽՊՈՒՐԸ

Իլում ա, չի իլում, մըն ճընըպարհորթ ա իլում. քինում ա, քինում, հըսնում ա մի ըխպրի: Պարկան հաց ա հանում, սկսում օտիլը: Օտում ա, օտում՝ ըշկա հացը պրծնում ա, հեդավ ճուր ա խմում: Շատ համու ճուր ա իլում, էնքան համու, վեր հեդավ պարկն ալ ա օտում: Էտ օրվանից, էտ ժաման էս ախպրի անումը մնում ա Պըրկըկերի ախպուր, իսկ էտ հանդինը, ըշտե վեր ախպուրն ա իլում՝ Պըրկակեր:

———————

Պըրկըկերի ախպուրը — *պարկ ուտողի աղբյուրը, գտնվում է Տաթև գյուղի մոտ*

Իլում ա — *լինում է*


Օտիլը — *ուտելը*

Ըշկա — *մինչև*

Հեդավ — *հետո*

Համու — *համով*

Ըշտե — *որտեղ*



ՋԱՋՈՒՌ

Մի մարդ դուրս ա գալըմ ճամփորդության. հասնըմ ա սարերը, գիշերն ընկնըմ ա: Մտնըմ ա մի փոսի մեջ, շատ ա հոգնած ըլնըմ, խոր քուն ա մտնըմ: Առավոտը արթնանըմ ա ու շարունակըմ ճանապարհը: Հանկարծ սարի տակին աչքին ա ընկնըմ մի աղբյուր: Կռանըմ ա ու ջուր խմըմ: Ջուրը շատ սառն ա ըլնըմ:

— Ջա՛ն, ջուր, — բացականչըմ ա մարդը:

Ջրի համբավը տարածվըմ ա ամենուրեք: Մարդիկ բնակություն են հաստատըմ այդ վայրերում և վայրը կոչըմ են «Ջանջուր»:

Հետագայում «Ջանջուր»-ը փոփոխվելով դառնըմ ա «Ջաջուռ»:



ՈՒՇԻ


Թուրքերը ներխուժում են գյուղ: Մարդիկ հավաքվում են գյուղի կենտրոնում վեր խոյացող եկեղեցում և փակվում այնտեղ: Թուրքերը գրոհում են եկեղեցու վրա, մարդկանց դրությունը վատանում է: Նրանք մյուս գյուղերից օգնություն են խնդրում, բայց մինչև օգնության հասնելը թուրքերը գյուղը ավերում են և հեռանում: Օգնության ուշացման պատճառով գյուղը կոչվում է Ուշի:

———————

* *Ուշին գտնվում է Աշտարակի շրջանում*



Երգեր, տաղաչափական խաղերգեր, խաղեր



ԱԽ, ԻՄ ՄՈՒՐԱԴ

Մուրադ գիքա Ծաղգանց սարեն,
Մարմանդ-մարմանդ գընցի դաշտեն,
Բացվեր ա իմ սրդի յարեն.
Վին կթորգիմ քեզի, Մուրա՛դ:
Ա՛խ, իմ Մուրադ՝ խայոց եփրադ,
Իմա՛լ աբրիմ ես քեզնե զադ:*

Ձմեռ ա՝ ձուն, բուք ու բորան,
Քերիմ փաշի տուն-տեղ վերան,
Ալաշկերդցիք քոչեր բարցան,
Խըդ ափերով հելան գեդի:

Մեր ու մանուգ պաղաձ ափին,
Ուր մեչ կառի կադղուգ լափին,
Մուրադ գլոխ կիդա քարփին,
Արուն լալով գընցի կերթա:

Մորեն եղա վըր քու ափին,
Իմա՛լ թորգիմ քեզի թուրքին,
Աշխա՛ր, թքում ես քու վարքին,
Դո՛ր գաղթինք մեր խող ու ջրեն:

Գեվոյ ախչիգ էլ բուն չունի,
Մըչ աշխրքին էլ տուն չունի,
Մեգ Մուրադ ա, երգուս չունի,
Մեռնի, բալքի մնի ըստեղ:
Ա՛խ, իմ Մուրադ, հեյվա՛խ, Մուրադ,
Իմա՛լ աբրիմ ես քեզնե զադ:

ԼՈՒՍՆԱԿ

Մեռնիմ քըզի, պստի լուսնակ,
Ո՛ր ա կերտաս մինակ-մինակ,
Ծառ մ'իմ տնկե քե նմանակ,
Բռներ խաղող սև ու սիվտակ:

Էրտանք, ժողվինք կողովներով,
Բերինք, բռնինք կարասներով,
Կախինք մարագ զնգուռներով,
Տատին ուտա ուր թոռներով:

*Այս երկտողը կրկնվում է յուրաքանչյուր տան վերջում:

Մուրադ — *գետ Արևմտյան Հայաստանում, հայկական անվանումը՝ Արածանի, սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից և միանալով Արևմտյան Եփրատին, առաջացնում է Եփրատ գետը*

Մարմանդ — *խաղաղ, հանդարտ*

Թորգել — *թողնել*

Իմալ — *ինչպես*

Վերան — *ավերակ*

Խըդ — *հետ*

Պաղաձ — *պաղած, մեռած*

Կադղուգ լափին — *կատաղած ալիք*

Քարփին — *քարափին*

երգուս չունի — *երկրորդը չունի*

Բալքի — *գուցե*

Զնգուռ — *ողկույզ*

ԵՐԳ ՍԻՐԱՀԱՐ ՏՂԱՅԻ

Խաքեր իս մարմաշ, վառվռուն կումաշ,
Ախր չուրի եփ կայնիմ քե թամաշ,
Ախչի, խերիք ա ջիգարսի վառիս,
Շոռ բլիթ կերա, ջուր տվիր դու հիս:
Աստված կսիրիս, մե խաբար էնա,
Սիրդսի կվառի, էլ չըմ դիմանա:
Արև օր զարգեց Սինագա դոշին,
Կընստիմ ձեր պաղ հախպրի բաշին,
Արի, կսրփիմ քու ճամփու փոշին,
Օր մե խադ փոշի չընգի քու քոշին:
Թե մե օր էղնի, չելնիս աչքիս տես,
Խելքսի կըթռում, գընգիմ սար-ձոր ես:

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

Րուրիգ-րուրիգ, րուրիգ-րուրիգ,
Րուրի, լաւ, րուրի, բալա՛,*
Քնի, լաւ, քնի բալա՛,
Աստված քեզի բարի բախտ տա:

———————

* Այս երկտողը կրկնվում է յուրաքանչյուր տան սկզբում:

Չուրի եփ — *մինչև երբ*

Շոռ բլիթ — *աղի բլիթ*

Հիս — *ինձ*

Սինագ — *Սինակ, Հայկական Պարի լեռնագագաթներից*

Հախպրի բաշ — *աղբյուրի գլուխ*

Քոշ — *կոշիկ, ոտնաման*

Մարմաշ — *շղարշ*

Կումաշ — *նուրբ թանկարժեք կտորեղեն*

Խելքսի կըթռում — *խելքս կթռցնեմ, կխելագարվեմ*

Մի՛ վախենա, քնի, որթի՛,
Պինդ փագեր իմ դուռ ու հերթիք:

Քնի՛, լաւ, օր շուդ ջոչնաս,
Էրթաս Նեմրութ, քու խոր տենաս:

Քնի՛, լաւ, փագա աչք-հունք,
Էղի քու խոր թև ու թիգունք:

Մեռներ Խալիլ փաշի ումուդ,
Քու խեր չերթեր չուրի Նեմրութ:

Շուդ ջոչըցի, անուշ բալա՛,
Թվա՛նք վերու, Նեմրութ գնա:

Գնա՛, լաւ, զա՛րգ շուն փաշին,
Թե չէ՝ չիշկա մեր ջոչ յաշին:

Չաուշ էգավ ափոյ տարավ,
Փաշի խոքին թրով առավ:

Քնի՛, լաւ, շուդ ջոչըցի,
Թվանք վերու, ֆիդա դարցի:

Հերթիք — *երդիկ*
Ջոչնալ — ***մեծանալ***
Նեմրութ — *սար Վանա լճից հյուսիս-արևմուտք*
Չուրի — ***մինչև***
Յաշ — ***տարիք***
Ֆիդա — *ֆիդայի, հայդուկ, հայ ազատագրական պայքարի մարտիկ*
Ումուդ — ***հույս***
Չաուշ — *տասնապետ, այստեղ նկատի ունի Գևորգ Չաուշին*
Ափո — ***հայր***
Փաշա — ***թուրք կամ քուրդ զորապետ***

ՋՈՒԳԵՐԳ-ՊԱՐԵՐԳ

— Ալադաղի մարալ իս,
Անուշ յար ջան, խորոդ յար ջան, խորոդ յար,
Քընց վարթ անուշ կըբուրիս,
Քու խեր չուզա, քու մեր չուզա, անջիգյար:

— Թե օր դու ընձի գուզիս,
Անուշ յար ջան, խորոդ յար ջան, խորոդ յար,
Հորի՞ ըդմալ պաղուգ իս,
Խորըս ըսա, մորըս ըսա, արի տար:

— Մուրադ գեդն ա վարարե,
Անուշ յար ջան, խորոդ յար ջան, խորոդ յար,
Իմ տուն ու տեղ ավիրե,
Խու խեր չուզա, քու մեր չուզա, անջիգյար:

— Իմ խեր չուզա, ես չառիմ,
Անուշ յար ջան, խորոդ յար ջան, խորոդ յար,
Ի՞նչ էնիմ, օր քե գուզիմ,
Խորըս ըսա, մորըս ըսա, արի տար:

— Բարով պրձինք կալ ու կուտ,
Անուշ յար ջան, խորոդ յար ջան, խորոդ յար,
Գիքամ հընգիմ քու խոր ոդ,
Քու խեր չուզա, քու մեր չուզա, անջիգյար:

— Թե օր էգար իմ խոր ոդ,
Անուշ յար ջան, խորոդ յար ջան, խորոդ յար,
Ընձի կիդա, իմ խորոդ,
Խորըս ըսա, մորըս ըսա, արի տար:

Ալադաղ — *Ծաղկանց լեռներ, Վանա լճից հյուսիս-արևելք*

Հորի — *ինչու*

Պաղուգ — *սառած*

ՆԱՂԼ-ՆԱՂԼ ՉԻՆԱՍՏԱՆ

Նաղլ-նաղլ Չինաստան,
Էշի քուռակը տակս տամ,
Նստիմ-քինիմ Էրևան,
Էրևանից կուտ պիրիմ,
Կուտը տամ հավերին,
Հավերն ինձ ծյու տան,
Ծյուն տամ պառավին,
Պառավն ինձ քյաթա տա,
Քյաթան տամ հովիվին,
Հովիվն ինձ կյառնուկ տա,
Կյառնուկը տամ աստուծին,
Աստուծն ինձ ախպեր տա,
Ախպեր-ախպեր, ջան ախպեր,
Շաքարը մաղիմ, կեր ախպեր:

ՀԵՔԻԱԹ, ՀԵՔԻԱԹ ՊԱԲՍ Ա

Հեքիաթ, հեքիաթ պաբս ա,
Ղաշղա քուռագ տագս ա,
Կուդ բերի,
Կուդն տվեցի հավերին,
Հավերն ընձի ձու տվին,
Ձուն տարա տվի դարպնին,
Դարպին ընձի շխպիգ տվեց,
Շխպիգ տվեցի հարսին,
Հարսն ընձի գատա տվեց,

Ծյու — *ձու*

Քյաթա — *գաթա*

Պաբս ա — *պապս է*

Ղաշղա — *ճակատին սպիտակ նշան ունեցող*

Դարպին — *դարբին*

Շխպիգ — *հողից արմտիք հանելու երկաթե գործիք*

Գատեն տարա տվի չոբնին,
Չոբան ընձի գառ տվեց,
Գառն տարա տվի աստծուն,
Աստված ընձի ախպեր տվեց,
Ախպեր ջան, ախպեր,
ես քու շուն, խինու խինեն,
Աբռշուն, հեդև հառեճ, նա նխշուն,
Մեռնիմ կաբա կաշմաշուն,
Գառ ա բերե, տասը հադ ուլ,
Տարա դրի ժամի դուռ,
Նանե, նանե, քրտու դռին
Մի անիձե, մի քրվե,
Հառվե-հառու իմ թռե,
Նախշուն կակավ իմ բռնե,
Համբրով թառն իմ դրե,
Համբրի մեջն պագաս էր,
Առա բերանս՝ լեղի էր,
Թապի գեդին՝ գինի էր,
Գինի-գինի գինստան,
Ախպեր ունիմ շարմստան,
Մանող էր, գզող էր,
Բեդ-բեդ կոջագ կարող էր:

———————

ես քու շուն, խինու խինեն — *ես քեզ հնուց-հին շան նման հավատարիմ եմ, անմնացորդ նվիրված*

Աբռշուն — *մետաքս*

Կաբա կաշմաշուն — *Քաշմիրի կապա, երկար զգեստ*

Քրտու դռին — *քրդի կնոջը*

Հառու — *առու*

Համբրով — *հաշված*

Շարմստան — *քաղաք*

Բեդ-բեդ — *մեծ-մեծ*

Կոջագ — *կոճակ*

ՏԻԿ-ՏԻԿ

Տիկ-տիկ՝ չամ ու չվան,
Ես շորորամ, գամ քո նման,
Իմ ախպերը վրին թևի,
Գնաց խաղաց խըտ լուսնյակին,
Լուսնակ խփեց մեջ երեսին:
Ալալա եմ կուրիսե,
Ջալալա եմ կուրիսե,
Բաղդոն եկավ, Բաղդոն գնաց,
Ծովի ափը պուպուզավ:

ԹԸՌ-ԹՌՑՆԵՄ

Թռի՛ ճուտիկ, թռցնեմ,
Ճտիս կաբա հագցնեմ,
Մոշե գինին խմցնեմ,
Սև խավու միս կերցնեմ,
Ճոճդ կախեմ, նան ասեմ,
Մախմուռից շորեր կարեմ,
Թանթելլա ճըթեր առնեմ,
Իմ լաճուն կապոց անեմ:

———————

Չամ ու չվան — *պարան*

Մախմուռ — *թավիշ*

Թանթելլա — *ժանեկազարդ*

ՀԱ՛ ԹՌՑՆԵՄ-ԹՌՑՆԵՄ

Հա՛ թռի-թռի թռցնեմ,
Սև հավի միս կերցնեմ,
Սև ուլի կաթ խմցնեմ,
Հորդ թևին հասցնեմ:
Շիշ բերեք, շուրվեն հանինք,
Բլդբլդան տոլմեն հանինք,
Պըբզինք պուդուգ լիզինք,
Հա՛ թռցնեմ-թռցնեմ,
Իմ բալիկիս խաղցնեմ:

ԽԱՏԻԿ-ԽԱՏԻԿ, ԱԼՎԱՐԻԿ

Խատիկ-խատիկ, ալվարիկ,
Ալ խնձորիկ, փշատիկ,
Կուտ ուտեմ, կուտման ուտեմ,
Մե թոռանս պաչիկ անեմ:

ԱՐԵՎԻՆ

Արև, արև, դուրս էլի,
Քո խեր ու մեր իկեր ի,
Ոսկի դանակ պիրեր ի,
Խով ծառի տակ թաղեր ի,
Խովիկն էկե տեսեր ի:

Շուրվա — *շորվա*

ԱՂՎԵՍԸ

Աղվեսն ելավ բարակ ձորից,
Թանը կերավ՝ թափավ վզից,
Երկու կոպեկ առավ քրեն,
Գնաց ընկավ գեղի սրեն:
Որտեղ գնաց՝ պուլիկ եղ է,
Ասավ. — Էս ինչ հարուստ գեղ է:
Գցեց շուչիկ, բռնեց փուչիկ,
Գնաց ընկավ իր տունուճիկ:
Աղվեսն ասավ. — Տեղս նեղ է,
Հավի ճտեր փորիս դեղ է:



———————

Քրեն — *քրեհը, վարձը*

Գեղի սրեն — *գյուղամեջ*

Շուչիկ — *շունչ*

Տունուճիկ — *բուն*

ԽԱՂԻԿՆԵՐ

Առավոտ գիշերիանա,
Ես ինչ անեմ մահանա,
Որ գնամ իմ յարիս մոտ,
Հանկարծ մերս չիմանա:

*

Խաղ կըսեմ խանա-խանա,
Չեք կըրնա բերան բանա,
Խաղ կըսեմ առու-առու,
Ինչ-որ կըսեմ՝ էն դառու:

*

Այ իլղար ա, իլղար ա,
Փլավ կեփեմ, բիբար ա,
Յարս էկավ Քյավառա,
Ջեբեր լիքը շաքյար ա:

———

Գիշերիանա — *առավոտ ծեգին*

Մահանա — *պատրվակ*

Իլղար — *օրորոցում մանուկների նշանադրություն, խոստում*

*

Ուխտավոր ջան, ուխտ արա,
Սրտիս իղձն կատարա,
Իմ սիրածն սև-սև ա,
Ոչ ոք չի կանա խլա:

*

Պատերը քիրաջ արա,
երեսդ զուլալ արա,
Ես քո ցավով կմեռնեմ,
Կարաս, իլաջըմ արա:

*

Ա՛յ մարդ, չըխարակս սազ արա,
Նստի տանը տազ արա,
Ես էլ պյարակ թիլ մանեմ,
Աշկտ օրիշին չըմնա:

*

Ամպել ա սարեցոց վրա,
Թոն կուգա յայլեցոց վրա,
Ամպ ջան, աստվածդ սիրես,
Թոն մի գա յարիս վրա:

*

Բլբուլը դարի վրա,
Խնձորը ծառի վրա,
Սիրած սիրածի տային
Չոր գետնի, քարի վրա:

*

Էրկանքը աղի վրա,
Շամամը թաղի վրա,
Ես էլ մի բլբուլ ղուշ եմ
Հերանցս թաղի վրա:

———————

Իլաջ — հնար, միջոց

Չխարակ — ճախարակ

*

Հնձվոր տղին հաց տարա.
Յարիս տեսա, հետ դառա,
Խնձոր տվեց, ես չառա,
Էս ինչ անբախտ յար դառա:

*

Այ հանդեր ա, հանդեր ա,
Թամուզ էրծաթ բանդեր ա,
Իմաց տվեք իմ յարին,
Ջիվան ջանս անդեր ա:

*

Տղա՛, գնա հիր էրա,
Վըր մատնիքին գիր էրա,
Գնա, գլխուտ ճար էրա,
Իմ խեր քեզ աղջիկ չի տա:

*

Օրը թխպոտալ ա,
Տրեխնիս ճղոտալ ա,
Կեցիս քյոհնա դայրան
Սարերում պտռոտալ ա:

*

Քու սերը ինձ խանչալ ա,
Ամեն շուն իրաս հաչալ ա,
Էլ իմ ինչին ես դու պետք,
Որ ուրիշը քեզ պաչալ ա:

Բանդ — կապ

Հիր էրա — նկատի ունեցիր

Կեցիս — հագիս

Քյոհնա — հին

Դայրա — գգեստ

Իրաս — մոտս

*

Սարերը սնձոտել ա,
Ոչխարը բրդոտել ա,
Չոբան, քու մերը մեռնի,
Շորերդ կեղտոտել ա:

*

Լուսնյակը նորել ա,
Նորը բոլորել ա,
Յարս խռովել ա,
Ճամփեքին մոլորել ա:

*

Ձորի ջուրը սառել ա,
Ղամեն ձեռս տարել ա,
էդ էլօղլու վատ խոսքը
Ինձ մոմի պես հալել ա:

*

Կաթնաղբյուրը սառել ա,
Ղամեն կուռս տարել ա,
Ինձ մի սիրած յար ունեի,
Ուշքս, միտքս տարել ա:

*

Ծին ա եկել, հալել ա,
Փոսն ա տառել, սառել ա,
Մտիկ արեք էն ղազին,
Չալ ու նախշուն բողազին:

*

Ջաղացի տակը փոս ա,
Վեր քար քցես կխոսա,
Աստված սիրես, մեկ էլ խոսա,
Ա՛յ իմ նանի ազիզ փեսա:

Ղամա — *դաշտ, լայն*

էլօղլի — *օտար, վատ, ուրիշ*

Կուռ — *ձեռք*

Ծին — *ձյուն*

*

Կանգնածդ տեղը փոս ա,
Էվել-պակաս մի խոսա,
Խոսքիդ պատասխան կտամ,
Կողքիդ ընկերն ափսոս ա:

*

Աղջի, անունդ ասա,
Գլխինդ ֆինո-ֆաս ա,
Գնա՛ քո մորը ասա,
Ինձի անի իր փեսա:

*

Գյանջի քամին գալիս ա,
Դուռն շընխկ-շընխկ տալիս ա,
Աղչի, հելի դուռը բաց,
Գլխավորդ գալիս ա:

*

Ղարսա քամին գալիս ա,
Էրան-էրան տալիս ա,
Մեյդան արեք, շոր գցեմ,
Կարոտ բալես գալիս ա:

*

Վրթիվերը կյալիս ա,
Ծաղիկը ցնծալիս ա,
Հարսն ու աղջիկ, դովլն արեք,
Ղզլբաշը կյալիս ա:

*

Թոռը կյամ ա, շաղըմ ա,
Էրկու օր ա մաղըմ ա,
Քինամ տըսնամ ճըղացպանը
Մեր դանին կուտուրը աղըմ ա:

———————

Ֆինո-ֆաս — *ֆնս, գլխարկ*

Էրան-էրան — *մեղմ փչելով*

Կուտուր — *մի կտոր, քիչ*

*

Թոռը շաղըմ ա,
Ճաղացը աղըմ ա,
Իմ պառավ նանին
Ալիրը մաղըմ ա:

*

Արևը մար ա մտնըմ, մթնըմ ա,
Կյառերը մթնան խրթնըմ ա,
Շուտ ըրա, ըրա դալը,
Օրը փին ա, թխպըմ ա:

*

Նշանածս չոբան ա, վըխճարըմ ա,
Ղազի գյուլի սարըմն ա,
Տեսնաս հեք ա տոն կյալու,
Էսօր աշկս խաղըմ ա:

*

Իմ ախպերը սարումն ա,
Շհուն գոտկի ծալումն ա,
Շհուտ փչի, ախպեր ջան,
Քիրըտ Լոռվա սարումն ա:

*

Վրթիվերի վադեն ա,
Աղալարի դագեն ա,
Իմ ծաղիկը խլողն ով ա,
Քոնթոլ-մոնթոլ գյադեն ա:

Ընա դալը — *մտցրու փարախը*

Վըխճարըմ ա — *ոչխարի հոտի հետ է*

Շհու — *շվի*

Վադեն ա — *ժամանակն է*

Աղալարի — *աղանների*

Դագա — *վրան*

*

Տախտն ավլում եմ՝ նամ ա,
Սներն արծթուկ գյամ ա,
Իմ պես նազանի աղջիկ
Քե պես տղին չի սազա:

*

Իմ մեջքինը քյամար ա,
Քո ունքերը կամար ա,
Ա՛յ տղա, ինչ ես միտք անըմ,
Իմ կյանքը քու հըմար ա:

*

Ղարիբ եմ, տեղս քար ա,
Ղարիբություն դժվար ա,
Աստված սիրեք, բան չասեք,
Ղարիբն էս ինչ անճար ա:

*

Արև զարգե Նբադ սար,
Գլխութ թասագ օսկեշար,
Քեզի աչքով էնեցի,
Ա՛խ, ինչ անուշ խնդացար:

*

Ժամու դռան մարմառ քար,
Ես չեմ առնե հեռու յար,
Հեռու յարը աչքի փուշ ա,
Սիրով սիրած յարն անուշ ա:

*

Լուսնյակը կեռ ու կամար,
Քուր կմեռնի ախպոր խամար,
Հիսուն օր պաս եմ պախել
Իմ ախպոր ճամփու խամար:

———————

Նամ — խոնավ

Գյամ — գամ, մեխ

Նբադ — Նպատ, սար Զիրավի դաշտից հարավ

*

Երկանքս կաղա ձավար,
Դուշման, քու աչքը խավար,
Ես սիրել եմ, ես կառնեմ,
Ջայնամ թե չունի տավար:

*

Բախչի տակը դթում ա,
Նանս կովը կթում ա.
Գնա նանիս հարցրու,
Թե որ չտա, փախցրու:

*

Սարերը սրսռում ա,
Ոչխարը բռբռում ա,
Էսօր հինգ օր չեմ տեսել,
Իմ սիրտը մռմռում ա:

*

Ծաղիկ եմ քաղել, դեղին ա,
Իմ յարը ձեր գեղին ա,
Ալ ու մեխակ շատ ունեմ,
Չիմ իմ յարի ձեռին ա:

*

Կուռտիկ եմ կարել, դեղին ա,
Յար ունեմ, ձեր գեղին ա,
Դարչին, մեխակ շատ ունեմ,
Չիմ էն յարի ձեռին ա:

*

Խնձոր ունեմ, դեղին ա,
Իմ սիրածը գեղեն ա,
Միսս ոսկորից որ ջոկեն,
Մի թիքեն էն տղինն ա:

Կուռտիկ — *բաճկոնակ*

Չիմ — *բոլորը*

*

Լուսնակ մտավ ամպի տակ,
Ես մնացի անբնակ,
Լուսնակ-լուսնակ, դուրս արի,
Ա՛խ, ինձ տանից մի հանի:

*

Ճլվըզտ, ճլվըզտ, չըխարակ,
Ես հու տյու քյինինք Հկյերակ,
Ես հաստ մանիմ, տյու պերակ,
Ես կոժ կոտրիմ, տյու՝ տորակ:

*

Մատնիքիս կլոր ակը
Գլվլաց ընկավ բակը,
Դեմ տվի սելի ակը,
Տակը մնաց մեր սագը:

*

Ոչխարն արել եմ բակը,
Դեմը տվել սելի ակը,
Ով իմ սիրածին առնի,
Չի վայելի գլխի թագը:

*

Սարերի վրով գնաց,
Իմ յարը խռով գնաց,
Թե ղուշ էղավ, թե կաքավ,
Չեռես թռավ ու գնաց:

*

Ջուրը ջրտարով գնաց,
Յարս, տեսեք, ոնր գնաց,
Մահանա քենուն արեց,
Յարին տեսնելու գնաց:

Քյինինք — գնանք
Հկյերակ — *Ագարակ*
Տորակ — *փարչ, փոքրիկ կուժ*

*

Գնացի գետը վլաց,
Տաշտը կոտրավ, ջուրը գնաց,
Յարիս շորերը մնաց,
Յարս էկավ, հերսոտ գնաց:

*

Լուսնակը ցոլաց, ցոլ գնաց,
Բանդ առավ սարին, մնաց,
Աստված սիրեք, դեմն առեք,
Շեկ յարս ձեռից գնաց:

*

Քեզի կըսեմ բացեբաց,
Թե դու ընձնեն հեռու կաց,
Լոթի տղերանց մեջը
Կերևաս դու գարի հաց:

*

Ես տղա եմ գառնարած,
Քյանքյուլս ոսկեջրած,
Ի՞նչ անեն հերս ու մերս,
Ճակատիս էս էր գրած:

*

Ա՛ հում տղա, հում տղա,
Աղբրի կլխին քուն, տղա,
Ծաղիկս ջրովն եմ կալել,
Փախի գնա տուն, տղա՛:

*

Երդիկը կայնող տղա,
Իմ մասին մտածող տղա,
Էկան ընձի տանելու,
Թասիբիդ մեռնեմ, տղա՛:

———————

Վլաց — *լվացք*

Քյանքյուլ — *մազափունջ*

*

Քանաքեռ բարձր տեղ ա,
Ջուրը հիվանդի դեղ ա,
Սիրած սիրածի չեն տա,
Էս ինչ կռապաշտ գեղ ա:

*

Մեծ չայիր ա, մեծ թաղ ա,
Թուխ գառ մեջը կըխաղա,
Հեսա էկավ իմ ախպեր,
Համ մելիք ա, համ աղա:

*

Ա՛յ տղա, ալին տղա,
Քյաքուլդ ղալին տղա,
Ես քեզ որտե՞ղ սիրեցի,
Իմ հերանց կալում, տղա:

*

Ոչխարը բերը էկավ,
Ետևեն տերը էկավ,
Ուզեցի պաքըմ առնեմ,
Աղջկա հերը էկավ:

*

Խնձոր կծի, դուր էկավ,
Յարս ընձի հյուր էկավ,
Նրա սև-սև աչքերը
Էլի ընձի դուր էկավ:

*

Բոստան դրի արևկող,
Անտեր մնա շահի հող,
Երկու բեբախտ քուր ունեմ,
Ընձի կըսեն՝ յարդ թող:

———————

Չայիր — *մարգագետին*

Ալին — *կարմրաթուշ*

Ղալին — *խիտ*

*

Նստա օդեն՝ կար արի,
Կար արի, կանվա կարի,
Էկան ըսին՝ յարդ էկավ,
Կանվեքը խարաբ արի:

*

Ա յ տղա, բաղովն արի,
Ոտներդ շաղովն արի,
Էս թաղը ղալմաղալ ա,
Ման տու, էն թաղով արի:

*

Յար ջան, ալերով արի,
Վերին կալերով արի,
Էս մայլեն ղալմաղալ ա,
Յան տու, էն մայլով արի:

*

Դարի, դարի, ինչ դարի,
Հած բոլ ըղավ աս դարի,
Վար-վիր օնցնող մաշտկածը
Գասիմ գու՝ մեյ դուն արի:

(Տարի, տարի, ինչ տարի,
Հաց շատ եղավ այս տարի,
Վարուվեր անող մարդկանց
Ասում եմ՝ մեր տուն արի):

———————

Վեսկի — *ոսկի*

Օդա — *հյուրասենյակ*

Կանվա — *ձեռագործի հենք*

*

Թրջոց եմ դրել կաշի,
Աչքս ճամփա կըյաշի,
Չվա իմ յարը կերևա,
Հալալ կեսս կմաշի:

*

Պարբաշի,. պարդ քաշի,
Ետ դառի, յարիդ աշի,
Հալղը սիրածդ տարան,
Հողերը գլխիդ քաշի:

*

Ախպեր օնիմ Առուշան,
Սիպտակ կոլին թոխ նշան,
Գյոլեն կլխեն հունձ կանինք,
Ղարիբ օքմուն հունց կանինք:

*

Աղչի, անունդ Շուշան,
Հագիդ շորեր խշխշան,
Արի գնանք Սուրբ Նշան,
Մատիդ մատնիք տամ նշան:

*

Թամբալ Տիգրո տզտզան,
Ճանջեր բերնին կըդզզան,
Տենաս՝ մե ախչիգ կեղնի՛,
Օր խավնի քե, ա՛յ հայվան:

———————

Չվա — *մինչև*

Պարբաշի — *պարողների խմբի առաջնորդ*

Հալղը — *խալխը, ուրիշները*

Օքմի — *մարդ*

Յաշել — *նայել*

Կոլին — *կողին*

*

Ամպել ա, ամպի նման,
Շաքար եմ, ղանդի նման,
Մերս ինձի պահել ա
Ծաղկած գյուլվարդի նման:

*

Մանի ասեմ մի բերան,
Մեր տունը՝ ջուխտըմ գերան,
Սիրունը գեշի ծոցին,
Է՛յ վախ, հազար բերան:

*

Ես կուզեմ էն ըխճկանը,
Վեր խելունք ա նրա նանը,
Երբ վեր պերեմ մեր տոնը,
Հավան կենա մեր թանը:

*

Տանս տակը տախտան,
Հարս ու աղջիկ նի տյառան,
Ուզեցի մինը բռնեմ,
Լոխ ինձ մեր ու քիր դառան:

*

Վանքի տըկից ջուր կեթա,
Ղաթար օսկին զուր կեթա,
Ջայնամ էն ղաթար օսկին,
Մեռնիմ իմ յարի խոսքին:

*

Արի՛, յար ջան, արի՛,
Ջանգերի վախտ ա՝
Թե որ սիրենք, չառնենք,
Էդ էլ մի բախտ ա:

———————

Ղանդ — գլուխ շաքար

Տախտ — մարգագետին

Ղաթար — կույտ

*

Ջուր եմ դրել, կեծ ա,
Ոչխարիս աղաքը էծ ա,
Մեռնեմ միջի չոբանին,
Թագավորից էլ մեծ ա:

*

Ձեր բաղի դուռը բաց ա,
Ոտներս շաղով թաց ա,
Ինձանից հեռացել ես,
Աչքերս լիքը լաց ա:

*

Ձորի մեջը փուշ ա,
Ջեբս լիքը նուշ ա,
Ես կսիրեմ էն աղջկան,
Որի սիրտը քնքուշ ա:

*

Ապարանը քարոտ ա,
Քարի տակը արոտ ա,
Ուղիղ երկու տարի ա,
Յարը յարին կարոտ ա:

*

Սարի ճամփեն մե իզ ա,
Յարիս բոյը ֆիլիզ ա,
Շատ ման եկա, չգտա,
Սալըխն առա Թիֆլիզ ա:

*

Սարի թրթնջուկ թազա,
Յար ջան, մեջքդ մե մազ ա,
Ինձ պես նազանի աղջիկ
Քեզ պես տղին ոնց սազա:

———————

Իզ — *հետք, այստեղ՝ արահետ*
Ֆիլիզ — *սածիլ*
Սալըխ — *լուր*

*

Էրգիր, կարոդ ու երազ,
Մըչ իմ սրդին դու մուրազ,
Ե՞փ կբացվի ճար-ճամփեդ,
Ա՛խ, գամ, հնցիմ ես Արազ:

*

Զանդր բարը թնդա գու,
Առաճնորտը խնդա գու,
Քամաչաջին դառնա գու,
Փարըն ջագդին ֆռռա գու:

(Ծանր պարը թնդում է,
Առաջնորդը խնդում է,
Քամաչաջին դառնում է,
Փողը ճակտին ֆռռում է):

*

Բայն էլլողը ժաժվի գու,
Կայդին հեդը դարվի գու,
Քամաչաջի, զիլ չալա՛,
Գառը գառին շարվի գու:

(Պարի ելնողը շարժվում է,
Եղանակի հետ տարվում է,
Քամաչաջի, զիլ նվագիր,
Կեռը կեռին շարվում է):

*

Արտը հասել, կարմիր կուլա,
Սիրտս էղավ կավե գուլա,
Էրեկ ջահել, էրեկ կանաչ,
Կանցնիմ կերթամ, քուլա-քուլա:

———————

Քամաչա — *լարային գործիք*

Կեռը կեռին — *ճկուլթները ագուցած*

Գուլա — *կուլա, կուժ*

*

Ամպել ա քուլա-քուլա,
Եթումի սիրտը կուլա,
Եթումն օր ուրախանար,
Էլ ինչո՞ւ եթում կըմնար:

*

Կուրդիկ եմ կարել,
Թևերը լուլա,
Աղջկան տարան,
Մեր նստե, կուլա:

*

Մեր տան ճրաքն իմ մարթն ա,
Մեր խոխեքն էլ տան զարթն ա,
Աստոծ պահի էս օրենքը,
Վեր մըծանան իմ խոխեքը:

*

Սարի պես դարդ եմ քաշել,
Ջահել եմ, սիրտ եմ մաշել,
Հեռու ճամփեքի վրա
Դարդերդ ո՞նց եմ քաշել:

*

Մեր տան հետև դառտակ սել,
Ձեր տան հետև դառտակ սել,
Սաբիբն հելներ կատղուկ դել,
Իմ յար չէներ սիրու տեր:

*

Աչքերդ դեղ ես դրել,
Ընձի գժի տեղ ես դրել,
Անզգամի խոսքերով
Իմ վրես մեղ ես դրել:

———————

Սաբիբն — *պատճառ եղողը*

Դել — *էգ շուն*

Մեղ — *մեղք*

*

Ցորեն եմ ցանել,
Ծիլը կանաչ է,
Հեռու յար ունեմ,
Ականջը կանչէ:

*

Երդիկ-երդիկ բռնել ես,
Երդկատակին կռնել ես,
Նանս քեզ աղջիկ չի տալ,
Անուշ քունդ կտրել ես:

*

Գնացել ես, եկել ես,
Չարուխ-գուլպեդ պոկել ես,
Հերս քեզի աղջիկ չի տա,
Իզուր քունդ կտրել ես:

*

Բուխարա փափախ դրել ես,
Տղա, վիզդ ծռել ես,
Ընձեն քեզի ճար չկա,
Հեչ անունս տվել ես:

*

Բահը ուսիդ դրել ես,
Հանդ ու չոլը ջրել ես,
Հոգուդ մեռնիմ, յարո ջան,
Հեչ անունս տվել ես:

*

Աղջիկ, դու հուր ես, մուր ես,
Ես ծարավ եմ, դու ջուր ես,
Համբարձման գիշեր է, եկ,
Քեզ ման կգամ, դու ո՞ր ես:

*

Հնչի՛ հելար աչքիս տես,
Քու սավդից խիվանդ իմ ես,
Թե ճար ունիս, ճար էնա,
Չէ, աշխրքեն կերթամ ես:

*

Գնա դաշտը՝ կակաչ տես,
Լավ մտածի քեզուքեզ,
Իմ սիրտն էլ նրա նման,
Աշխատի՝ սև չթողնես:

*

Ա՛յ տղա, գնա կալը տես,
Պաղ հաղպրի սալը տես,
Իմ հեր քե աղջիկ չի տա,
Գնա գլխուդ ճարը տես:

*

Կայնել ես՝ ամբար կըտաշես,
Վերի մայլեն շատ կաշես,
Ընձնեն ղայդին յար ճարես,
Նոր շորերդ կըմաշես:

*

Նավը անցավ ծովի կես,
Սիրուն աղջիկ, նայի դես,
Յոթ տարի սիրել եմ քեզ,
Տանեմ պահեմ վարդի պես:

*

Նավը եկավ ծովի կես,
Կամար աղջիկ, շիտկի դես,
Քեզի սիրեմ տարիկես,
Տանեմ պահեմ հոգուս պես:

———————

Սավդա — *սեր*

Շիտկի — *նայիր, ուղղվիր*

*

Նավը հասե ծովի կես,
Կամար տղա, թեքվի դես,
Մաշիր կյանքս, թողիր կես,
Չեմ դիմանա առանց քեզ:

*

Ջուրն եկավ երես-երես,
Բազրգյան, աստված սիրես,
Բաշ-Շորագյալ գնալիս
Իմ յարին հետ կբերես:

*

Տղա, անունդ Հովհաննես,
Սարերում սեյրան կանես,
Առ ու ամոթ ունենաս,
Սիրած յարիդ կըտանես:

*

Ա՛յ տղա, սաթար ըլնես,
Սև հավի կատար ըլնես,
Մերս քեզի աղջիկ չի տա,
Որ սրտապատառ ըլնես:

*

Կտոր-կտոր վարել եմ,
Սիրուն աղջիկ ճարել եմ,
Գնացի տեսա՛ քնած ա,
Վարդն էրեսին փռած ա:

*

Ծառի տակը նստել եմ,
Լաչակս լվացել եմ,
Խաբար տարեք իմ նանին,
Էս դարդին տիրացել եմ:

———————

Բազրգյան — *կտորեղենի վաճառական*

Սեյրան անել — *զբոսնել*

Սաթար ըլնել — *տեղում նստել*

*

Ծառի տակին լացել եմ,
Լաչակս լվացել եմ,
Լաչակս ուռուքար ա,
Առածս մինուճար ա:

*

Բիջիգ վախտս գորաձ իմ,
Թուրկին ճայտըն փախաձ իմ,
Ետում էյը մեգ օր մը,
Հիմի դունդեղ ըղաձ իմ:
(Փոքր հասակում կորել եմ,
Թուրքի ջարդից փախել եմ,
Որբ եմ եղել ես մի օր,
Հիմա տունուտեղ եմ եղել):

*

Ղարաֆիլ ու դարչին եմ,
Գյուղամիջու յար չունեմ,
Յարս էկավ, դռնով անցավ,
Ջահել եմ, խաբար չունեմ:

*

Ջիավոր եմ, թամբին եմ,
Աչքով էն սև ամպին եմ,
Շատ ցավեր եմ ես տեսել,
Էլի ցավի ճամփին եմ:

*

Ես սարերին խոռնըն եմ,
Վենդը սաքյուլ կյոռնըն եմ,
Հու վեր ինձ ճընանչում չի,
Աշխեն նանուն թոռըն եմ:

———————

Ուռուքար — *թանկարժեք*

Ղարաֆիլ — *մեխակ*

Խոռ — *ուրց*

Վենդը սաքյուլ — *ոտքին սպիտակ նշան ունեցող*

Կյոռ — *գառ*

*

Կապույտ քուռակ հեծել եմ,
Արագին մոտեցել եմ,
Արագ, ընձի ճամփա տուր,
Իմ նանին կարոտցել եմ:

*

Օբա-օբա ծաղիկ եմ,
Թագավորի սանիկ եմ,
Թագավոր, թախտիդ մեռնեմ,
Շեկ տղա, բախտիդ մեռնեմ:

*

Սև եմ, սևավոր հավք եմ,
Դեղին թևավոր հավք եմ,
Ինձ բաց թողեք, որ թռնեմ,
Երամի սովոր հավք եմ:

*

Այ էլու եմ, էլու եմ,
Նշանլու եմ, բելու եմ,
Նանե ջան, բան մի ասա,
Ղարիբ եմ, էթալու եմ:

*

Կանաչ տեղը պարում եմ,
Պարի մեջը խաղում եմ,
Կաքավի պես նազելով
Տղաներին դաղում եմ:

*

Կալը ցորեն մաղող չեմ,
Չոլը բանջար քաղող չեմ,
Տունը կայնել են կռիվ,
Ես էդ տղին առնող չեմ:

Օբա — *տեսակ*

էլու եմ — *ուրիշի եմ*

Բելու — *հայտնի, նշանավոր*

*

Հանդեն բանջար բերող չեմ,
Կալը աշան էնող չեմ,
Բոյով եմ ու սոյով եմ,
Հիվանդ տղի լայեղ չեմ:

*

Դեզ եմ դրել, հավան չեմ,
Ինձուգլուխ դիվան չեմ,
Ինձ արխաջան մորթ արեք,
Ես էս յարին հավան չեմ:

*

Ելնեմ սարը, հարց անեմ,
Քարը գլխիս բարձ անեմ,
Ոչ անցնող կա, ոչ դարձող,
Յարոյիցս հարցնեմ:

*

Սարերի գինձն ինչ կանեմ,
Կաթնով սինձը ինչ կանեմ,
Ես սիրել եմ, ես կառնեմ,
Խոսք ու զրուցն ինչ կանեմ:

*

Սուրբ Հովհաննես ուխտ կանեմ
Մազերս ջուխտ-ջուխտ կանեմ,
Թե իմանամ՝ ինձ չես առնի,
Կըգնամ վրեդ գիր կանեմ:

*

Այ, ուխ կանեմ, ուխ կանեմ,
Մասրքու տակին ծուխ կանեմ,
Ով վեր իմ սիրածը խլի,
Թագն ու ուսկապը թուխ կանեմ

———————

Աշան անել — *հասկերը կալում փռել*

Արխաջ — *փարախ*

*

Վարթի տակին կար կանեմ,
Վարթը դոշես կախ կանեմ,
Տեսնեմ՝ յարս կյալիս ա,
Ասեղը ծեռես թոլ կանեմ:

*

Մեր դռանը վար կանեմ,
Սև ագռավին քար կանեմ,
Իմանամ՝ յարիս կառնեմ,
Գժությունս թարգ կանեմ:

*

Բամբակները լոզ կանեմ,
Տակները գյոլ-գյոլ կանեմ,
Ափսոս իմ բլբուլ լեզուն,
Որ գնացիր՝ լալ կանեմ:

*

Նունի, նունի, նուն ունեմ,
Ես մի պուճուր տուն ունեմ,
Կորի, գնա, ա՛յ տղա,
Քեզ պես հազարը ունեմ:

*

Այս տարի կանեփ ունեմ,
Կանեփս մաղող չունեմ,
Հորս կասեմ, թե կարգի,
Մերս կասե՝ փարա չունեմ:

*

Դարի գլխուն տուն ունեմ,
Մեջը օսկե սուն ունեմ,
Սուն ու գերան բար պիտի,
Սրտով սիրած յար պիտի:

Լոզ — *կնգուղ, նաև ծայրը կեռ ոսանակ*

Գյոլ-գյոլ կանեմ — *կլիացնեմ*

Բար պիտի — *խերով, բարիքով լինի*

*

Վերին Ջաղեն արտ ունեմ,
Շատ մարդ գիտա դարդ չունեմ,
Դարդս ինձի տարել ա,
Ջահել եմ, խաբար չունեմ:

*

Ես ղարիբ եմ, տուն չունեմ,
Գիշերները քուն չունեմ,
Հարցուփորց արեք՝ տեսնեմ,
Յարաբ, յարիս երբ կտեսնեմ:

*

Ընկել եմ ու ճար չունեմ,
Ջահել եմ, խաբար չունեմ,
Խաբար տարեք իմ յարին,
Ընձնեն էլ գյուման չունեմ:

*

Աշուղ եմ, աշուղ, թառ չունեմ,
Սիրահար եմ, յար չունեմ,
Կորցրել եմ իմ յարին,
Էլ գտնելու ճար չունեմ:

*

Հիվոնդ իմ, հալիգ չունիմ,
Ղարիբ իմ, մարիգ չունիմ,
Ընգած իմ ձովուն օռտըն,
Էլլուշի ջար մը ալ չունիմ:

(Հիվանդ եմ, հալիկ չունեմ,
Ղարիբ եմ, մայրիկ չունեմ,
Ընկել եմ ծովի մեջտեղը,
Ելնելու ճար էլ չունեմ):

———————

Յարաբ — *արդյոք*

Գյուման — *հույս*

*

Յար, նստի գինի բերեմ,
Ոչխարի մածուն բերեմ,
Իմանամ, որ յարս ես,
Սիրով, սրտով կսիրեմ:

*

Վեր կյամ ծորան ճուր բերեմ,
Մի փունջ ծաղիկ ալ քաղեմ,
Շուտ ետ դառնամ մեր սարը,
Հունձս արտան տուն բերեմ:

*

Քյաքյուվիդ կալին մեռնեմ,
երեսիդ խալին մեռնեմ,
Լսել եմ՝ կարդացող ես,
Սաղմոսիդ տառին մեռնեմ:

*

Ճղացի տյուռը տաշեմ,
Յալլախիս գյուլը նախշեմ,
Ախպեր, աղլուխդ տուր նախշեմ
Վարդով լցնեմ, քեզ բախշեմ:

*

Վիճակ ասեմ, կամաչեմ,
Ծլեմ-ծաղկեմ, կանաչեմ,
Կանաչ թեբուր մեյդան ա,
Տեսեք յարս ընդեղ ա:

Ծորան — *ձորից*

Յալլախ — *թաշկինակ*

Թեբուր — *փետուր*

*

Աչքերուդ մեռնեմ.
Ղալամ կբռնեմ.
Թե որ կարանամ,
Նամակ կգրեմ:

*

Բոստանս ցանեմ համեմ,
Սիրտս սրտիդ մեջ քամեմ.
Բլբուլ դառնամ. յարո ջան,
Մի կուշտ անուշ երգ ասեմ:

*

Սազն առնեմ ձեռս. քոքեմ,
Գամ ձեր դռանը չոքեմ.
Բալքի ես մեկ հնարով
Քեզ էդ տեղիցը պոկեմ:

*

Ես աղջիկ եմ. մալ կուզեմ,
Բոյովս մեկ շալ կուզեմ.
Երբ որ եկա ձեր տունը.
Ոսկին շարեշար կուզեմ:

*

Գրքոն պարգե վըր դեզին.
Գողդու կիշկա Նարգզին.
Էրթամ հուզիմ մըչ աշնան.
Գրքո-Նարգիզ կսազին:

*

Արի. յար ջան. ես ըզին.
Մարալ. ջեյրան բուրդ գզին.
Սիրած սիրածի չեն տա.
Մեղքը հոր ու մոր վզին:

Հուզիմ — ուզեմ

Ըզ — հզ. հետք. ուղղություն

*

Գնացի թուրքի Թալին,
Բերեցի բոյով հայլին,
Հայելին բոյովս չէ,
Սիրել եմ, սրտովս չէ:

*

Վիճակ դրի վըր փլին,
Պրծավ հնգավ մըջ տլին,
ես չեմ առնե գեշ տղին,
Կեթամ կառնեմ էն տղին:

*

Ծաղիկ եմ ծաղկանց միջին
Մի հատ եմ բաղի միջին,
Յար, ինձ պարզերես արա,
Քո ընկերներիդ միջին:

*

Բոստան եմ դրել ճամփին,
Ընկել եմ գեղի լամփին,
Ընենց մի յար եմ ճարել,
Կցոլա կժի կանթին:

*

Ջուրն եկավ արփին-արփին,
Կթափի վերին քարափին,
ես ղուրբան եմ իմ յարին,
Համ դուրգյար ա, համ դարբին:

Փռլ — *թումբ*

Տիլ — *ցեխ*

Լամփ — *ասեկոսե*

Դուրգյար — *հյուսն*

*

Հանդումը նստեմ քարին,
Նամակ գրեմ իմ յարին,
Որ կարդա, ուրախանա,
Մինչև լրանա տարին:

*

Կաքավը կայնավ քարին,
Կտուցը լիքը արին,
Մի դաստա վարդ եմ քաղե,
Տարեք տվեք իմ յարին:

*

Կաքավը նստել ա քարին,
Նամակ տամ, տար իմ յարին,
Ասա, թող նամակ գրի,
Կարոտ եմ նրա գրին:

*

Հելիմ կայնիմ վըր սարին,
Զեն տամ կարիբ իմ յարին,
Իմ ձեն թըխ առնի, հիմնա,
Օր կարոդցեր իմ ուրին:

*

Մանուշակ թփի տակին,
Զվածեղ խփի տակին,
Կորած յարիս գտել եմ
Խնձորի ծառի տակին:

*

Ռեհան եմ թփի տակին,
Զվածեղ խփի տակին,
ես մի տղի սիրեցի
Մեր դռան թթի տակին:

Հիմնա — *իմանա*

Ուրին — *իրեն*

*

Գութանը Վանա փոսին,
Շողն ա առել ակոսին,
Նանե ջան, աստված սիրես,
Հաց տուր, տանեմ քու փեսին:

*

Սիրել եմ՝ սերն հերեսին,
Անթառամ թելն հերեսին,
Ով իմ սիրածն ինձ չտա,
Ասու կրակն հերեսին:

*

Մեր տոնը քըրծի պաշին,
Աչկս կալած էս մեր շաշին,
Մթնըմ ա, տոն չի կյամ,
Իմ ըշկերին քոն չի կյամ:

*

Ես ղուշ եմ, թևս դեղին,
Ման կուգամ յարիս գեղին,
Իմ ջանը ղուրբան կտամ
Յարիս ցավացող տեղին:

*

Աղբերս կայնե գերանին,
Ոսկե թութակը բերանին,
Տափակ ջահուկ եմ գործե,
Դնեմ չուխի բերանին:

———————

Հերեսին — *երեսին*

Ասու — *աստծու*

Տոնը — *տունը*

Քըրծի պաշին — *քերծի գլխին*

Թութակ — *շվի*

*

Խաղ եմ ասում խաղի գլխին,
Բլբուլենց բաղի գլխին,
Գիշերները խաղ եմ ասում,
Ցերեկները տաղ եմ ասում:

*

Կայնել ես վարդի հովին,
Քամին տա կրծքիդ մովին,
Երեսիդ շողին մեռնեմ,
Աչերիդ կապույտ ծովին:

*

Արև դիպավ մեր պատին,
Ոչ օղորմի մեր տատին,
Էս լեն ու բոլ աշխարհքին,
Մեզ էլ տվեց աղքատին:

*

Կապույտ քուռակ մըչ խամին,
Ոտս դրի վըր գեմին,
Ես սիրել եմ, ես կառնիմ,
Ի՞նչ բդի էնա ամին:

*

Այեր էնեմ օրորոցին,
Իմ անուշիկ գրկանոցին,
Օրորոցի բնդեր խառ ա,
Մըչի քնող պստի գառ ա:

———————

Խամ — *անմշակ հող*

Գեմ — *սանձ*

Ամի — *հորեղբայր*

Այեր էնեմ — *նանիկ ասեմ*

Գրկանոց — *գրկի երեխա*

Բնդեր — *կապեր*

*

Ջեյրան թոփեր կապեցին,
Կարսա վրեն թափեցին,
Կարսա բոլոր խանդաք ա,
Մեջը հազար ջանդակ ա:

*

Ծաղիկ ես բաղի միջին,
Կաքավ ես քարի միջին,
Երգում ես բաղի միջին,
Կրակը սրտիդ միջին:

*

Յարս կայնեց կամրջին,
Ոսկե գնդերն անգջին,
Ուսին գցել յափնջին,
Խաբար տարեք զոքանչին:

*

Մանդարինին դերևնին
Տեղնին-տեղնին չին թապիլ,
Մեր կեղի աղջկնին
Խոսք գուդան ու չին խապիլ:

*

Արևից հով կընգնի,
Երդիկից շող կընգնի,
Իմ յարին միշտ հիշելիս
Աչքերես ցող կընգնի:

*

Ջաղացս մանի-մանի,
Շեկ աղջիկ հաց կտանի,
Մեկ կքելա, մեկ կկայնի,
Խելք ու միտքս կտանի:

———————

Խանդաք — *խորը փոս, խրամատ*

*

Մաղն առա գացի ցանի,
Ջեբես մի խնձոր հանի,
Տեսա՝ յարս ընդեղ չի,
Սրտիցս խոր ա՛խ հանի:

*

Շիվ-շիվ գտակ Շիրվանի,
Քամին թել-թել կտանի,
Մի՛ մեղք դրեք, մեր ու քուր,
Սերը յաման կտանի:

*

Մազեր ունեմ ծիրանի,
Չեմ տա հազար թումանի,
Կտամ մի բազրգյանի,
Դնե ղութիկն ու տանի:

*

Ծամըմ ունեմ ծիրանի,
Քամին թել-թել կտանի,
Տանենք դնենք դիվանի,
Ով կսիրի, թող տանի:

*

Աղջիկ ունեմ նմանի,
Չեմ տա հազար թումանի,
Կտամ մի բազրգյանի,
Դնի ձիուն ու տանի:

*

Մատումս կա մատանի,
Համ թառ ա, համ ծիրանի,
Եկեք քինանք դիվանի,
Ով կսիրի, նա տանի:

Ղութիկ — *արկղիկ*

Թառ — *կապույտ*

*

Մեր դռանը ծիրանի,
Խուրմեն ինչպես Իրանի,
Ով որ սիրե ու առնի,
Նրան հազար երանի:

*

Նանի, նանի, ա՛յ նանի,
Գուլպես քաշի, այ նանի,
Կաց Դվալը անց կենամ,
Ծափ ու ծիծաղ, ջա՛ն նանի:

*

Աղջիկը նանին հաց տանի,
Սինձը քաղի, դաստ անի,
Տենա՛ նանը տանը չի,
Ձեռին բռնած դուրս տանի:

*

Վարդի թփին փուշ կըլնի,
Վատը լավին դուշ կըլնի,
Երանի էն աղջկան,
Որ իր յարին թուշ կըլնի:

*

Սարը սարին թուշ կըլնի,
Սարի գլխին ղուշ կըլնի,
Յարը յարին որ տեսնի,
Սիրտը աջլմիշ կըլնի:

*

Բաղում ծիրան կլինի,
Ուտող բերան կլինի,
Մեծ ախպեր ջան, առանց քեզ
Բաղը վերան կլինի:

———————

Դվալ — *լեռնանցք*

Դուշ, թուշ — *զույգ*

Աջլմիշ կըլնի — *կթրթռա*

*

Ալուր մաղիմ, թեփ գըլլի,
Թաթառլոմն եփ գըլլի,
Թաթառլոմին ումուդին
Թըմպալ մաշտը չոփ կըյնի:
(Ալյուր մաղեմ, թեփ կլինի,
Թաթառլոմը եփ կլինի,
Թաթառլոմի հույսին
Ծույլ մարդը վեր կընկնի):

*

Չայնիգը կապաղ չունի,
Գնկարը փափախ չունի,
Գնկագինը բայն էլավ,
Գնկարը խաբար չունի:
(Թեյնիկը կափարիչ չունի,
Կնքահայրը փափախ չունի
Կնքակինը պարի ելավ,
Կնքահայրը լուր չունի):

*

Կաքավը քարին բուն չունի,
Որբ աղջիկը տուն չունի,
Ինձ նման սևաբախտը
Գիշերներն էլ քուն չունի:

*

Ա՛յ տղա, հոտով-մոտով,
Հերիք անցնես իմ մոտով,
Կդառնամ, զարկեմ նետով,
Արյունդ կանեմ գետով:

*

Ծաղիկ ես հոտով-մոտով,
Եկա անցա քո մոտով,
Սիրեցի, յար, ես քեզի,
Աչքս մնաց կարոտով:

———————

Թաթառլոմ — *ճաշատեսակ*

*

Վարդ եմ քաղե մաղերով,
Վեր եմ դրե շաղերով,
Հրես էկավ իմ ախպերս,
Ալ ձին տակին խաղալով:

*

Բաղըմ ունիմ բաղերով,
Մեջը լիքը գառներով,
Գառները մատաղ կանեմ
Ազիզ ախպորս ձեռներով:

*

Թոռ ա կյամ շըղալավ,
Կանաչ տիրև տուղալավ,
Հրես կյամ ա իմ ախպեր,
Սև ծին տակին խըղալավ:

*

Կետ ա քինում լափ տալավ,
Ջուխտ խնձորին ծափ տալավ,
Հրես եկավ իմ ախպեր,
Թաշկինակը թափ տալավ:

*

Անձրև ա կյալի շաղերով,
Մանրատիրև դողալով,
Արի քինանք խաչ նշան,
Իմ մատանին քեզ նշան:

*

Օրը տաք ա, թոռ չկա,
Արտըմս ալ հասկ չկա,
Տանս մեչին հաց չկա,
Դարդիս դարման անող չկա:

———————

Կետ — *գետ*

*

Թոնդիր վառեմ, ցան չկա,
Ապուր եփեմ, թան չկա,
Կորի գնա, շան տղա,
Քու տունդ գդալըմ չկա:

*

Ծաղկավանք ծաղիկ չկա,
Իմ յարին մայրիկ չկա,
Իմ յարի մերը խորթ ա,
Վախենամ ընձի մորթա:

*

Ջրերն ելան, տեղ չկա,
Ջրերին կամուրջ չկա,
Ես մի անբախտ աղջիկ եմ,
Ուր որ գնամ, ճար չկա:

*

Ալադաղեն խով գիքա,
Իմ աչքերուն քուն չիքա,
Յարս ֆիդայ ա դառե,
Սար ու ձորեն տուն չիքա:

*

Մանգաղները սրեծի,
Ցորիննները քաղեծի,
Ախճիգ, քու սիրուն ճագդիտ
Օսկիները շարեծի:

*

Մընի, մընի, մոնեծի,
Օսկի թելը կոյձեծի,
Օնուշ-օնուշ խոսելըն
Յարիս սիյդը շինեծի:

(Մանի, մանի, մանեցի,
Ոսկի թելը գործեցի,
Անուշ-անուշ խոսելով
Յարիս սիրտը շահեցի):

*

Գաղնի ճուխկը ձռեծի,
Չավրաս դագը փռեծի,
էլի, հայի չաշեծի,
Քեզի նամագ կրեծի:

*

Ելա սարը աշեցի,
Կաթի սերը քաշեցի,
Ելա սարը, սար տեսա,
Խաս շորերով յար տեսա:

*

Ա՛յ սառն աղբյուր, զուլալ ջուր,
Հեր ու մեր, աչքերդ կուր,
Հարուստ տեղին մի՛ք նայիլ,
Տղին տես՝ աղջկանդ տուր:

*

Բարակ առու, զուլալ ջուր,
Աղջի, դառի ջուղաբ տուր,
Թե առնում ես, ումուդ տուր,
Թե չես առնում, թարգը տուր:

———————

Չավրա — *չարսավ, սավան, ծածկոց*

էլի — *օտարի*

Ջուղաբ — *պատասխան*

Ումուդ — *հույս*

*

Տղա, բուռըմ հատիկ տուր,
Աչքիդ տըկով մտիկ տուր,
էդ էլօղլու վատ խոսքը
Վերցրու ու պատով տուր:

*

Ա՛յ տղա, հիլ անիլ տուր,
Մատնաչափ գիր անիլ տուր,
Ինձնից էլ քեզ ճար չկա,
Քյաքուլդ վեր անիլ տուր:

*

Ջաղացը կաղա ալյուր,
Դուշմանի դուռը մալուր,
Յոթը հարս որ ունենան,
Չտեսնեն քյորփա բարուր:

*

Բաղչի մեջը պաղ աղբյուր,
Ա՛յ տղա, արի, տար քո քուր,
Քո քուրն ընձի հավան չի,
Տար ընձընից լավին տուր:

*

Ծառի տակին կա ախպուր,
Էրծաթե ջամ, ոսկե ճյուր,
Մինը ես խմեմ, մինը տյու,
Անուշ կենանք ես ու տյու:

*

Գյանջից էկավ բեռըմ նուռ,
Էկավ հիճավ ժամու դուռ,
ժամու դռան ավելը,
Ես էլ ջոկի լավերը:

Մալուր — *տխուր, մոլոր*

Ջամ — *թաս*

*

Ցանք իմ էնե ես բուռ-բուռ,
Անձրևու տեր, անձրև տուր,
Իմ ճժերուն օր խղջաս,
Մադաղ կառիմ գամ քու դուռ:

*

Ջրի էս կուռն, էն կուռը,
Քաղել եմ փեշով նուռը,
Փեշով նուռը ինչ կանեմ,
Ինձ տարեք խանի դուռը,
Խանի շհարը թող փուլ գա,
Բալքյամ իմ յարը տուն գա:

*

Կանգնեմ գետի էն կուռը,
Կքաղեմ դաստով ուռը,
Թե որ սիրածս ինձ չտան,
Կքաշեմ խանի դուռը:

*

Աղջիկ եմ, ալս քեզնեն,
Քար ու չախմախս քեզնեն,
Մեռնիմ, էղնիմ գերեզման,
Սերս չի կտրի քեզնեն:

*

Ելել եմ Հասան-Ղալեն,
Քաղել եմ դաստա լալեն,
Ի՞նչ անեմ դաստա լալեն,
Խորունկ ա սրտիս յարեն:

Շհար — *քաղաք*

Բալքյամ — *գուցե*

Ալս քեզնեն — *յավ օրս քեզանից*

Լալա — *կակաչ*

*

Յարդ ա կայնե քուչեն,
Աղջի, թափ տու էդ քեչեն,
էդ քու արած դարդերը
Հարցրու սրտիս մեջեն:

*

էրկանքը աղի վրեն,
Շամամը թաղի վրեն,
Մեկ շամամ եմ, մեկ թաղ եմ,
Ոչ մեռած եմ, ոչ սաղ եմ:

*

Արև եմ՝ սարի վրեն,
Մամուռ եմ՝ քարի վրեն,
Օխտը խանա խաղ գիտեմ,
Օխտն էլ իմ յարի վրեն:

*

Հելիմ էրթամ սար սնձի,
Ախչի, պաքըմ տուր ընձի,
Գիշեր-ցերեկ քե խեդ եմ,
Վա՛յ թե ցնդըցուս ընձի:

*

Բուրդ պիրեք, պեժինք անենք,
Ուխտերը պեռնենք, տանենք,
Թուխ ղոչը մատաղ անենք,
Ոսկոռը չարդախ անենք:

*

Ծարավալ եմ, ճուր պերեք,
Խոտու ձորան հուն պերեք,
Արևն էրեց, խրովեց,
Ղալուջան էլ ճուն պերեք:

———————

Ղալուջա — սարի անուն է

Ճուն — ձյուն

*

Վարտերը քաղել դվի,
Ջերմագ ձին նալել դվի,
Հերիկ վույիս, ախճիգս,
Խաս շորեյդ գարել դվի:
(Վարդերը քաղել տվի,
Ձերմակ ձին պայտել տվի,
Հերիք լաս, աղջիկս,
Խաս շորերդ կարել տվի):

*

Մեր թաղը նռնի ղրկի,
Նամակս գրի, ղրկի,
Բան է, թե թուղթ չճարես,
Տերևին գրի, ղրկի:

*

Մի ծառ ունեմ թբլղի,
Պտուղն էր օձի լեղի,
Իմ հորն ու մորն ինչ ասեմ,
Ինձ տվին ղարիբ տղի:

*

Էս սարը մեզի-մեզի,
Ձիավոր, մեռնեմ քեզի,
Ծոցիդ թասով ջուրըմ տուր,
Մեծընամ, կառնեմ քեզի:

*

Քամին եկավ հավալու,
Աղջի, դու ես նշանլու,
Եկան քեզի տանելու,
Բոխչեդ մնաց կապելո՛

———————

Թբլղի — *կարմրան, թփի տեսակ*

*

Ծիրանի ա. սալորի,
Ախչի, մազդ ոլորի,
Ով որ սիրի ու չառնի,
Հոգին փորում մոլորի:

*

Էստեղ խնոցի հարի,
Տղա, մեր դռնով արի,
Մեկ աչքս բոյիդ առնի,
Նոր աստված հոգիս առնի:

*

Մազերս թափ եմ տալիս,
Ձեռքերս ծափ եմ տալիս,
Գցել եմ էսօր-էգուց,
Գալողին խափ եմ տալիս:

*

Վարսերդ թափ ես տալիս,
Ձեռքերդ ծափ ես տալիս,
էսօր-էգուց ասելով
Ամեն օր խոսք ես տալիս:

*

Յեշում ըմ, ըրևում չի,
Ծառերը տիրևում չին,
Քանի վախտ ա տեսնում չիմ,
Խելքս էլ կլխուսս չի:

*

Քարափի ծերեն կանչի,
Թող թշնամին ամաչի,
Բոյիդ մեռնեմ, յարո ջան,
Չինարի պես կանաչի:

Յեշում ըմ — նայում եմ

*

Բաղըմս կա բաղմանչի,
Շևը շևին նման չի,
Թաղ ու թառակ տյուս տառան,
Մինն էն յարին նման չի:

*

Աչքերդ բիլոր-բիլոր,
Ի՞նչ ման կուգաս իմ բոլոր,
Մեռնիմ բիլոր աչքերիդ,
Երեսս կաշես խոլոռ:

*

Սարից ելավ ձիավոր,
Սաղմոսը ծոցին սովոր,
Սաղմոսը վարդ էր դարձել,
Լեզուն բլբուլ էր դարձել:

*

Ընկա արտը, բռնի լոր,
Աղջիկ տեսա յայլի ձոր,
Հագած-կապած ման գուքար,
Նման էր կարմիր խնձոր:

*

Ուռի ծառին բար չինիլ,
Տափը քարավ վար չինիլ,
Էն աստուցը, էն արևը,
Սիրու տերին ճար չինիլ:

Շև — *շիվ*

Բիլոր — *կլոր*

Թաղ ու թառակ — *ողջ թաղը*

Խոլոռ — *խոժոռ*

Բար — *պտուղ*

Չինիլ — *չի լինի*

*

Էլման էգավ մե գարուն,
Լագլագ հիչավ վըր ուր բուն,
Ճամփութ կիշկիմ, թառլան յար,
Հորի՞ հեռվից չիքաս տուն:

*

Տերդեր կայնե մըչ ժամուն,
Բուրվառ կիդա հա՛ քամուն,
Օրշնաձ մե բան ա սերդե,
Ալելու, հա՛ ալելու:

*

Ֆալաքն ընձի ալ էրեց,
Բլբուլ լիզուս լալ էրեց,
Ես ի՞նչ ասեմ ֆալաքին,
Ընձի դարբեդար էրեց:

*

Զեթ եմ առել լիսացու,
Կանաչ ղըրմա քիսացու,
Դու իմ նանին հարսնացու,
Ես քու նանին փեսացու:

*

Սարից ելավ երկու մուխ,
Մեկը հանգավ, մեկը՝ ծուխ,
Կորցրել եմ լաչին քուր,
Քիթը կալնած, վարսքը թուխ:

———————

Լագլագ — *արագիլ*

Դարբեդար էրեց — *սարեսար գցեց*

Լալ էրեց — *լռեցրեց, համրացրեց*

Ֆալաք — *ճակատագիր, բախտ*

Ղըրմա — *կտորի տեսակ*

Լաչին — *բարձրահասակ, գեղակազմ*

*

Գուրջի Ալեք յեներալ,
Էգավ կայնավ Բրսոյ կալ,
Ասկյար քընց շուն կփախի,
Մըչ ընդոց էլ չկա հալ:

*

Ջաղացս կաղա ալուր,
Դուշմանի սիրտը մալուլ,
Ես եմ սիրել, ես կառնեմ,
Թող հետը բերի բալուլ:

*

Ջաղչի դուռը բուռ կանանչ,
Յար, դո՞ր կեթաս անճանանչ,
Դոր որ էթաս՝ հետդ եմ,
Ալ խնձոր եմ, ջեբդ եմ:

*

Սարեն եկավ երկու ղոչ,
Մինը փնջած, մինը՝ ոչ,
Աստված, դիվանիդ մեռնեմ,
Մեկին կտաս, մեկին՝ ոչ:

*

Բարի լուս ջան, բարի լուս,
Աստված պախա մեր էրկուս,
Ձեռ տանք ձեռի, հելնենք դուս,
Դուշման տենա, կտրի լուս:

———————

Յեներալ — *գեներալ*

Մալուլ — *տխուր*

Բալուլ — *բարուր*

*

Կետի էն ղոլը յըղնծաղիկ,
Էս մի ղոլը տըղնծաղիկ,
Խախալ պիրեք, պտուտ տամ,
Ես իմ յարին մտիկ տամ:

*

Վրցակը բաղումը,
Վնդերը շաղումը,
Ես մի փունջ մընեշակ պտի
Իմ ախպոր փըփախումը:

*

Օչխարը քաշեցին դյուզը,
Ջոկեցին ղարագյոզը,
Ղրկե փեշկիրդ, լվամ,
Առնեմ քյանքուլիդ թոզը:

*

Թոխպը կալեց ձորերը,
Կուրցրալ եմ հոլերը,
Իմ մարթս տանը նստած,
Ես ինգալ եմ չոլերը:

*

Արի, յար ջան, արի,
Գնանք սարերը,
Ես պահեմ ոչխարը,
Դու՝ մանդր գառները:

Խախալ — *մեծ անցքերով մաղ*

Վրցակ — *աքլոր*

Վնդերը — *ոտքերը*

Հոլ — *ուլ*


Zwölf Gulyetup



ԵՐԿԻՆՔ ԵՎ ԱՍՏՂԵՐ

*

Խալիչա ունեմ,
Թափ տալ չի լինի,
Ոսկի ունեմ,
Համրել չի լինի:

*

Մենձ տուն,
Հազար ճրագ,
Ոչ սին ունի,
Ոչ գերան:

*

Գոմշի կաշին ծալվիլ չի,
Խուրդա փողը հըմբրվիլ չի:

ԱՐԵՎ ԵՎ ԼՈՒՍԻՆ

*

Ա յ լարի-լարի,
Երկու կաքավ
Գնում են, գալի:

*

Մեգ թավի մեջ
Էրգու ձու էր:
Մեգը տաք էր,
Մեգը պաղ էր:

*

Էրկու ձուկ՝ մեկտեղ տապկուգ,
Մեկ ունի պաղ երես, մեկ էլ՝ կրակ երես,
Մեկ կփըչա պաղուկ-պաղուկ,
Մեկի աչքեր՝ կրակ-վառուկ:

ԱՐԵՎ

*

Տաքացնըմ ա՝
Կրակ չի,
Լիս ա տալի՝
Լամփա չի:

*

Պլոլիկ ա՝ ակ չի,
Կարմրած ա՝ շաջ չի,
Լիս ա տալի՝ ճրաք չի:

*

Կարմիր բաղարճ,
Հըզարի առաջ:

*

Ինձ յեշես՝
Աչքերդ ծըկոտեմ:

ԱՐԵՎԻ ՃԱՌԱԳԱՅԹ

*

Ավլած, իստկած,
Ոսկի սուննն էլ
Մեջը տնկած:

*

Ի՞նչ թուր ա.
Գլխիդ ընգնի՝
Կտրիլ չի:

*

Օճորքիցը մտավ ներս,
Թե որ կարաս՝ կբռնես:

*

Թուրը վեր ընկավ,
Ձեն չելավ:

*

Հոս պուպուս,
Հոն պուպուս,
Երթիկից դուս:

Պլոլիկ — *կլոր*

Շաջ — *բով, որի վրա հաց են թխում*

ԼՈՒՍԻՆ

*

Սարի հետև թասով մածուն կա դրած:

*

Երեսուն օր ապրըմ ա ու մեռնըմ,
Էքսի օրը թազա ծնվըմ ա:

*

Տասնհինգ թոնրից
Մի կրկենի ա տառնըմ:

*

Քրիստոսից աղաք ա ծնվել,
Համա երեսուն օրական ա:

ԼՈՒՍԻՆ ԵՎ ԱՍՏՂԵՐ

*

Կարմիր թուխս,
Հազար ճուտ:

*

Մի հովիվ կա,
Ոչխարներին գիշերն ա արածացնում:

*

Չոբանը ոչխարի սուրուն տանըմ ա ծովը:

ԱՍՏՂԵՐ

*

Ցերեկը քուն են ըլում,
Քշերը՝ զարթնում:

*

Մաղըմ չորթանը
Դրինք երդիկը,
Առտուն ելանք՝
Բանըմ էլ չկար:

———————

Աղաք — *առաջ*

Կրկենի — *բաղարջ*

ՏԱՐԻ, ՏԱՐՎԱ ԱՄԻՍՆԵՐ

*

Տասներկու մոզի
Անցան առանց թոզի:

*

Մի ծառ կա,
Վրեն տասներկու ճյուղ,
Չորս նուռ:

ՇԱԲԱԹ, ՇԱԲԱԹՎԱ ՕՐԵՐ

*

Մի քիր են,
Օխտը ախպեր:

ՕՐ, ՑԵՐԵԿ, ԳԻՇԵՐ

*

Մի խնձոր,
Կեսը՝ սպիտակ, կեսը՝ սև:

ԳԻՇԵՐ

*

Սև արաբը գեղը մտավ,
Գեղը վախից տեղը մտավ:

*

Սև սատանեն պեխն օլորեց,
Հազար-հազար մարդ գլորեց:

ԱՄՊ

*

Թռչըմ ա՝ ղուշ չի,
Թրջըմ ա՝ ջուր չի:

*

Մի էրգան սփռոց ունիմ,
Ինչքան ուզես ծալ քցիս՝ կարալ չիս:

ՕԴ

*

Փչես՝ կերթա,
Բայց բռնել չես կարա:

*

Քյնըմ ա, քյնըմ,
Էլ ետ չի կյալի:

ՈՐՈՏ, ԱՄՊ, ԱՆՁՐԵՎ, ԿԱՅԾԱԿ

*

Գոռըմ ա՝ բուղա չի,
Կաթն ա տալի՝ կով չի,
Բոց ա տալի՝ քուրա չի:

ՄԱՌԱԽՈՒՂ

*

Վետ չունի՝ ման ա կյալի,
Բերան չունի՝ կուլ ա տալի:

ՔԱՄԻ

*

Քյնըմ ա, քյնըմ,
Հետքը կա վեչ,
Կոտորում ա, կոտորում,
Արուն կա վեչ:

ԿԱՅԾԱԿ

*

Մըխ զարգեմ տանիս,
Ձեն կերթա Թիֆլիս:

ԾԻԱԾԱՆ

*

Սիրուն կամար,
Երկնքի քամար,
Հասնողին նամար:

ԿԱՐԿՈՒՏ

*

Ելա լեռը, քաշի թելը,
Թափավ խոշոր սիսեռը:

*

Պզտի-պզտի մանչեր էկան,
Արտի վրա տռճիկ տվին:

Մըխ — *մեխ*

Տանիս — *տանիք*

Նամար — *նվեր*

*

Թըխ,թըխ, տախտակ,
Հերկեն վիզ լագլագ,
Շալե շապիկ ծակծակ:

*

Էլանք պերթ,
Պարցանք սիսեռ,
Կտրավ լարան,
Թափավ սիսեռ:

*

Նստիմ հով,
Կթիմ կով,
Ջմպիկ զարկեմ,
Ընկնեմ ծով:

ԱՆՁՐԵՎ

*

Էռնունծը ձնվի գու,
Խողին թաղվի գու:
(Երկնքում ծնվում է,
Հողում՝ թաղվում):

ՁՅՈՒՆ

*

Կգա աղի պես,
Կնստի փաշի պես,
Կերթա բոշի պես:

*

Երկնքից իջավ մի ղուշ,
Ոչ բերան ունի, ոչ էլ փուշ:

*

Առավոտ ելա, էլըմ տեսա,
Ջարմանալի գելըմ տեսա.
Ինքը ծնավ, ինքը կերավ:

———————

Լարան — *լար*

ԱՅԳԻ

*

Մի կով ունեմ՝ հանդըմն ա,
Պոզերն Սպահանըմն ա,
Տարին մի հետ կիթ կտա,
Էն էլ հա՛ հանդըմն ա ու հանդըմն ա:

ԾԱՌ

*

Քյնըմ ա, քյնըմ,
Տյառ իրան տեղն ա:

*

Գլխիտ վերև
Հազար տերև:

*

Ծմեռը տաքացնելի,
Կյարունը ուրախացնելի,
Ամառը խովացնելի,
Աշունը կշտացնելի:

ՀԱՃԱՐ

*

Երկու խոխա,
Մի չոխա:

ՆՈՒՌ

*

Մանրիկ-մանրիկ եկեղեցի,
Դանկով զարկի, դուռը բացի,
Մեջը սիրով համբուրեցի:

*

Պիծի պտրհանը
Շեղճովը լիքը:

*

Կարմիր հինեմ,
Կանաչ գործեմ,
Կարմիր կտրեմ:

*

Ուլուլիկ-պուլուլիկ,
Մեջը լիքը շողան ուլինգ:

———————

Չոխա — *բարուր*
Պիծի — *փոքր*
Պտրհան — *որմնախորշ*
Պուլուլիկ — *փոքրիկ, սիրունիկ*
Ուլինգ — *ուլունք*

ԸՆԿՈՒԶԵՆԻ ԵՎ ԸՆԿՈՒՅԶ

*

Ծիից մեծ,
Ծվից կուճուր,
Կաթից անուշ:

*

Դավին նանա մըծ,
Ծըվին նանա կուճի:

ԸՆԿՈՒՅԶ

*

Մի թոռոն, էրկու հաց,
Միել մի չոլ մեծ կուտ:

*

Մութը խորան,
Ջուխտ ավետարան:

ԿԱՂԻՆ

*

Պիճի կճուճ,
Համով ապուր:

ԹՈՒԶ

*

Ծառի վրա կորեկի հոր:

ՓՇԱՏ

*

Կարած պարկ,
Ալրավ լիքը:

*

Ամբարըմ ալուր ունիմ,
Ջաղաց մտած չի:

———————

Թոռոն — *թոնիր*

Պիճի — *պուճուր, փոքր*

*

Կտորըմ փետ տաշած,
Բուռըմ ալյուր կպցրած,
Կարմիր շորեր հագցրած:

*

Անտաշել փետից,
Անմաղել ալրից՝
Անգործել ատլաս:

*

Մի վըրթանակ՝
Չորս թարափը ալուր:

ԼՈՔԻ

*

Պզդի,պզդի մարդիկ
Հագան սև-սև վարտիք,
Մտան տաք-տաք բաղնիք:

ՍԻՍԵՌ

*

Մի կուճուր մարթ՝
Քիթը կեռ:

ՏԱՔԴԵՂ

*

Պուլուլիկ տունիկ,
Մեջը՝ տաջիկ:

*

Կարմիր հալավ,
Կրակ ու ալավ:

ՁՄԵՐՈՒԿ

*

Չի մի ունիմ կանաչ-կանաչ,
Չունի բերան, չունի անգաջ,
Ջուր կխմա երկար կաբեն,
Ու կուրխնա իմ մենձ պաբեն:

*

Նայում ես՝ կանաչ ա,
Կտրում ես՝ կարմիր ա,
Մեջը լիքը սև զինվոր ա:

———————

Վըրթանակ — *գրտնակ*
Թարափ — *կողմ*
Հալավ — *հագուստ, շոր*
Ալավ — *բոց*
Պաբեն — *պապը*

*

Ափը՝ կանաչ,
Ջուրը՝ կարմիր,
Ձկները՝ սև:

*

Չորս կուռը փակ,
Միջին հազար ձագ:

ԴԴՈՒՄ

*

Թալաշ-թալաշ ցոնիմ գու,
Գձիգ-գձիգ ժողվիմ գու:
(Շերտ-շերտ ցանում եմ,
Կծիկ-կծիկ հավաքում):

ՄԱՍՈՒՐ

*

Կարմիր կոլան
Քերծան կախ:

ՀՈՆ

*

Երկարավուն-կարմրավուն:

ՉԻՐ

*

Չին ձորը,
Քուռակը փորը:

ԵԳԻՊՏԱՑՈՐԵՆ

*

Շորս կանաչ,
Մազս ոսկի,
Ամառը քաղի,
Ձմեռը՝ կի:

ԿԱՂԱՄԲ

*

Պառավ նստե քարին,
Քառսուն քըրչ վըր փորին,
Էլի ասում ա՝ ես մրսա:

*

Պուճուր հարսը
Քառսուն դաստա շոր ունի:

*

Մի կուճի պապիկ,
Հագին հազար շապիկ:

Կոլա — *կուլա*

*

Հազար յորղոն ունի վըրըն,
Ալի վախա գու էղիմըն:
(Հազար վերմակ ունի վրան,
էլի վախենում է սառույցից):

ՎԱՐՈՒՆԳ

*

Ինքը իրեք ըմսեկան,
Խոխան քյնըմ ա բազար:

ԳԵՏՆԱԽՆՁՈՐ

*

Գարնանը քանդեմ՝
Վերից կախ տամ.
Գարնանը քանդեմ՝
Հողին պահ տամ:

ԵՂԻՆՋ

*

Օխտը լեզու ունի,
Պերան չունի՝ կծում ա:

*

Տերև ունի՝ ծառ չի,
Կծըմ ա՝ շուն չի:

*

Հարյուր զույգ շոր հագնի,
Առանց կոճակ:

ՇԱՂԳԱՄ

*

Բաբեն՝ հուղ,
Մուրուք՝ շուղ:

ԿԱՐՏՈՖԻԼ

*

Գնդըլ-մնդըլ տատիկը
Հանեց վրի շապիկը,
Փախավ մտավ բաղնիքը:

ՍՈԽ

*

Չի վայիլ մոշտվողը,
Վայա գու մոշտողը:
(Չի լալիս մորթվողը,
Լալիս է մորթողը):

ՍՈՒՆԿ

*

Նանի, նանի, միոտանի,
Դուրս մի ելնի՝ գել կտանի:

*

Մի եզնը օնիմ, մի վընդանի,
Տուս կյա տյուռը՝ կյուլ կտանի

———————

Հուղ — *հող*

Մուրուք՝ շուղ — *մորուքը դրսում*

Կյուլ — *գայլ*

*

Հոցկա վանք,
Թասը կործըման:

*

Մե սնանի,
Մե տնանի,
Բյուր ու հազար
Տախտկանի:

ՍԵՐՄ

*

Փռնեմ ափով,
Տամ տափով,
Մեռնի տարով,
Հետ կյա բարով:

ԿԱՆԵՓԻ ՍԵՐՄ

*

Ինքը լվի մը չափ,
Կելա գըլլի դավի մը չափ:
(Ինքը՝ լվի չափ,
Ծլի՝ կդառնա ուղտի չափ):

ԱՂԱՆՁ

*

Կարմիր էծեր սև դաշտում
Լոք-լոք են անում:

*

Գուգ-գուգ, կըց լեսան,
Թուփ-թուփ, կըց ավեդրան:
(Կոկ-կոկ է, ինչպես հեսան,
Թերթ-թերթ է, ինչպես ավետարան):

*

Վան, Վան,
Քառսուն քասա կոռձվան:

ԱՐՏ

*

Սև հինեմ,
Սիպտակ գործեմ,
Կանաչ չափեմ,
Դեղին կտրեմ:

*

Սև հինեմ,
Կանաչ թել տամ,
Դեղին կտրեմ:

*

Մի կով ունեմ, կաթն ա տալի,
Համա ինքը տուն չի գալի:

———————

Հոցկա — *այստեղ*
Կործըման — *շրջած*
Հեսան — *սրոց, սրաքար*
Քասա — *կավե աման*
Կոռձվան — *շրջած*

ԽՈՏ

*

Վարըմ չեն,
Հնձըմ են:

ՀԱՍԿ

*

Վեննավը ճուր ա խմում,
Կնդիչավը ճտեր հանում:

ԽԱՂՈՂ

*

Ինքը մին, աչքը հազար,
Ըռավոդ-քշերով կերթա բազար:

*

Աշնանը քաղում,
Աշնանը թաղում:

*

Մի բիձա կա,
Հազար թոռ ա շըլակել:

*

Ինքը պուճուր, աչքի ղայդամ,
Մեջը լիքը ջուր ու ատամ:

ԽԱՂՈՂ, ՄԱՃԱՌ, ԳԻՆԻ

*

Մերը խելոք,
Հերը կծպծացնելի,
Որդին կարմրացնելի
Ու շաշացնելի:

*

Ա հանդին ա, հանդին ա,
Սպահանի հանդին ա,
Տարենը մի հետ կիթ կըկյա,
Տյառ հլա հանդին ա:

*

Կեռ հեր, կռուգ մեր,
Մարմար խաթուն, շեկ ախպեր:

Կնդիչ — *կտուց, դունչ*
Ղայդամ — *ձև*
Կռուգ — *ծուռ*
Վեննավը — *ոտքով*

ԽԱՂՈՂԻ ՎԱԶ, ԽԱՂՈՂ, ԳԻՆԻ

*

Մեծ պաբը,
Խելոք տղեն,
Գիժ թոռը:

*

Հերը դուզ,
Մերը ծուռ,
Աղջիկը սիրուն,
Տղեն գիժ:

ԳԻՆԻ

*

Սև ու ջերմագ ճրա հիլուն,
Շադ օր խմես, գըլլիս մայմուն:
(Սև ու սպիտակ ջրի ուլունք,
Շատ որ խմես, կլինես կապիկ):

ԿԱՐԱՍՈՎ ԳԻՆԻ

*

Կարմիր կովը
Գետնի տակին բառաչըմ ա:

ԿՈՎ

*

Վեր խոտ տաս՝
Կաթ կտա,
Թե ուզում ես՝
Միս էլ կտա:

*

Չորս ցեխկրիչ,
Երկու եղկրիչ,
Մի պրպտիչ:

*

Չորս ցեխկրիչ,
Չորս եղկրիչ,
Երկու ցիցիկ,
Մի տմբտմբիչ:

ԿՈՎ, ՀՈՐԹ, ԿԹՎՈՐ

*

Երեք կլխանի,
Տաս ոտանի,
Երկու ծեռնանի:

ԽՈՋ

*

Չութը չի՝ վար ա անըմ:

ՈՒՂՏ

*

Ինքը՝ սարի վրա,
Սարը՝ իրա վրա:

———————

Չութ — *արոր*

ԱՅԾ

*

Գոդեշ ունի՝ գով չա,
Միրուկ ունի՝ դերա չա:
(Կոտոշ ունի՝ կով չի,
Միրուք ունի՝ քահանա չի) :

ՈՉԽԱՐ

*

Շահեցի, պահեցի,
Պահեցի, խնամեցի,
Վրայի խոտը քաղեցի,
Տակի հախպրից խմեցի:

*

Արտը հնձեցի,
Ծղնոտը փախավ:

ՉԻ ԵՎ ՉԻԱՎՈՐ

*

Չորս ոտը հողին,
երկուսը՝ կողին:

ՍՄԲԱԿ ԵՎ ՊԱՅՏ

*

Մսի պուլիկ,
Երկաթի սերեկ:

ԱՔԱՂԱՂ

*

Մի թաքավոր կա,
Քառասուն կնիկ ունի,
Կարմիր թագիկ ունի,
Դեղին ոտիկ ունի:

*

Մի ալլամաթ ա,
Ծեն ա հանըմ,
Լյուզուն՝ վուսկեռից,
Կատարը՝ կյաթից:

ԱՔԼՈՐԻ ԿԱՏԱՐ

*

Առանց դանակ խախլորած:

*

Առանց ներգի ներգած,
Առանց դանգի քռթքռթած:

ՔԱՐԱՃԻԿ

*

Կաշին՝ միջի կռանը,
Միսը՝ դրսի կռանը:

———————

Ալլամաթ — *այլանդակ*
Վուսկեռից — *ոսկորից*
Ծղնոտ — *ծղոտ*
Կյաթից — *գաթայից*
Սերեկ — *կափարիչ*

ՁՈՒ

*

Ներսը՝ ալթուն,
Տուսը՝ այձատ:
(Ներսը՝ ոսկի,
Դուրսը՝ արծաթ):

*

Ըրծաթի տուն,
Տեղին հարսը միջին քուն:

*

Մի պուտկի մեջ՝
Էրկու տեսակ ջուր:

*

Մի ճաշ կա,
Էփիլիս ինչքան ուզում ես աղ արա,
Մենակ վեր ուտիլիս ըլիս,
Էլետ աղ դես անիլ:

*

ՈՒլուլիկ-պուլուլիկ,
Ոչ դուռ ունի, ոչ կտուր:

*

Անծակ պուլիկ:

ՀԱՎ ԵՎ ՁՈՒ

*

Շնչավորից անշունչ ելավ,
Անշունչից՝ շնչավոր:

ՄՈՒԿ

*

Սուլիկ-պուլիկ,
Թախտի տակի փահլևան:

ԱՂՎԵՍ

*

Կուճի գազան,
Թայդի վազան,
Քուրքը դեղին,
Շատ ա սիրում
Հավի ցեղին:

———————

Պուլուլիկ — *կլորիկ, սիրունիկ*

Թայդի — *արագ*

Սուլիկ-պուլիկ — *ճարպիկ*

ՈՋՆԻ

*

Ինքր միս ա,
Շորը փուշ ա:

*

Քոսոտ թուլան՝
Ասեղով պեռնած:

*

Ման ա կյալի կամաց-կամաց,
Մի շալակ փուշ վրեն առած:

ՕՁ

*

Ի՞նչ թոկ ա,
Ինքն ա վրիդ փթաթվըմ:

*

Էրգյան հըղե,
Փորը լըղե:

*

Ոլոր-մոլոր, նախշուն պարան,
Ոչ դին ունի, ոչ էլ իման:

ՄՐՋԱՆՈՑ ԵՎ ՄՐՋՅՈՒՆՆԵՐ

*

Տուն մի ունիմ,
Մեջը հազար մարդ կմտնի-կելնի,
Հըմը մի խորոմ խոտ չի դրվի:

*

Ընտեղից մինչև Վան,
Վանից չուր Ոստան,
Անչուլ, անչվան,
Չադր զարկե, նստե դիվան:

*

Ընտից չուր Երևան,
Քառսուն քուռակ մե լման,
Հըմեն անչուլ, անչվան:

*

Կապըմ եմ՝ կապ չի գիդըմ,
Մորթըմ եմ՝ արին չի քյնըմ:

*

Մի խորոմ խոտ չի տանի,
Համա հազար կենթանի շունչ կտանի:

———————

Հըղե — *ճանապարհ*
Լըղե — *թույն, լեղի*
Դին — *հավատ*
Իման — *դավանանք*
Խորոմ — *խուրձ*
Անչուլ — *տկլոր*
Չադր — *վրան*

ՁՈՒԿ

*

Աշխարքին սիրելի եմ,
Աշխարք մտնեմ՝ կմեռնեմ:

*

Լեսան,լեսան, փըխստան,
Գեղով անցավ, չտեսան:

ԲԶԵԶ

*

Պոզեր ունի՝ եզ չի,
Թևեր ունի՝ թռչուն չի:

ԿՐԻԱ

*

Պլոլիկ ա՝ քար չի,
Ձու ա ածըմ՝ հավ չի:

ՄԵՂՈՒ

*

Ուզ կերթամ, դուզ կերթամ,
Սար ու ձոր դուզ կերթամ:

*

Թռնում ա, թռչուն չի,
Կուճի ա, մրջուն չի:

*

Կով ունեմ անի-անի,
Պտուկները թաթար խանի,
Կաթ կտա, տուն չի գա,
Սարեր, ձորեր ման կգա:

ԽԽՈՒՆՋ

*

Գոդեշ ունի՝ գով չա,
Կիր գընա՝ վարդաբեդ չա:
(Կոտոշ ունի՝ կով չի,
Գիր է անում՝ վարդապետ չի):

*

Ձառը կելլա՝ մաշտ չա,
Կիր կըրա գու՝ վարժաբեդ չա,
Գոդեշ ունի՝ եզ չա,
Սամար ունի՝ ծի չա:
(Ծառ է ելնում՝ մարդ չի,
Գիր է գրում՝ վարժապետ չի,
Կոտոշ ունի՝ եզ չի,
Թամբ ունի՝ ձի չի):

ԳԼՈՒԽ

*

Մի ծառ ունիմ ջճան ա,
Ջճնի տակը՝ մեյդան ա,
Մեյդնի տակը՝ խայլի ա,
Խայլու տակը՝ զուռնա ա,
Զուռնի տակը՝ մարագ ա,
Մարագը լիք ուրձագ ա:

ԳԼԽԻ ՄԱԶԵՐ

*

Մի խուրձ խոտ ունիմ,
Ոչ մի հայվան ուտիլ չի:

*

Մի արտ ունեմ,
Ոչ ցանըմ եմ, ոչ հնձըմ:

ԲԵՐԱՆ ԵՎ ԼԵՋՈՒ

*

Մի մեծ կհոլ,
Դավիթը մաչին քոն:

Մի խոխա մի պյանում
Տինգիր ա տալիս:

ԴԵՄՔ

*

Մի քոլուտ,
Քոլուտի տակին՝ մի տափ,
Տափի տակին՝ մի թումբ,
Թմբի տակին՝ ձոր:

ԲԵՐԱՆ ԵՎ ԱՏԱՄՆԵՐ

*

Մե տուռնանի կյարմուր տոն ա,
Մեջը լցրած սիպտակ տաշեղ:

*

Կյարմուր պուլիկ՝
Մեջը պրինձավ լցած:

*

Մե հոր,
Երեսուներկու զինվոր:

*

Մի քսակ՝
Պրինձավ լցած:

———————

Ջճան — *խճճված*
Մեյդան — *հրապարակ*
Խայլի — *հայելի*
Կհոլ — *հոլիկ, քարայր*
Մաչին քոն — *մեջը քնած*
Քոլուտ — *մացառուտ*
Տափ — *գետին, մարգագետին*

ԱՏԱՄՆԵՐ ԵՎ ԼԵԶՈՒ

*

Սիպտակ ճաղերով հեսար,
Կարմիր շունը միջին կապած:

*

Մի դոլաբ, լիքը խուշուր,
Տղեն միջին չիլկի ա տալի:

*

Երեսներկու ախպեր ալիր են անըմ,
Մինը տանըմ ա:

ԱՉՔ

*

Բոլորը փուշ,
Մեջը նուշ:

*

Վեսկա օթախ,
Մազա տախտ:

*

Բռնեմ՝ բռովս մին,
Բաց թողնեմ՝ աշխարքով մին:

ԱՉՔԵՐ ԵՎ ՔԻԹ

*

Մեգ քահիմը հոմար
Էրգու քուր իրար չին դեսնալ,

ՔԻԹ

*

Մե սուն,
Երկու տուն:

ՈՒՆՔԵՐ

*

Մի գինում
Երկու կապ ճիպոտ վեր քցած:

ԼԵԶՈՒ ԵՎ ԱԿԱՆՋՆԵՐ

*

Խոսում է՝ լսում չի,
Լսում է՝ խոսում չի:

———————

Դոլաբ — *պատի մեջ փորված պահարան*
Խուշուր — *տաշեղ*
Չիլկի տալ — *այստեղ՝ մեջը խաղալ*
Վեսկա — *ոսկյա*
Մազա — *մազե*
Քահիմը հոմար — *սարի պատճառով*
Գինում — *սարալանջում*
Հեսար — *ցանկապատ*

ՇՐԹՈՒՆՔՆԵՐ

*

Ասում ըմ՝ եք-եք, կելիս չի,
Ասում ըմ՝ կյամի՛լ-կյամի՛լ, կելիս ա:

ՄՈՐ ԿՈՒՐԾՔ

*

Ուտիլի ա, համա սեղանին դնիլի չի:

ՄՈՐ ԿԱԹ

*

Քաղցր-քաղցր, ամեն ինչից քաղցր,
Ոչ բազարում կա, ոչ էլ բազրգան կծախե:

ՁԵՌՔ, ՄԱՏՆԵՐ, ԵՂՈՒՆԳՆԵՐ

*

Առակ-առակ, դաստրակ,
Կեսը՝ գործել, կեսը՝ չգործել:

*

Իմ հերանց տասը եզ ունեն,
Տասն էլ՝ չագլագ:

*

Մի ծառ կա, վրեն հինգը ճյուղ,
Ամեն ճղկուն՝ մի տերև:

ԼԱՉԱՌ ԿԻՆ

*

Ուրիշ մարդու տալու չի,
Քու տանն էլ պահելու չի:

ՄԱՐԴ ԵՎ ՀՈՂ

*

Նա կպակասի,
Նա լե կեվելնա:

Կյամիլ — *մի արի*

Դաստրակ — *սրբիչ*

Չագլագ — *դյուրաշարժ, կայտառ*

ՋԱՎԱԿ

*

Ի՞նչ պտուղ է,
Քանի խակ է՝ քաղցր է,
Որ հասնում է՝ դառն է:

*

Ինչքան չարչարըմ ա,
Էնքան քաղցրանըմ ա:

*

Ինչքան շատ,
Էնքան դարդ:

ԳԱՂՏՆԻՔ

*

Մեկի համար քիչ ա,
Երկուսի համար՝ շատ:

ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ

*

Ինչքան շատանա,
Էնքան չես կշտանա:

ՄԻՏՔ

*

Էն ինչն ա՝
Լոխան շուտ ա թռչում:

*

Օխտը երկիր գնացի,
Տեղս կանգնած մնացի:

*

Կշտիդ նստեմ,
Քռիցը ջուր խմեմ:

ԱՆՈՒՆ

*

Երկնքից մի բան ընկավ,
Ամենքի վրա կպավ:

ՄԱՀ

*

Համ՝ գիտեմ,
Համ՝ գիտեմ ոչ:

ԱՅԲՈՒԲԵՆ

*

Մին շալագյ կնեգյ՝
Երեսունինը խոխա օնե:

ԳԻՐՔ (ԳՐՎԱԾ ԹՈՒՂԹ)

*

Սիպտակ տափումը
Սև ուլերը ըրածում են:

*

Տափը՝ սիպտակ,
Սերմը՝ սև:

Լոխան — *բոլորից*
Շալագյ — *լեզվանի*

*

Սիպտագ արտեր,
Վրեն սև վարթեր,
Ձեռքով շաղ կէնա,
Աչքով քաղ կէնա:

ՆԱՄԱԿ

*

Ըստեղ պաց թողամ,
Թիֆլիզ փռնեմ:

*

Ըստեղ ցանեմ,
Ստամբուլ քաղեմ:

ՔԱՐՏԵԶ

*

Ի՞նչ բաղ ա՝ վարթ չունի,
Ի՞նչ քաղաք ա՝ մարթ չունի:

*

Աշխարք է, տուն չկա,
Ծով է, ջուր չկա,
Օր վառվի, պուտըմ ջուր չկա:

ԴՀՈԼ ԵՎ ԶՈՒՌՆԱ

*

Սարեն, ձորեն
Ձեն գուկա,
Ձին անոթի
Տուն գուկա:

ՍԱՆՐ

*

Կիճի պապան՝
Չափար անող:

*

Ճերմակ լեռներ,
Սև-սև էծեր:

ԹՈՒՂԹ

*

Գետնին զարգես՝ չի փշրվի,
Քարին զարգես՝ չի փշրվի,
Ջուրը քցես՝ կիալի:

*

Սարեն ընկավ՝ չջարդվավ,
Ձորեն ընկավ՝ չջարդվավ,
Հենց ջուր մտավ՝ դաբաղվավ:

ԴՀՈԼ

*

Ձենը՝ դմփան,
Փորը՝ գմփան:

ՔՅԱՄԱՆՁԱ

*

Ծերկս գառնում՝ խոսի գու,
Վայ թնիմ գու՝ սուս գըլլի:
(Ձեռքս եմ առնում՝ խոսում է,
Վար եմ դնում՝ լռում է):

ԾԽԱԽՈՏ

*

Ինչքան քաշում ես,
Էնքան կարճանըմ ա:

ԾԽԱՄՈՐՃ

*

Ցախին ձերին փուռ մը լուսնի գու:
(Ցախի ծայրին մի փուռ է վառվում) :

*

Պիծի-պիծի բուխարի,
Մեջը լիքը սուխարի:

ՍԱՓՐՎԵԼ

*

Կալն կաշի,
Կամն երկաթ,
Ջուր տու, քըշի:

*

Սլվլուն ելավ սարն ի վեր,
Սրփեց բերեց տակնըվեր:

ԿԱՅԾՔԱՐ

*

Սև էծ,
Մեջը պեծ:

ԿԱՄՈՒՐՋ

*

Չին գնաց,
Թամքը մնաց:

ՋՐԱՂԱՑ ԵՎ ՋՐԱՂԱՑՔԱՐԵՐ

*

Ամպը գոռաց,
Անձրևի տեղ ձյուն եկավ:

*

Պտտեց-պտտեց,
Տակերովը շաղ տվեց:

*

Արջը թաթերն իրար քսեց,
Չորս կուռը սիպտակ բռնեց:

*

Ջուրը փորն առավ,
Սիպտակը կողն արավ,
Գռգռոցը ձորն արավ:

*

Աշխարհ կըկշտացնե,
Ինքը սոված կմնա:

*

Երկաթե գոմեր,
Տռճկան եզներ:

*

Ինձղը դար դաս՝ գուդա:
(Ինչքան տաս՝ կուտի):

*

Ընդրա խոքին հառվու ձեռն ա,
Հառուն կդրավ՝ խոքին կիդա:

*

Երկու արջ
Մի ձորում կռվում են:

ԵՐԿԱՆՔ

*

Խալիչեն փռեմ տակը,
Ջռզռան գցեմ ծակը:

*

Մի ախպերը խելոք նստած,
Մյուսը գլխին պար ա գալի:

*

Նստիմ կուշտդ,
Լըլեմ բուգդ:

ՍՅՈՒՆ, ԳԵՐԱՆ, ԿԱՄԱՐ

*

Մուննն ասում ա՝ վայ ուսս,
Մուննն ասում ա՝ վայ մեշկս,
Մուննն ասում ա՝ վայ փորս,
Հողն ալ ասում ա՝ էհ, ինձ հինչ:

*

Երկու սար՝
Կկրծեն իրար:

*

Գուդ գուդիմ,
Գուդիգ գնիմ,
Կեդին ղըյին
Դիդիկ գնիմ:
(Կուտ կուտեմ,
Կուտիկ կանեմ,
Գետի ափին,
Տիտիկ կանեմ):

ԴՈՒՌ

*

Կերթա-կուգա,
Ամեն մարթու ճամփա կիդա:

*

Հազար ելան, հազար մտան,
Ներսոյ փաշեն տեղից չելավ:

*

Այբ, բեն, գիմ, դա,
Փորիդ տամ՝ թնդա:

ԴՌԱՆ ԲՌՆԱԿ

*

Հարս մի ունիմ,
Որ եկող-գնացողի ձեռքը կպագնե:

ԿՈՂՊԵՔ

*

Սև շունը կծկվել ա դռան վրա,
Ոչ կծում ա, ոչ էլ մարդ ա ներս թողում:

*

Մի ծիտ
Մի տուն կպահի:

ԿՈՂՊԵՔ ԵՎ ԲԱՆԱԼԻ

*

Մերը նստավ,
Ձագը թռավ:

*

Արաբստան, բստան, բստան,
Երկու կաքավ էկան նստան,
Մեկը թռավ, մեկը մնաց:

*

Տիզ աղեն, տիզ-տիզ աղեն,
Մինչև չգա տիզի աղեն,
Չի պրծնի փորացավեն:

ԽՆՈՑԻ

*

Էրգան քուչա,
Մեջը փուչ ա:

*

Կերթա-կուգա,
Մորդ փորին բարև կուդա:

*

Էրկու գլուխ, մի բերան,
Փորը թափեցին, կերան:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԼԱՄՊ

*

Արմատը գետումն ա,
Ցողունը օդումն ա,
Ծաղիկը տանն ա:

*

Կախված տանձ,
Համա ուտիլի չի:

ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԶԱՆԳ

*

Տռանը հոփ եմ տալի,
Տանը ծվծվում ա:

ԽՆՈՑԻ, ԹԱՆ, ԿԱՐԱԳ

*

Մազե ոլոր,
Մեջը կլոր,
Բոզ ձիավոր,
Դեղին թագավոր:

*

Փետե կլորանք,
Թոկե ճլորանք,
Դեղին թագավոր,
Սիպտակ հալևոր:

———————

Բոզ — *մոխրագույն*

ՃՐԱԳ

*

Օդվին՝ ճըրին,
Կլեխը՝ գրագին:
(Ոտները՝ ջրում,
Գլուխը՝ կրակում):

*

Կով չվանով տարա ախպուր,
Կով չխմեց, չվան խմեց:

*

Մեր դուռ մի հատ գոլ կա,
Գոլի միջին օձ կա,
Օձի գլխին վարդ կա,
Վարդի գլխին մարդ կա:

*

Պոչով ջուր առավ,
Բերնըմը բոց դառավ:

*

Պզդիկ երդիկ,
Ծածկեմ՝ խեխտիք:

*

Կիշերվա ձաղիգ,
Հետդ տա չըլլի՝
Կլորվուշ գըլլի:
(Գիշերվա ծաղիկ,
Հետդ թե չլինի՝
Գլորվել կլինի):

ՄՈՄ

*

Էրգըն մադիգ,
Զարին ձաղիգ:
(Երկար մատիկ,
Ծայրին ծաղիկ):

ՍՏՎԵՐ

*

Ընկեր ունեմ՝ պոկ չի գալի,
Լող եմ տալի՝ լող չի տալի,
Շվաք տեղում մոտ չի գալի:

ՅԱՓՆՋԻ

*

Սև սատանեն՝
Պատից կախ:

ՃԱԽԱՐԱԿ

*

Բուռի-դուռի,
Քաչալ դուռի,
Հաց չես կերել,
Ջուր չես խմել,
Փորդ կուռի:

*

Շունը մռռացրուց,
Դունչը ուռացրուց:

ԻԼԻԿ

*

Աղիքը դրսի կռանը,
Ինքը միջի կռանը:

ԳՈՐԳ ԳՈՐԾԵԼ

*

Գոքիդ նստեմ,
Մորուքդ փիտեմ:

Դուռի — *թուրք կամ քուրդ կին*

ԳՈՐԾԵԼՈՒ ՇՅՈՒՂԵՐ

*

Հինգ ախպեր՝
Աշխատում են մի հորի վրա:

*

Հինգ ախպեր՝
Իրար տեղ կքանդեն:

*

Հինգ ախպորով
Մի չափար են չըփարում:

*

Էրկու ախպեր՝ իրանք տկլոր,
Ուրիշին շոր են անըմ:

*

Հինգ ախպեր՝
Մի դոշըմ կռիվ են անըմ:

*

Չորս ախպեր քար են կրըմ,
Մինը շարում ա:

ՄԿՐԱՏ

*

Ինքը կեռ,
Հենց գնըմ ա,
Ոնց որ մկծեռ:

*

Մատս անցքը կոխեմ,
Բերանը բացուխուփ անի:

*

Ծամըմ ա, ծամըմ,
Կարըմ չի կուլ տա:

ԱՍԵՂ

*

Ման գիկա տկլոզ, տկլոզ,
Կզարդարա հըմեն մարդոց:

ԱՍԵՂ ԵՎ ԹԵԼ

*

Ինքը՝ մի թիզ,
Պոչը՝ օխտը թիզ:

*

Աղվեսը շուլալվեց փեշս,
Պոչը թողեց, մտավ դոշս:

*

Լպստեմ տակնվեր քցեմ:

ԱՆԿՈՂԻՆ

*

Քշերը՝ ծառա,
Ցերեկը՝ խանըմ-խաթ:

*

Քշերը հաստ ա,
Ցերեկը դաստա:

ԳԼԽԱՐԿ

*

Բերանը ներքև՝ լիքն ա,
Բերանը վերև՝ դատարկ ա:

*

Մի աման կա,
Վեր քխվեր ըս անում՝ լցվում ա,
Քխյեր ըս անում՝ տռտակվում ա:

———————

Մկծեռ — *սկյուռ*

ՏՐԵԽ

*

Կապ ես անում՝ քյնըմ ա,
Արձակում ես՝ կայնըմ ա:

ԻՆՔՆԱԵՌ

*

Տակը ծակ ա՝ ծակ չի,
Վերևը ծակ ա՝ ծակ չի,
Մեջտեղը ծակ չի,
Միջի ջուրը կրակ ա:

ԹԵՅՆԻԿ

*

Տերտերն էկավ քրտնած,
Երկան քիթը տնկած:

ՇԵՐԵՓ

*

Կումաշը գոլըմը,
Հաքյուն՝ չոլըմը:

*

Մի բադ ունեմ,
Ինքը ծովումն ա,
Պոչը ափումն ա:

ԳԵՐԱՆԴԻ

*

Սարեն գուկա սլսլալով,
Ոսկի պեխեր պլպլալով:

*

Տա, տա, տա, գեղ ա գալի,
Սարի սմբուլ վեր ա գալի,
Ոտքեր չունի՝ ման ա գալի,
Աչքեր չունի՝ լիս ա տալի,
Բերան չունի՝ կուլ ա տալի:

ՄԱՆԳԱՂ

*

Աղվեսն նստե վըր դեզին,
Պոչն օլրե վըր վզին:

ՑԱԿԱՏ

*

Ակվնա՝ Էյ վախ,
Իրիգվնա՝ քինտը կախ:

ՍՂՈՑ

*

Ատամ, ատամ, հազար ատամ,
Մարդ կըկծի, բերան չունի:

———————

Ակվնա — *առավոտյան*
Քինտ — *քիթ*
Հաքյու — *ագի, պոչ*
Կումաշ — *գոմեշ*

ՀՐԱՑԱՆ ԵՎ ԳՆԴԱԿ

*

Սև հավը ծըկլթաց,
Ծուն քըմակից վեր ընկավ:

*

Տոնը ծակ ա, դարբի օխշար,
Ինքը միջին սուս-փուս նստած,
Փորցի ծիք տուր կուճի ընջուկան,
Մին կճղղա ու կթռնի:

*

Մթեն օթախ,
Դավիթը մեջը:

ՊԱՏՅԱՆ ԵՎ ԹՈՒՐ

*

Նեղ ու մութ տուն,
Սատանեն մեջը քուն:

ԹՆԴԱՆՈԹ

*

Ըստե խազա, կըլսվա Վան,
Բերնեն գելի բոց ու դուման:

ՄԱՂ

*

Պուճուր երկնքից
Զյուն ա գալի:

*

Ինքը մեկ՝ աչքը հազար,
Ըռավոդ-քշերով կերթա բազար:

ԱՂ

*

Ինքը՝ հողեն,
Կյանքն՝ արևեն,
Մահը՝ ջրեն:

*

Ջուրեն ելե,
Ջուրեն կվախնա:

ԳԴԱԼ

*

Ալ կնկղիկ,
Չա՛լ կնկղիկ,
Քանի պեռնեմ,
Տա՛ր, կնկղիկ:

*

Դատարկ կմտնի՝ լիք դուրս գիքա,
Լիք կմտնի՝ դատարկ դուրս գիքա:

ՇՂԹԱ

*

Վերցնեմ՝ լաց կեղնի,
Դնեմ՝ սուս կանի:

*

Քառասուն ախպեր,
Կպել են իրար,
Քաշում են, քաշում,
Չեն պրծնում:

Պռանչի — *բառաչի*

Դարբի օխշար — *օղաշարի նման*

Ընջուկ — *ականջ*

Կնկղիկ — *բամբակի կնգուղ*

ՊԱՐԱՆ

Սարը գերտա՝ փռվի գու,
Դունը գուկա՝ ձալվի գու:

(Սարն է գնում՝ փռվում է,
Տուն է գալիս՝ ծալվում է):

ԲԻՋ

*

Մի կուճի հըլիվոր՝
Չափար ա անում:

ԹԱԿԱՐԴ

*

Անշունչը շնչավորին փռնում ա:

ԿՇԵՌՔ

*

Ատեն-ատեն, երկու թաթեն,
Աշխարհի մեջ հալալութեն:

*

Աքտամ, բախտամ,
Քյաքուլեդ բռնեմ, ձիգ տամ:

*

Երկու թաթիկ՝
Պատից կախ:

ՑԱԽԱՎԵԼ

*

Մըն կյում տավար,
Մըն կապավ կապած:

Աքտամ — *բերեմ*

Բախտամ — *խնամեմ*

Կյում — *գոմ*

Բըրխանա — *իրեր*

ԱՎԵԼ

*

Քշերհանա վեր ա կենըմ,
Վազ տամ տանը քունջերավը,
Կյամ վեր ընգնըմ տըռան կողկին:

ԱԹՈՌ

*

Չորս ախպոր շալակն ելա,
Չեն չհանեցին:

ԿՈՒԺ

*

Փուչ ծառը փորեցին,
Առուն մեջը հորեցին:

*

Քու մերը ծեգին վեր կացավ,
Կարմիր բողչան շալակն առավ:

ԺԱՄԱՑՈՒՅՑ

*

Զընգ-զընգ, զընգանա,
Մեջը լիքը բըրխանա:

ԴԱՀՈՒԿՆԵՐ

*

Ըշխադըմ ա ձմեռը,
Դնջանըմ ա ամառը:

ԿՐԱԿ

*

Մի կարմիր ձի ունեմ,
Որդի ըրածըմ ա՝ էլ խոտ չի ծըլըմ:

*

Կարմիր բուղեն նստեց,
Կանաչ խոտը կտրեց:

ԿՐԱԿ ԵՎ ԾՈՒԽ

*

Սև ձին վազըմ ա,
Կարմիր ձին էլ հետևան:

ԱՆԹԵՂԱԾ ԿՐԱԿ

*

Քո մերը ռավետը ծեգին վեր կացավ,
Կարմիր բոխչեն բաց արավ:

ԾՈՒԽ

*

Ալրից մանր,
Դավից բարձր:

*

Վեննները կրակին,
Կլոխը իրիքնակին:

*

Հողին վրա ձնվի գու,
Էռնունծը թաղվի գու:
(Հողի վրա ծնվում է,
Երկնքում՝ թաղվում):

ԾՈՒԽ ԵՎ ԵՐԿԻՆՔ

*

— Ա՛ կըռըմեռ չաթու,
Էտ վերդի՞ ես քյնըմ:
— Կապուտ ծով:

ԾՈՒԽ ԵՎ ԾԽՆԵԼՈՒՅՔ

*

— Ա՛ կըռըմեռ, էտ դռրն ես քյնըմ:
— Ա՛ կատարտ ծակ, ինչ ես անըմ:

ՎԱՌԱՐԱՆ

*

Ինքը՝ տանը,
Նաֆասը՝ դռանը:

*

Չիբուխը՝ տանը,
Ծուխը՝ դռանը:

*

Չեյս օդվի,
Մեգ գոդեշվի:
(Չորս ոտքանի,
Մեկ կոտոշանի):

ԲՈՒԽԱՐԻ

*

Սև հավը՝
Փորը ճղած:

ՓՈՒՔՍ

*

Հանիր ունի, ջան չունի,
Վեր մորթես՝ արին չունի:

*

Պապը՝ սարըմ,
Ոտները՝ կրակըմ:

ՓՈՒՌ

*

Ինքը քարե ու երկաթե,
Անդադար խմոր կուտե:

*

Ըղաքիտ կաղնեմ,
Մեջդ խառնեմ:

———————

Ռավետ — *առավոտ*
Իրիքնակ — *արեգակ*
Չաթու — *պարան*
Հանիր — *շունչ*

ԹՈՆԻՐ

*

Ղրաղիտ չոքեմ,
Իրեսիտ դըփեմ:

*

Ափ անեմ,
Ծափ անեմ,
Տաք քարին
Շըմփ անեմ:

*

Մի փութ ոսկի,
Կանայք չորս կողմ նստած խոսքի:

ԳԵՏ

*

Ուր պոչ վըր սարին,
Գլուխ՝ մըչ ծովուն:

ԱՌՈՒ

*

Գնում ա, գնում ա,
Եդ չի մտիկ անում:

*

Էրգան,էրգան
Ոչ ճոնդ ունի, ոչ պուճախ:

ԽՐԱՄՈՒՂԻ

*

Քանի կտրում ենք՝ ըրգընանըմ ա:

ՃԱՆԱՊԱՐՀ

*

Երկար բարդի՝
Հով չունի:

Էրգան սուփրա,
Ինչքան ծալես՝ ծալվիլ չի:

ԳՆԱՑՔ ԵՎ ԵՐԿԱԹՈՒՂԻ

*

Ծին քյնաց,
Նալը մնաց:

ՆԱՎ

*

Վարըմ ա, վարըմ,
Իրա վարածը հող չի:

*

Կերթա, կերթա՝ իզ չկա,
Կիշկա իդև՝ թոզ չկա:

*

Փեդ, փեդի ախպեր,
Ջրի հորողբեր,
Վարպետի շինած,
Քաղաք չմտած:

ՍԱՅԼ ԵՎ ՍԱՅԼՎՈՐ

*

Էրգար տախտակ,
Էրկու չափար,
Իրեք գլուխ,
Տասը ոտ:

ՍԱՅԼԻ ԱՆԻՎՆԵՐ

*

Չորս ախպեր վազըմ են,
Իրար հասնըմ չեն:

ճոնդ — *ծայր*

Наш Бунар





Ա

Աբրըն արածը թոնին փչա գու:
(Ապուրից այրվածը թանին էլ է փչում):
Ագռավի ձենը թե աստված լսեր, վարթևորին ձուն կդներ:
Ախին դիմացողը վախին էլ կդիմանա:
Ախորժակը ատամի տակ ա:
Ախչիկ խաթուն՝ աչք պապու տուն:
Ածան հավը կչկչան կլնի:
Ածովի հողի վրա տուն չեն շինի:
Ակոսի ծռությունը մեծ եզից ա:
Ակսի խաբրին սուդը չի ըլլիլ:
(Վատ լուրի սուտը չի լինում):
Ակռավին հնգեր ինողին կտուցը եխտոտ կինի:
Աղջկա մի սիրունությունը օխտը այիբ ա ծածկըմ:
Աղվես նստե դիզու հով, գինա իրա պոչի հովն ա:
Աղքատի ըլածը հարստի չըլածից լավ ա:
Աղքատին սիրտը պաց ա ինըմ:
Աման չկոտրվի՝ ծեն չի դուս կալ:
Ամեն մարդ թող իրա ճաշին աղ անի:
Ամառը պեր՝ ձմեռը կեր:
Ամառ չթըխիր աթար, ձմեռ չես ուտի գաթա:
Ամառ պառգար հովեր, ձմեռ կսատկին կովեր:

———————

Եխտոտ — *կեղտոտ*

Այիբ — *թերություն*

Այչունը ասած ունին՝ բար մը խաղա, ելած դունը քագաձ ունի:
(Արջին ասել են՝ մի պար պարի, ելել տունը քանդել է):
Այչուն օյինը ուժին վրայ ա:
(Արջի հնարքը ուժի վրա է):
Անասունի թալաքը տուսն ի, մարդունը՝ ներսը:
Անդարդ մարդը առանց շապիկ կմնա:
Անըմը տված՝ սուփրեն փռած:
Անխելքը տալըմ ա, խելոքը՝ առնըմ:
Անձի մսուրք մի կապի:
Անձրևու ծեծուկն կարկուտն էլ ա կծեծա:
Անձրև օր գա՝ գոլ էղնի, ցորեն, գարի բոլ կեղնի:
Անշուն գեղ ա մտե, առանց փետ ա ման գալի:
Անողը պրծավ, ասողը չպրծավ:
Աշխարքը խելքով կուտեն:
Աշխարքի էլածն աշխարք կմնա:
Աշխարք մե փարդով չես ծածկի:
Աչքն ինչ տեսնի, էն չանի:
Աչքով տես, հոգով վճռի:
Ապրանքը որ տիրոջը չքաշա, կասեն՝ գողացած ա:
Առանց թռչիլ հոպ մի անի:
Ասեղն ու գութանը իրար հավասար են:
Աստված ցավը տալի, դեղն էլ հետն ա տալի:
Աստված քոռին բոր իդա, եղունգ չիդա:
Արջը քոլումը՝ կաշին ճոթ չեն անի:
Արջին ասալ ըն. «Տու էթքան ուժեղ ես, շունըանա վախըմ ըս», արջը ասալ ա.
«Վախըմ չիմ, է, հաչիլան զահլաս քյնըմ ա»:
Արտը խախուտ, մահանա կարկուտ:

Բ

Բասն էնողը յա դուռն ա, յա երտիկը:
Բարաբ խոսքով ջվալ չի լցվիլ:

———————

Թալաք — *թակարդ*

Փարդա — *վարագույր*

Բոր — *սաստիկ քոր ունեցող մաշկային հիվանդություն*

Բասն էնողը — *խոսողը*

Բարի անուն հոտավետ յուղի նման ի:
Բարձր սարը առանց ձնի չի էղնի:
Բեգուտուն ստացողին մեծություն չի սազա:
Բերնե-բերան, խազար բերան, ասեղն կդառնա գերան:
Բլխտըվերի վերցակն էլ ձու կածի:
Բրրեբար մարդկանց մեջ քու նմանի կշտին նստի:
Բոշեն փաշա չի դառնա:
Բոպիկ ոտը միշտ էլ սոլ կարողի դուռն ա:

Գ

Գարնան փուշ՝ ձմեռվա նուշ:
Գառը գոմի մեջը կերևա:
Գառը՝ գարնանը, ձյունը՝ ձմռանը:
Գդալը շերեփի առաջն ա ընկել:
Գելի բուն մանդր ոսկոր չի մնա:
Գեղի ղրաղը գնա ու ըրեխիցը բան իմացի:
Գեղն օր գըմտնես, էրեխից ու խելռից բան գիտցի:
Գեշ հարևանի երեսից ապրանքի տեր եղա:
Գիլու հետ ուտում ա, տիրոջ հետ «վա՛յ լո» կանչում:
Գիլու ձագը տան պահապան չեղի:
Գիսադ հայվոնը թաքմիլ հայվոնըն փիս ա:
(Կիսատ հիմարը լրիվ հիմարից վատ է):
Գիշերվա գողին ցերեկով կբռնեն:
Գողն օր գեղեն էղնի, եզը երդկանց կելնի:
Գովուն՝ գթիչ, էզունը՝ լուձ:
Գործն օր կա՝ իշու պես բան ա, քշեցիր՝ կերթա, թողեցիր՝ կմնա:
Գործն էրե ընձի, սովրի քեզի:
Գուռեղ շան գլոխը գելի փորն ա:

———————

Սոլ — *կոշիկ*

Բրրեբար — *հավասար*

Գուռեղ — *ինքնագլուխ*

Դ

Դանակն ուր կոթն չքերե:
Դավեն հեծեր է, կուզեկուզ կփախնի:
Դավուլը իմ շալգիս ա, ամա թոքաջը ուրիշի ծեռի յա:
(Դհոլը իմ շալակին է, բայց թակիչը ուրիշի ձեռքին է):
Դարբնի տանը նալ չի ըլնում:
Դու իմ նաչար խոր մի ըսա, ես քո աղա խոր չըսեմ:
Դուռ ծեծողի դուռը կծեծեն:

Ե

Եզն ընկավ, դանկվորը շատցավ:
Եզը իրենն ա շինել, անունն էլ Ալվան ա դրել:
Եզը պոնի՝ ծին ուդա:
(Եզը բանի՝ ձին ուտի):
Եթումն ելավ գողության, լուսնյակն իրըկվորե ելավ:
Եղածը իմն ա, չեղածը՝ քոնը:
Եղունգի տակ մտնող մարթը չի ուրախանա:
Երկու աչքիդ մեկին մի հավատա:

Զ

Զադգից հեդո կարմիր հավգիդ ներկել՝ եղած-չեղած մի հաշիվ ա:
Զոռով շունը օյս չի էշտալ, էշտա ալ՝ չի հաճիլ:
(Ստիպելով շունը որսի չի գնա, գնա էլ՝ չի հաչի):

Է

Էզոնը քալած դեղն ալ բարաքաթ վըրա գընա:
(Եզան կոխած տեղից էլ բարիք կստացվի):
Էն ամիս օր քըզի պետք չէ, թըխ էղնի հազար օր:
Էն մարդ օր կյանքում տուն չի սարքե, գինա թե՝ տան պատեր գեդնից ուրանց- ուրանց կբուսնին:

Դավա — *ուղտ*

Իրըկվորե — *երեկոն իջնելուն պես*

Եղունգի տակ մտնող — *մանրախնդիր*

Էծի աջալը գալուց՝ չոբանի դագանակին ա քսվում:
Էծն էծի հըմար լավ ա, քան օխտը սուրու վեխճարը:
Էկնոց ջաղացը էս ա, թեփն ալրին կես ա, աղաս էլ՝էս ա, չաղաս էլ՝էս ա:
Էն ծառն օր տերև չունի, հեռու անցկեցի, մոտիկ մի գնա:
Էշը յոթ լող գիտե, էրթում ա հասնում ծովի բերանը, յոթն էլ մոռանում:
Էշը պրծել ա, յոնջեն կրծել ա:
Էշը մոշի համը գիդալ չի:
Էշին թըկելավ ճորի չի տառնա:
Էշին պոզեր չբուսավ, ըսեցին՝ քուռակ ա:
Էշն արևին չի հավանի:
Էշն օր ջոռուն մնա, ջոմպա էրևծընող շադ գըլլի:
(Էշը որ ցեխում մնա, ճամփա ցույց տվող շատ կլինի):
Էսօր գողը մեր տանն ա, էքուց՝ ուրիշի:

Թ

Թալիգին ըրաձը մարիգն ալ չի ընիլ:
(Ձեռքի արածը մայրիկն էլ չի անի):
Թախտիցս փախչեմ, բախտիցս ո՞ր փախչեմ:
Թանկ տարի, հաց գարի:
Թասիբ թալած շան, շուն թասիբ չկերե:
Թե չեղին օրենք, կրթություն, ուսում, ուժեղ անուժին կուլ կտա խում-խում:
Թուխ էր, թուխ ամպն էլ վրեն էկավ:
Թունդիրը հողով-ջրով կհանգի:
Թուրքին մինչև չթակես, ղոնաղ չի իլիլ:
Թուրքի տղան սպասիր ի մինչև արտը ցանիր են, կալ են արի, խաց թխի, հայի տղան չի սպասի մինչև թոնդիրեն հանին:

Ի

Իբր գիլանք կշտացան, մացին աղվեսները:
Իմ աքլորը ճանապարհին կկանչի:
Իմ դհոլին տալ չըտեմ, թե քու ձին խռտնո՞մ ա:
Ինչ էլ անես, տանձը վախտին կխասնի:
Ինչ ծառ պիտի եղնի, որ քամի չդիպչի:
Ինչ օր աշք կէնա, ըսկի գրող չէնա:
Ինչ փրթես ուրիշի ամանը, կգա քու քթալը:

Իշու խրտնուկն ձիուց կանցնի:
Իրիկուն լվա մի պուտ ջրով, առավոտ մի լվա մի ղազան ջրով:
Իրիկունը ցախ էթացողը շատ կըլի, առտունը չվան չեն ճարի:
Իրիկունվա արածը գթած ա, կերածը՝ կորած:

Լ

Լավ ա մի հետ կուշտ ուտես, քան տաս հետ համը օնես:
Լավ ա սրտով սիրեկան, քան յոթ քահանի պսական:
Լավ-լավ տներ, սոված շներ:
Լեզու կա՝ դեղ ա, լեզու կա՝ մկնդեղ ա:
Լսել ա հարսնիք կա, չգիտե թե որդեղ ա:
Լուզվի ծակածը բիզը ծակիլ չի:
Լուսինն օր լուսին ա, էլի այիբ ունի, ուր մնաց թե մարդը:

Խ

Խաբարը բերնիդ մեջ եփի, նոր ասա:
Խալխի հացը համու կինի:
Խաղացիր ի կշտափորիկ, չի խաղացի կարմրաշորիկ:
Խաս տրգիծը ակվընծու արևըն առաճ ա:
(Լավ դրկիցը առավոտվա արևից առաջ է):
Խավերին խավարած էլանք, անձղներին էլ՝ քջջած:
Խելոք հոգին ավելի լավ ի, քան թե հպարտ հոգին:
Խելոք ոտները անխելք գլխի պատճառով իննես են կրակը:
Խելքով տղին չեն պիշտի, կանաչ խիյարը չեն կիշպի:
Խոտը տակռու վրա ա դուս գալի:
Խնձոր տնգես՝ տանձ չի տա:
Խրատովի խելքը մինչև դսի դուռն ա:

Ծ

Ծագ հուլինգ գեդին չըմնա:
Ծաղիկը ծաղկին նայելով կբացվի:

———————

Խավարած — *հավարած*

Պիշտել — *հանդիմանել, կոպտել*

Տակռի — *արմատ*

Ծաղիկն ուր քոքին կբուսի:
Ծաղկից հոտ կըլի, մարթան՝ մարթկություն:
Ծամովի ծամն ա թափել, անծամին ծամ ա եկել:
Ծանդր քարը տեղեն չի խաղա:
Ծառի մըռը իրանեն չլնի, ծառը խազար տարի կապրի:
Ծառը որ վեր ա ընգնում, կացնավորը շատանում ա:
Ծառը տնկես, խովը նստես:
Ծիի ոտը նալելիս կորընիգն էլ ոտը պացուրցրավ:
Ծին ալ խելըխաս ա, ամա յուլաֆով խապին գու:
(Ձին էլ խելացի է, բայց վարսակով խաբում են):
Ծինն ու ճորին կռվալ ըն, էշը մեջին սատկալ ա:
Ծուկը պռնի թալ ճուրը, ծուկը չիմանա, աստված կիմանա:
Ծռի հաց՝ խելոքի փոր:
Ծուռն գեղի վրա իրավ ունի:

Կ

Կաթ տվող կովի պտուկը չեն կտրի:
Կայնուկ՝ կդողա, պարկուկ՝ կսողա:
Կատվի վազքը մինչև մարագն ա:
Կատուն որ տանը չի ըլում, մկները պար են բռնում:
Կացին, ես տյու նստինք մեղր ու հացին:
Կառկալի կռկռալով ձուն չի գա:
Կեյշ այդին դվաձը լավ ախպերը չի դալ:
(Վատ արտի տվածը լավ եղբայրը չի տա):
Կովը թող ծնելու ըլի, երբ կծնի՝ թող ծնի:
Կորի մարդու մալը՝ կորի մարդու հոգին:
Կորցրած կութանը հեռիյան ա ըրևում:
Կորձ ընողին հոմար կորձ շատ կըդվի գու:
(Գործ անողի համար գործ շատ կգտնվի):
Կրակի մոտ չախմախ չեն թափ տա:
Կուլը մազը փոխա գու, թաբիյուտը չի փոխիլ:
(Գայլը մազը կփոխի, բնավորությունը չի փոխի):
Կուժ շինողը ունկն էլ կշինի:

———————

Մըռ — *ցեց*

Կառկալ — *ագռավ*

Կորընիգ — *կրիա*

Հ

Հած օնեծիր, ուդող շադ կիդվի գու:
(Հաց ունեցիր, ուտող շատ կգտնվի):
Հացը՝ հորից, որդին՝ փորից:
Հասուգ արդն բդի քաղվի:
Հավը թևով գըլլի, մաշտը՝ ընգերով:
(Հավը թևով կլինի, մարդը՝ ընկերով):
Հարի աղն եկավ, մատաղն գնաց:
Հարի Շուշոն զարդրվի, պատարաք լե կարձկվի:
Հարուստ քավեր փռնեցին, իշի նման պեռնեցին:
Հարևանի աչքը հարևանի աչքին սիրուն կերևա:
Հու խոզիցը մի մազ պուկած, հու քրկճիպի փողիցը՝ մի մաս:
Համեն ջուր ուր ճամփով կերթա:

Ձ

Ձառը բիջիլգուտ ձռին գու:
(Ծառը փոքրուց կծռեն):
Ձենը՝ ձենին, ձենն՝ անկըջին:
Ձիուց ընկնողը չի մեռե, էշից ընկնողն ա մեռե:
Ձմեռը կգրե, ամառը կջնջե:
Ձրի դոշաբը մեղրից էլ քաղցր ա:
Ձունը կհալի կերթա, համա սարը կմնա:

Ղ

Ղոնախին ներս առան, ըսավ. «Բա ձիս ուր կապեմ»:
Ղոնաղի փայը աստոծ ա ղարկում:

Ճ

Ճանճը ինչ ա, որ իրա ճմուռը ինչ էղնի:
Ճանճս կորած, աչքդ օռած:

———————

Հարի — մինչև

Քրկճիպ — ժլատ

Ճմուռ — յուղաբրդոշ

Ճրին կուլան ճրումն ա կոտրվում:
Ճրին ըռաջին ծնվողը ճրին նհետ էլ կքինա:
Ճումբը վեր ա կըցել քարի կլուխը, լաց ա ըլըմ:
Ճուտը ձվում ա ձեն հանըմ:
Ճուր գրելով ճղաճկ չի տառնալ:
(Ջուր կրելով ջրաղաց չի դառնա):

Մ

Մարդամիջին մարդս ըլնի, հազար թուման պարտքս ըլնի:
Մարթ լավ էլներ, մեկ էլ աստվածամոր կէլներ:
Մարտը գնաց, դարդը գնաց:
Մե բանին վեր սկիզբ ըլնի, վերջն էլ պտի ըլնի:
Մեգ սարը պըլճի նա, միգալ սարին խաբար գուդա:
(Մի սարը փլչելիս մյուսին իմաց է անում):
Մեխի գլխին գոմփով չես խփի:
Մեծին կլուխ չտվողը մըծանալ չի:
Մեծ պրտուջ գիր, մեծ լաֆ ասիլ մի:
Մեկ լվի համար յորղան չեն այրի:
Մեկը մյուսին մի բաղ կտա, մյուսը մեկին մի ճյուղ չի տա:
Մեկի աչքն ա սուր, մեկի՝ խոփը:
Մեկն մեռնի՝ հազար շիվարի, հազար մեռնի՝ մեկն չշիվարի:
Մեղուն հասկննա գու, տա վեր ձաղիգըն մեղր կելլա:
(Մեղուն հասկանում է, թե որ ծաղկից մեղր կլինի):
Մեղքը՝ լալով, պարտքը՝ տալով:
Մենակ պրինձը փլավ չի տառնալ:
Մենք վերը վարել, վարոցն էլ քցել ենք:
Մե տուն, որ երկու տանտիկին ըլի, թախտն անավլել կմնա:
Մեր ըսե՝ ընձի երեխա կա, երեխեն ըսե՝ ընձի մեր չկա:
Մինչև աշկը չտեսնի, իրեսը չի համանչիլ:
Մինչև հաստը բարկնա, բարկի հոգին դուրս գուկա:
Մի շենը լավ ա, քան օխտը խարաբեն:
Մի վախեցիր զմպզմպան գետից, վախեցիր մարմանդ գետից:
Մի փետ շան գլխին, մի փետ՝ մեր:

———————

Ճումբ — *գուղձ, հողակոշտուկ*

Լաֆ — *խոսք*

Մի քար դրեց պատին, օխտը փաթեթ՝ մատին:
Մի օր ուշ ցանեցիր՝ յոթ օր ուշ կհնձես:
Մլավան կատուն մուկ չի բռնի:
Մկեն ծնվածը մեշոկ կկրծե:
Մշակին՝ մշակ, անգետին էլ՝ յորղան-դոշակ:
Մտքիդ տեղ ըլնի, ամանդ եղ կըլնի:
Մոզին գոմշի հետ լուծ չի անի:
Մոր բախտ՝ աղջկա թախտ:
Մոր գոված աղջիկը տանն ա մնում:
Մոր գովածին գցիր փախիր, հարևանի գովածին բռնիր կանգնիր:
Մորուքը կերկրնա բիզ կդառնա, համա թշնամին բարեկամ չի դառնա:
Մորը հոմար դըղըն չի մեձընալ:
(Մոր համար տղան չի մեծանում):
Մուկն ինչքան հող հանի, գլխին կթափի:

Ն

Նախիրն եկավ, գյուղ թափավ, պդկներից եղ թափավ:
Նախիրն իրա նախրչին կթողա, նախրչին չհավատաս, որ իրա նախիրն թողա:
Նայիր կովին, առ հորթին:
Նույն ճուրն ա, նույն ճաղացը:

Շ

Շան բասն էնում ես, կոբալն առ ու կայնի:
Շանը քար քից, տիրոջը խաթր էրա:
Շանը կերը շատ են տվալ, տիրոջն ալ ա կծալ:
Շան մայլեն՝ օսկռի կտոր:
Շաշը հըմանչըմ չի, շըշատերն ա հըմանչըմ:
Շատ գիտցող աղվեսը ջուխտ ոտով թալակ կընգնի:
Շատին դիմացողը քչին էլ կդիմանա:
Շատ ուտողը մեռիր ի, քիչ ուտողը ապրիր ի:
Շաքարը մրջունին պահ չեն տա:
Շիդակուտինի հոմար մազը ջխկա գու:
(Շիտակության համար մազը կճեղքի):
Շիտակ խոսողը ձիավոր պըտի ըլլի:
Շորն ասել ա՝ դու ինձ պահի ղութու մեջ, ես քեզ պահեմ մարդամեջ:

Շուն առնող, շուն ծախող:
Շունը շան միս չուտե:
Շուն ըլիս, կյուլ ըլիս, տանը կուճինը չըլիս:
Շունն շնեն հազ կէնե:

Ո

Ոտը վերկալած ջաղացը խարաբ կանի ցորնի հացը:
Որն ուտե եղն ու ճմուռ, որն գլոխ զարկե դսի դուռ:

Չ

Չալ օցը տեսնողը չալ պարանից կվախի:
Չամիչը հատ-հատ, մեղրը՝ մատ-մատ:
Չաքմես ճըռ հա՛ ճըռ, սոված փորը՝ ղըռ հա՛ ղըռ:
Չի իմանում, ով ա մեռել՝ «Վա՛յ Վարդան ջան» ա կանչում:
Չնմանինք՝ չխնամինք:

Պ

Պանիր ու հաց՝ սեռտը պաց:
Պապեն շլոր ուտա, թոռու ատամներ առվի:
Պատրոնը վեր տանը չի ինում, հարսը կտաղում ա:
Պզդկից սկսե, որ վենձին հասնես:

Ջ

Ջրի շատ գալը կտրվելու նշան ա:
Ջուր կթափի, յուղ կհավքի:

Ս

Սատկած կովը կաթնով ա թվում:
Սարը որոտալու տեղը՝ ամբն ա որոտըմ:

———— ————

Կյուլ — *գայլ*

Հազ էնել — *քսի տալ*

Չաքմա — *կոշիկ*

Պատրոն — *սկեսրայր*

Սերն ի սովորն է կերե, թանն լե մոլորն է կերե:
Սոխ ուդողը վառի գու:

Վ

Վարդին տարան ցանին յավշանի քովը, յավշանը հելավ վարդին ծածկեց:
Վար աշողըն յոն դուր:
(Ներքև նայողից հեռու մնա):
Վարդեղ տանձ, դաղ էլ պոչ:
Վեչ շոքին բորան կդիմանա, վեչ էլ ծախքին փող կդիմանա:
Վիր-վիր նեդվողը՝ թեզ եդ նստի գու:
Վնասի կեսան էլ վեր ետ տառնաս, էլի օգուտ ա:

Տ

Տան դրուգ, դրսի կանչուգ:
Տանելիս՝ նոքար, բերելիս՝ աղա:
Տանու երեցին «Օրհնյա տեր» չկա:
Տարվա հույսը գարնան վրա է, օրվա հույսը՝ առավոտվա:
Տերը տարածիցն ա փոշման, գելը՝ մնացածից:
Տիրոջ ուժը էշին չպատեց, փալանը թակեց:
Տունն օր մեծ մարդ չեղնի, մեծ քար կդնեն տեղը:

Ց

Ցածը տըսնես եմ՝ մրուս ի, վերը տըսնես եմ՝ բեղ ի:
Ցերեկվա շառը լավ ա, քան քշերվա խերը:
Ցորեն հաց չունես՝ ցորեն լեզու ունեցի:
Ցորեն հացին պոզեր ունի:

———————

Ցավշան — *օշինդր*

Դաղ — *այնտեղ*

Բորան — *ցուրտ, սառնամանիք*

ՈՒ

Ուզում ես դինջ իլես, դինջ նստի:
Ուլն կողվի տակ չմնա:
Ուղիղ ծառի ստվերն էլ ուղիղ կըլնի:
Ուղտը նստողը կուզեկուզ ման չի գա:
Ուտողը չգիտի, փրթողը գիտի:
Ուրան հետի փութրիկ անիլ չի կարըմ, ուրիշի հետի ռիշտա ա կտրում:
Ուրան տեսնաս՝ նորած ա, տունը եխտում կորած ա:
Ուրիշի հավը ղազ գերևնա:
Ուռին ու բարդին, ամեն մարթ իրա դարդին:

Փ

Փախաձ ծուգը մեծ գըլլի:
Փայ տվողին փայ չի մնա:
Փեշակը վարար աղբյուր ա:
Փեսի շուք՝ փշի շուք:
Փետա շուն ա ուզըմ՝ հաչի, համա լակ չուտի:
Փլավ ուդել լավ բան ա, մե օր մեր տուն, մի օր ձեր տուն:
Փլավը չկերանք, ծխեն աշկերս քոռացավ:
Փողը հաշվիլ սվերի, շորը՝ մաշիլ:
Փոստս գիլու յա, միտքս գառու յա:
Փորձված գելը արջի թալակը կընկնի:
Փուլ տենա՝ մուկ ա, ջուր տենա՝ ձուկ ա:

Ք

Քամին դորը փչի՝ դենը մի քյնա:
Քամին քարից ինչ կտանի:
Քանդող-հյուսողի գործը չի վերջանա:
Քանի ջրին զարկես, էնքան երեսիդ կթռնի:
Քաչալ գլխին ոսկի սանր:

———————

Ռիշտա — *արիշտա*
Փետա — *փայտե*
Փուլ — *թումբ*

Քեչիի ղոթուրը աղպուրի աշկան ջուր կխմի:
Քզի մեռնիմ գարե հաց, առանց ծամել կերթաս ցած:
Քթոցըմ խելք ունենալում՝ մատնոցըմ բախտ ունեցի:
Քյասիբին ալամ ա կիտան, հարուստի աղջիկն ա գուզեն:
Քյնըմ ա վերսի, վեր սուտ-սուտ խոսի:
Քոռի ինչ պետքն ա, թե մոմը թանկ ա:
Քրկճպի ու հաց ըտցնողի ծախսերը մին ա:
Քու լիքը կուժը ուրիշի դատարկին դեմ մի արա:

Օ

Օձը դաղձ չսիրա, դաղձը օձի բնի մոտ կաճի:
Օձի փուշը լագլագը կմարսի:
Օխտը հատիկ՝ մեջը փուչ:
Օնոթուն ձոցին քատա չի մնալ:
(Անոթու ծոցին գաթա չի մնա):
Օսկին չամռի մեջն էլ կըպլպլա:
Օտողը կերել ա, լպզդողը մեջ ա ընգալ:

Ֆ

Ֆուխարին արաբըն սըրա ջոռուն մնա գու:
(Աղքատի սայլը միշտ ցեխում կմնա):



———————

Քեչի — *այծ*

Ղոթուր — *քոսոտ*

Չամուռ — *ցեխ*

Ալամ ա կիտան — *աշխարհ են խոստանում*



ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԵՔԻԱԹՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ, ԶՐՈՒՅՑՆԵՐ, ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Աբլբուհարցի Ալոն». Ասացող՝ Տիգրան Հակոբյան, ծնվ. 1908 թ.,Երևան:
Գրառող՝ Վարուժան Սահակյան, Երևան, № 163-րդ դպրոց, 10-րդ դասարան:

«Ախորժակի դեղ փնտրողը». Ասացող՝ Անդրանիկ Զեյթունյան, ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամաս, ք. Ադլեր:
Գրառող՝ Կարինե Զեյթունյան, ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամաս, Մոլդովկայի հայկական դպրոց, 4-րդ դասարան:

«Ակռու աղի քինալը». Ասացող՝ Վաղարշակ Առստամյան, ծնվ. 1914 թ.,Գորիսի շրջան, գ. Տեղ:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևան, № 16-րդ դպրոց, 9-րդ դասարան:

«Անգախ աքլորը». Ասացող՝ Ալաշկերտի Կազի գյուղացի Գևոյի աղջիկ Կաքավ, 106 տ.:
Գրառող՝ ծոռը, Դավիթ Մանուկյան, Նաիրիի շրջան, Թղիթի դպրոց, 10-րդ դասարան:

«Անպետք մարդը». Գրառողներ՝ Արմեն և Կարեն Մարգարյաններ, Երևան, № 125-րդ դպրոց, 6-րդ դասարան:

«Աշխարհի ամենաարագավազը, ամենագերն ու ամենաքաղցրը». Ասացող՝ Գրիգոր Բեկնազարյան, ծնվ. 1897 թ., Իջևան:
Գրառող՝ Աշոտ Բեկնազարյան, Իջևանի № 2-րդ դպրոց, 5-րդ դասարան:

*Հեքիաթները, առակները, զրույցներն ու ավանդությունները ծանոթագրված են այբբենական կարգով: Որոշ դպրոցականներ ասացողի կամ գրառողի մասին ամբողջական տեղեկություններ չեն հաղորդել, ուստի ծանոթագրություններից մի քանիսը այդ իմաստով թերի են: Հանելուկներն ու առած-ասացվածքները չենք ծանոթագրել, քանի որ դրանցից գրառել են «Պատանի բանահավաք» շարժման գրեթե բոլոր մասնակիցները:

«Աշուղ Չիչագն ու հոտաղները». Ասացող՝ Ռուբեն Ավետիսյան, Արարատի շրջան, գ. Շիրազլու:
Գրառող՝ Գայանե Սիմոնյան, Արարատի շրջան, Շիրազլուի դպրոց, 8-րդ դասարան:

«Առևտրականն ու գյուղացին». Գրառող՝ Մարինա Չաքրյան, ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամաս, Մոլդովկայի հայկական դպրոց, 6-րդ դասարան:

«Արջն ու գելը». Ասացող՝ Հերիքնազ Պապինյան, ծնվ. 1890 թ., գ. Ճոճկան:
Գրառող՝ Սիլվա Սիրադեղյան, Նոյեմբերյանի շրջան, Լճկաձորի դպրոց, 8-րդ դասարան:

«Արջն ու մարդը». Գրառող՝ Լենա Սարգսյան, Քաջարան:

«Բոստանչու աղջիկները». Ասացող՝ Ռաֆիկ Բարսեղյան, ծնվ. 1908 թ., Ապարանի շրջան, գ. Հարթավան:
Գրառող՝ Կարեն Բարսեղյան, Ապարանի շրջան, Հարթավանի դպրոց, 6-րդ դասարան:

«Գելն ու ձին». Գրառող՝ Գոռ Մանուկյան, Վարդենիսի № 2-րդ դպրոց, 5-րդ դասարան:

«Գյուլսինամը». Ասացող՝ Աշխեն Հակոբյան, ծնվ. 1908 թ., Նաիրիի շրջան, Լուսակերտ ավան:
Գրառող՝ թոռը, Անահիտ Եղիազարյան, Նաիրիի շրջան, Լուսակերտ ավան, 8-րդ դասարան:

«Գ տառի նաղլը». Գրառող՝ Արմեն Ալավերդյան, ք. Հրազդան, № 12-րդ դպրոց, 8-րդ դասարան: Լսել է Ադր. ՍՍՀ Դաշքեսանի շրջանի Շահումյան գյուղում:

«Զարմանում ենք, զարմանում». Ասացող՝ Աստղիկ Առաքելյան, Անիի շրջան, գ. Սառնաղբյուր:
Գրառող՝ Ալվարդ Գինոսյան, Անիի շրջան, Սառնաղբյուրի դպրոց, 10-րդ դասարան:

«Էծն ու գելը». Ասացող՝ Նազելի Գրիգորյան, ծնվ. 1910 թ., Ազիզբեկովի շրջան, գ. Մարտիրոս:
Գրառող՝ Քնարիկ Մաթևոսյան, Ազիզբեկովի № 2-րդ դպրոց, 10-րդ դասարան:

«Թաքավերը». Ասացող՝ Անուշ Վարդանյան, ծնվ. 1919 թ., Ադր. ՍՍՀ Շահումյանի շրջան. գ. Բուսլուղ:
Գրառող՝ Ռիտա Բոյախչյան, Երևանի № 160-րդ դպրոց, 8-րդ դասարան:

«Թե ինչու են կավե ամանները ծանր». Գրառող՝ Էմմա Աբրահամյան, Արագածի շրջան, Նորաշենի դպրոց:

«Իշի ձուն». Ասացող՝ Լարիսա Ասատրյան, Նոյեմբերյանի շրջան, գ. Լճկաձոր:
Գրառող՝ Սիլվա Սիրադեղյան, Նոյեմբերյանի շրջան, Լճկաձորի դպրոց, 8-րդ դասարան:

«Լենին». Ասացող՝ Ալաշկերտի Կազի գյուղացի Գևոյի աղջիկ Կաքավ, 106 տ.:
Գրառող՝ ծոռը, Դավիթ Մանուկյան, Նաիրիի շրջան, Թղիթի դպրոց, 10-րդ դասարան:

«Լույս տվող ձուն». Ասացող՝ Հայկ Էլլարյան, Իջևանի շրջան, Սարիգյուղ:
Գրառող՝ Կարեն Էլլարյան, Իջևանի շրջան, Սարիգյուղի դպրոց, 7-րդ դասարան:

«Խելացի հարսնացուն». Ասացող՝ Կարապետ Քոսյան, ծնվ. 1895 թ., Օրդուի Բալ-Դափա գյուղում, բնակվում է Աբխազիայի Աչմարդա գյուղում:
Գրառող՝ Ղևոնդ Դովաջյան, Աբխազական ԱՍՍՀ. Գագրայի շրջան, Խաշուպսեի դպրոց:

«Խմուկ մկան պայմանը». Ասացող՝ Սուրեն Սիմոնյան, Վարդենիսի շրջան, գ. Կարճաղբյուր:

Գրառող՝ Վահրամ Աբրահամյան, Վարդենիսի շրջան, Կարճաղբյուրի դպրոց, 8-րդ դասարան:

«Ծուռ Թումոն». Ասացող՝ Ալաշկերտի Կազի գյուղացի Գևոյի աղջիկ Կաքավ, 106 տ.:
Գրառող՝ ծոռը, Դավիթ Մանուկյան, Նաիրիի շրջան, Թղիթի դպրոց, 10-րդ դասարան:

«Հարուստն ու չոբանը». Ասացող՝ Պետրոս Թադևոսյան:
Գրառողներ՝ Արմեն և Կարեն Մարգարյաններ, Երևան, № 125-րդ դպրոց, 6-րդ դասարան:

«Հեռատես մարդը». Ասացող՝ Հոռոմսիմ Մկրտչյան:
Գրառող՝ Անահիտ Մաթևոսյան, Երևան, 5-րդ դասարան:

«Հիմար կինը և խելացի ամուսինը». Ասացող՝ Աստուր Նազարյան, ծնվ. 1907 թ.,Ադր. ՍՍՀ Լաչինի շրջանի Մինքենդ գյուղում, ապրում է Գորիսի շրջանի Վաղատուր գյուղում: Լսել է իր ծննդավայրում:
Գրառող՝ թոռը, Ռայա Մուսայելյան, Երևան, № 133-րդ դպրոց, 9-րդ դասարան:

«Հոր տան գինը». Ասացող՝ Ասանեթ Հարությունյան, ծնվ. 1900 թ.,Վարդենիսի շրջան, գ. Կարճաղբյուր:
Գրառող՝ թոռը, Սուսաննա Հարությունյան, Երևան, № 159-րդ դպրոց, 9-րդ դասարան:

«Հրեղեն ձին». Ասացող՝ Հերիքնազ Պապինյան, ծնվ. 1890 թ.,գ. Ճոճկան:
Գրառող՝ Սիլվա Սիրադեղյան, Նոյեմբերյանի շրջան, Լճկաձորի դպրոց, 8-րդ դասարան:

«Մանգաղ շինելը». Ասացող՝ Արութ Պողոսյան, ծնվ. 1904 թ.,Գորիսի շրջան, գ. Տեղ:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևան, № 16-րդ դպրոց, 8-րդ դասարան:

«Մի բուռ հող». Ասացող՝ Մարգարիտա Հարությունյան, ծնվ. 1903 թ.,Վարդենիսի շրջան, գ. Կարճաղբյուր:
Գրառող՝Սուսաննա Հարությունյան, Երևան, № 159-րդ դպրոց, 9-րդ դասարան:

«Մինքենդ». Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909 թ.,ք. Գորիս:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևան, № 16-րդ դպրոց, 8-րդ դասարան:

«Մոռացկոտ հարսը». Ասացող՝ Գրիշա Մկրտչյան, Գորիսի շրջան, գ. Տանձատափ:
Գրառող՝ Արամ Մարգարյան, Բաքու, № 152-րդ հայկական դպրոց:

«Մուկը մկան հետ խնամի կլինի». Ասացող՝ Անդրանիկ Զեյթունյան, ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամաս, ք. Ադլեր:
Գրառող՝ Ժաննա Զեյթունյան, ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամաս, Մոլդովկայի հայկական դպրոց, 6-րդ դասարան:

«Նավթի լամփ». Ասացող՝ Ալաշկերտի Կազի գյուղացի Գևոյի աղջիկ Կաքավ, 106 տ.:
Գրառող՝ ծոռը, Դավիթ Մանուկյան, Նաիրիի շրջան, Թղիթի դպրոց, 10-րդ դասարան:

«Նոքար Սիմոնը». Ասացող՝ Մադաթ պապ, ծնվ. 1890 թ. Շամշադինի շրջան, գ. Վ. Կարմիրաղբյուր:
Գրառող՝ Լալա Միրզախանյան, Շամշադինի շրջան, Վ. Կարմիրաղբյուրի դպրոց, 10-րդ դասարան:

«Շաշ ղոնաղը». Գրառող՝ Նարինե Մինասյան, Գորիսի № 4-րդ դպրոց, 10-րդ դասարան:

«Շապուհ արքան և դրամ կեղծողը».
Ասացող՝ Խաչատուր Ալեքսանյան, Մարտունու շրջան, գ. Աստղաձոր:
Գրառող՝ թոռը, Մանուշ Ալեքսանյան, Մարտունու շրջան, Աստղաձորի դպրոց, 10-րդ դասարան:

«Որսորդը».
Ասացող՝ Անդրանիկ Զեյթունյան, ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամաս, ք. Ադլեր:
Գրառող՝ Ժաննա Զեյթունյան, ՌՍՖՍՀ Կրասնոդարի երկրամաս, Մոլդովկայի հայկական դպրոց, 6-րդ դասարան:

«Չոբանը».
Ասացող՝ Ոսկեհատ Չոբանյան, ծնվ. 1899 թ.:
Գրառող՝ թոռը, Էմմա Չոբանյան, Կիրովական:

«Չոբանն ու աշուղը».
Ասացող՝ Արամայիս Մելիքսեթյան, Թումանյանի շրջան, գ. Շնող:
Գրառող՝ Սիրվարդ Մելիքսեթյան, Թումանյանի շրջան, Շնողի դպրոց, 9-րդ դասարան:

«Չուխա, խաց կեր...».
Ասացող՝ Ալաշկերտի Կազի գյուղացի Գևոյի աղջիկ Կաքավ, 106 տ.:
Գրառող՝ ծոռը, Դավիթ Մանուկյան, Նաիրիի շրջան, Թղիթի դպրոց, 10-րդ դասարան:

«Չուտը».
Գրառող՝ Մարինե Գալստյան, Թալինի շրջան, Արագածի դպրոց, 10-րդ դասարան:

«Պանիր օտիլը».
Ասացող՝ Վաղարշակ Առստամյան, ծնվ. 1914 թ., Գորիսի շրջան, գ. Տեղ:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևան, № 16-րդ դպրոց, 8-րդ դասարան:

«Պըրկըկների ախպուրը».
Գրառող՝ Արտեմ Հակոբյան, Գորիսի շրջան, գ. Տաթև:

«Ջանավարն ու աղվեսը».
Ասացող՝ Խաչատուր Պողոսյան, ծնվ. 1909 թ., ք. Գորիս:
Գրառող՝ Արա Պողոսյան, Երևան, № 16-րդ դպրոց, 8-րդ դասարան:

«Ջաջուռ».
Ասացող՝ Մյասնիկ Ռաֆայելյան:
Գրառողներ՝ Աիդա Իլոյան և Ժաննա Ներսիսյան, Լենինական, № 18-րդ դպրոց, 9-րդ դասարան:

«Սողոմոն իմաստունի գաղտնիքները».
Ասացող՝ Գեղեց տատ, ծնվ. 1913 թ., Շամշադինի շրջան, գ. Վ. Կարմիրաղբյուր:
Գրառող՝ Վարդան Ավագյան, Շամշադինի շրջան, Վ. Կարմիրաղբյուրի դպրոց, 7-րդ դասարան:

«Սողոմոն իմաստունն ու բիձեն»
Ասացող՝ Մելիք Գրիգորյան, ծնվ. 1914 թ., Աբովյանի շրջան, գ. Գողթ:
Գրառող՝ Կարո Մկրտչյան, Աբովյանի շրջան, գ. Գողթ:

«Սըտանեն».
Ասացող՝ Հերիքնազ Պապինյան, ծնվ. 1890 թ., գ. Ճոճկան:
Գրառող՝ Սիլվա Սիրադեղյան, Նոյեմբերյանի շրջան, Լճկաձորի դպրոց, 8-րդ դասարան:

«Ուղտը».
Ասացող՝ Հերիքնազ Պապինյան, ծնվ. 1890 թ., գ. Ճոճկան:
Գրառող՝ Սիլվա Սիրադեղյան, Նոյեմբերյանի շրջան, Լճկաձորի դպրոց, 8-րդ դասարան:

«Ուշի».
Գրառող՝ Սահականուշ Մարկոսյան, Աշտարակի շրջան, Ուշիի դպրոց, 8-րդ դասարան:

«Փանոսը».
Գրառող՝ Լուսյա Հակոբյան, Մեղրու շրջան, Ագարակ ավան:

«Քնկոտ պահակը».
Ասացող՝ Մադաթ պապ, ծնվ. 1890 թ., Շամշադինի շրջան, գ. Վ. Կարմիրաղբյուր:
Գրառող՝ Լալա Միրզախանյան, Շամշադինի շրջան, Վ. Կարմիրաղբյուրի դպրոց, 10-րդ դասարան:

«Օրթմա». Ասացող՝ Գայանե Ախցխեցյան, ծնվ. 1908 թ. Փոկա գյուղում, ապրում է Թբիլիսիում:
Գրառող՝ Էլեոնորա Անթիձե, Թբիլիսի, № 110-րդ դպրոց, 10-րդ դասարան:

ԵՐԳԵՐ, ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳԵՐ

1. «Ախ, իմ Մուրադ», «Երգ սիրահար տղայի», «Զուգերգ-պարերգ» և «Օրորոցային» երգերը Ալաշկերտի Կազի գյուղացի Գևոյի աղջիկ Կաքավից գրառել է ծոռը՝ Դավիթ Մանուկյանը, Նաիրիի շրջան, Թղիթի դպրոց, 10-րդ դասարան:
2. «Լուսնակ». գրառող՝ Ռուզան Սահակյան, Երևան, № 163-րդ դպրոց, 5-րդ դասարան: Լսել է իր Վարսենիկ տատիկից:
3. «Աղվեսը». գրառող՝ Արեգ Ադոյան, Կամոյի շրջան, գ. Գեղարքունիք: Լսել է Տիգրան Գրիգորյանից:
4. «Տիկ-տիկ». գրառող՝ Ծովինար Մարտիրոսյան, Արտաշատի շրջան, Նշավանի դպրոց, 6-րդ դասարան: Լսել է տատիկից:
5. «Հեքիաթ, հեքիաթ, պաբս ա». գրառող՝ Կարեն Բարսեղյան, Ապարանի շրջան, Հարթավանի դպրոց, 6-րդ դասարան: Լսել է Մկրտիչ Հարությունյանից:
6. «Նաղլ-նաղլ Չինաստան». գրառող՝ Արփենիկ Շահվերդյան, Ղափան, №6-րդ դպրոց, 7-րդ դասարան:
7. «Հա՛ թռցնեմ-թռցնեմ». գրառող՝ Լարիսա Ավետիսյան, Էջմիածնի շրջան, Ակնալիճի դպրոց, 6-րդ դասարան: Լսել է տատիկից:
8. «Թըռ-թռցնեմ». գրառող՝ Նարինե Վարդազարյան, Երևան, Ավ. Իսահակյանի անվ. դպրոց, 7-րդ դասարան: Լսել է տատիկից:
9. «Արևին». գրառող՝ Վարդան Քարամյան, Մարտունու շրջան, Երանոսի դպրոց, 10-րդ դասարան: Լսել է Շահեն Կեսոյանից, Մարտունու շրջան, գ. Վարդաձոր:
10. «Խատիկ-խատիկ, ալվարիկ». գրառող՝ Բարեղամ Խաչատրյան, Աշտարակի շրջան, գ. Ոսկեվազ:

ԽԱՂԻԿՆԵՐ

20-ից ավելի խաղիկներ են գրառել հետևյալ դպրոցականները.

1. 138 խաղիկ՝ Արևհատ Տոնապետյան, Արագածի շրջան, Հնաբերդի դպրոց, 9-րդ դասարան:
2. 60 խաղիկ՝ Հրաչիկ Մխիթարյան, Ապարանի շրջան, Արագածի դպրոց, 10-րդ դասարան:
3. 54 խաղիկ՝ Աիդա Հարությունյան, Վարդենիսի № 2-րդ դպրոց, 10-րդ դասարան:
4. 40 խաղիկ՝ Արմինե Ջիրոյան, Վարդենիսի № 2-րդ դպրոց, 8-րդ դասարան:
5. 37 խաղիկ՝ Կարինե Աբրահամյան, Արթիկի № 2-րդ դպրոց, 8-րդ դպսարան:
6. 28 խաղիկ՝ Սահականուշ Չոփիկյան, Արթիկի № 2-րդ դպրոց, 8-րդ դասարան:
7. 26 խաղիկ՝ Նաիրա Գրիգորյան, Արարատի շրջան, Արարատի դպրոց, 8-րդ դասարան:
8. 25 խաղիկ՝ Վիկտորիա Պետրոսյան, Աբովյանի շրջան, Կոտայքի դպրոց, 7-րդ դասարան:
9. 24 խաղիկ՝ Անահիտ Վարդանյան, Վարդենիսի № 2-րդ դպրոց, 9-րդ դասարան:
10. 21 խաղիկ՝ Արփիկ Սիմոնյան, Գորիսի շրջան, Խնածախի դպրոց, 10-րդ դասարան:

ՅԱՆԿ

Առաջաբան **3**
Երկու խոսք **7**

ՀԵՔԻԱԹՆԵՐ, ԱՌԱԿՆԵՐ, ՋՐՈՒՅՑՆԵՐ, ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հրեղեն ձին 10
Լույս տվող ձուն 16
Գյուլսինամը 22
Արջն ու գելը 25
Անպետք մարդը 30
Չոբանը 33
Սըտանեն 36
Հիմար կինը և խելացի ամուսինը 40
Ուղտը 46
Մի բուռ հող 48
Բոստանչու աղջիկները 52
Աշխարհի ամենաարագավազը. ամենագերը և ամենաքաղցրը 55
Հոր տան գինը 57
Խելացի հարսնացուն 58
Քնկոտ պահակը 59
Առևտրականն ու գյուղացին 60
Չոբանն ու աշուղը 62
Ախորժակի դեղ փնտրողը 64
Հարուստն ու չոբանը 66
Պանիր օտիլը 68
Թաքավերը 69
Նոքար Սիմոնը 70
Շաշ ղոնաղը 72
Իշի ձուն 74
Թե ինչու են կավե ամանները ծանր 76
Ակռու աղի քինալը 78
Մոռացկոտ հարսը 80
Հեռատես մարդը 81
Զարմանում ենք, զարմանում 82
Մուկը մկան հետ խնամի կլինի 83
Խմուկ մկան պայմանը 86
Էծն ու գելը 87
Ջանավարն ու աղվեսը 88
Գելն ու ձին 91
Սողոմոն իմաստունի գաղտնիքները 92
Սողոմոն իմաստունն ու բիձեն 94
Մանգաղ շինելը 95
Շապուհ արքան ու դրամ կեղծողը 96
Փանոսը 98
Չուտը 99

Աշուղ Չիչագն ու հոտաղները 100
Որսորդը 103
Արջն ու մարդը 104
Օրթմա 105
Աբլբուհարցի Ալոն 106
Ծուռ Թումոն 109
Լենին 112
Նավթի լամփ 114
Անգախ աքլորը 116
Չուխա խաց կեր... 118
Գ տառի նաղլը 121
Մինքենդ 122
Պըրկըկների ախպուրը 124
Ջաջուռ 125
Ուշի 126

ԵՐԳԵՐ, ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԳԵՐ ԽԱՂԻԿՆԵՐ 128
ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐ 186
ԱՌԱԾՆԵՐ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐ 220
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 234

ՀՐԵՂԵՆ ՉԻՆ
(Բանահյուսական ժողովածու)
Կրտսեր տարիքի դպրոցականների համար

ОГНЕННЫЙ КОНЬ
(Фольклорный сборник)
Для младшего школьного возраста
(На армянском языке)
Издательство «Советакан грох»
Ереван — 1981

Գեղ խմբագիր՝ **Մ. Ս. Սարգսյան**
Տեխ. խմբագիր՝ **Ս. Մ. Սիմոնյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Ս. Մ. Բուլաթյան**

Հանձնված է շարվածքի 10.06.81 թ.: Ստորագրված է տպագրության 25.11.81: Ֆորմատ 70X100 1/16: Թուղթ օֆսեթ: Տառատեսակ «Արարատ»: Տպագրություն օֆսեթ: 13,35 հրատ. մամ., 19,5 պայմ. տպ. մամ.: Պատվեր 965: Տպաքանակ 15000: Գինը 1ռ. 10 կոպ.:
«Սովետական գրող» հրատարակչություն, Երևան — 9, Տերյան 91:
Издательство «Советакан грох», Ереван — 9, ул. Теряна, 91.
Հայկական ՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի գունավոր տպագրության տպարան, Երևան — 82, Էջմիածնի խճուղի 48:
Типография цветной печати Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР. Ереван — 82, Эчмиадзинское шоссе, 48.



Пл. 104.

